

ԵՐՎԱՆԻ ՏԵՐ-ՄԿՐՏՁՅԱՆ

ՎԱՆԵՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

(Կենցաղագրական պատկերներ)

Պատասխանատու խմբագիր՝

Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վանի հին սերունդին գրեթե անհետանալը և ընկեցային բարձրորոժող
ցրվելու վտանգին ենթարկվելը նկատելով, ըստ կարելիության գրի առի ազգա-
գրական այս փունջերը:

Պոսթոնի «Պայքար» օրաթերթը սիրով հյուրընկալեց և որպես թերթին
հրատարակեց քսանհինգ թվերու մեջ, 1961, հունվար 26-ն սկսյալ:

Հատորիս մեջ հիշված անձերու բոլոր անուններն ու մականունները (ազ-
գանունները) առանց բացառության իրական են: Մականունները բացատրած
եմ ըստ կարելիության, իսկ ոմանք զանց ըրած՝ երկար պատմություններ ունե-
նալուն համար:

Ընթերցողներեն շատեր քաշալերեցին և ստացված քանի մը նամակներ
ալ թելագրեցին, որ անգամ մըն ալ Հայաստանի հայրենակիցներու հրամ-
ցընեմ: Այդ պատճառով նորեն գրի առի, սրբագրեցի ու հղկեցի բարբառը
և ավելցուցի 15-ն ավելի պարերգներ ու անոնց եղանակները:

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Հովհաննես Աղան և իր կին Մարանոս խաթուն երեկո մը, թոշիթի շուրջ նստած, կխորհրդակցին։ Իրենց միակ որդին՝ Լևոն, հոգնությունը պատրվակելով, որպես թե քնանալու համար, սովորականեն կանուխ, իր սենյակը կառանձնանա, բայց կիսաբաց դռն ճեղքեն լրտեսել կփորձե իր ծնողաց խոսակցությունը։

— Քյա մա՛րթ,—կսկսի Մարանոս խաթուն,—էսա տղէն խեղճ ի, քսան տարէկան էլնիւ։ Փսակելու ժամանակը խասաւ։ Ըս էլ մէնակ շեմ կանա էսա տան քործեր շարմարի։ Արե, ախլիկմ կընդենենք և Լևոն փսակենք։

— Փսակել աղէկ, ամմա, ես ճիշ խարսնիս կուզեմ։ Ծիշ խարսնիսն էլ բօլ փարմ կուլի, ջանքս, խօսքօլ չէլնի։ Փսակել աղէկ, փարէ՛ն որտեղից պիտի կընդենենք։

— Ծարմ կանենք, մարթ։ Տեղէմ պառաք կանենք։ Տվօղ չէլնիւ, մեր իշվայտերաց էրկուս կծախենք։ Պակաս մնաց, քյանիմ վիսկի էլ ես իմ ճտնոցից կկտրեմ և փառավոր խարսնիսմ կանենք։

— Հը՛մմ... էշերաց էրկուսը ծախենք։ Իշվանք ծախել աղէկ։ Ապա մեր ապրո՛ւստ ինչիս պիտի խանենք։ Տիւ շե՛ս կիտե, որ քլըրա տարօղ էտա էշերն են։ Մանդր պեռնեք տարօղ էտա էշերն են։ Ծանցօղ կնանցօղ էտա էշերն են։ Առճանկ կնանցօղ-իկող էտա էշերն են։ Մէյ խօսքօլ՝ փարմ վանտկօղ էտա էշերն են։

— Կիտեմ, մարթ աստուծօ։ էտա կիտեմ, ամմա էսա տղէն էլ խեղճ ի։ Կամշնա, պան լասե, լեզուն ուր կքլաշի։

— Քիշմ էլ համփերի, կնիկ։ Առանց ցալի կլլօխտ Ավետի տակ մի տնե, տիսնանք աստված ի՛նչ պարի տուռ կպաննի։

Երկար խոսակցելիս ու վիճաբանելիս հետո, էրիկ ու կնիկ վերջապես անկողին գա-

ցին ու քնացան։ Լևոն, որ քնանալ կեղծելով, իր սենյակեն ծնողաց խոսակցությունը լրտեսած էր, սովորականեն կանուխ արթնցալ, զոհ ու ուրախ գործի գնաց։ Երեկոյան տուն վերադարձին, կանուխ ընթրեց և հոգնությունը պատրվակելով, իր սենյակ առանձնացալ քնանալու, իր ամուսնության մասին ծնողաց խոսակցությունը նորեն և զաղտնի լրտեսելու կամ ունկնդրելու հույսով։ Բայց Հովհաննես Աղան և Մարանոս խաթուն քանի մը օրերի ի վեր Լևոնի ամուսնության հարցը բարձի թողի ըրած էին և միայն իրենց ամենօրյա սովորական գործերու մասին կխորհրդակցեին։

Լևոն տեսնելով, որ իր ամուսնության հարցը աստենե մը ի վեր մոռացություն մատնված է, համբերությունը հատած օր մը գործեն կանուխ տուն վերադարձալ և մոր հարցուց։

— Մարէ, ինչի՞ իրիկներ իշու բնա չէք անե։

— Քյե մեռնեմ, Լևոն ջան, ես քյո խօր խոսք շեմ կանա խասկցուցե։ Եզդու եռ՝ քաշե, կայնե։

— Տիւ կիտե, մարէ, ես էլ ասելիք չունեմ։

Լևոն երկար խորհեցալ և ծրագրեց իր ընելիքը։

— Հը՛մմ... իմ խէր եզդու եռ քաշե, կայնե։ Կայնի, որ ես էլ եզդու եռ քաշեմ, վիթ տիսնան, թէ եզդու եռ քաշելն ինչիս կէլնի։ Կայնի որ ըսկուն քյարմ թանն մէլ

¹ «Եզդու եռ՝ քաշել», Վանի բարբառով՝ համարել ըսել է։ Եսած եմ, որ եզդուներ սատանա կպաշտեն և էթե մեկը եզդուի մը կանգնած տեղը անոր բոլորտիք փայտով բուրդակի գիծ մը քաշել համարձակեք, եզդուին այդ շրջանակեն կամ գծեն դուրս չէր ելնեք, կհամարեք կանգնած մնալ, մինչև որ մեկը այդ գիծը չափեր։

խորին, որ բառաւոր խելացի կ'ան, չկան տիւս խանե, — կսե լեռն ինքնիրեն:

* *

Հաղորդ առաւուն լեռն անկողնեն շնչելու Մայրը կարծելով, որ տղան խոր քունի մեջ ինկած է, սենյակ կ'մտնե, կ'շարժե լեռնը, կ'արթնցնե ու կսե:

— Տղա, լեռն քիս մեռնեմ, էլի վեր, արե մղրաղմ պանցրացեր իւ Ամօթ իւ էլ մկա ի՛նչիս քործի պիտի էթնա:

— Մարե, էսօր շատ կ'էշ կլխու ցամ մռնեմ: Կլոխս կտաննա: Չեմ կանա քործի էթնա: Ախ, մեյ խատ քաջփուր վարժմ էլնէր խօտտի, բնալքի կլխուս ցամ ընցնէր:

Ու կսկսի անկողնո մեջ դառնալ ու տըալ: — Զանիտ մատաղ, լեռն շան, քաջփուր վարժ քիս կուրբան թող էլնի: Մկա, մկա իկլին կէթնմ, քիս խամար մէկ խատ չէ, բիւթէմ վարժ կպիրեմ:

— Մարե, ցամ կլխուցս սրտիս կզանի: Սիրտս էլ կցավա: Մաղդէս էլ կծծվե: Թող, որ քիշմ աշկերս կծծեմ, բնալքի ցամ ընցնի: Մարանոս հաթուն, միամիտ կիի, հավատալով լեռնի խոսքերուն, կսկսի մտահոգվիլ: Կմտածե, երկար կմտածե ու վերջապես միջնորդ Արմաղանը միտք կիյնա: Կորոշե Արմաղանը կանչել ու անոր խորհուրդն արցնել:

— Փորձառու կնիկ ի, հմէն տուն կմտնի, կէլնի: Շատ պան կիտի: Հանրանթ թամբեթ կուտա, — ըսավ Մարանոս հաթուն ինքնիրեն ու իրենց մշակ Սերգոն դրկեց Արմաղանը կանչելու:

2 Տիկնի Արմաղան ընչաքաղց միջնորդ մըն էր ամեն տեսակ գործերու: Ծարպիկ, շողորորթ ու երեք զավակներու տեր արի մը Ամուսնույն մահէն հետո, տունէր կպտտեր, հանձնարարութիւններ ու միջնորդութիւններ կընէր ու ապրաւտ մը կ'անէր: Փաղաքի ու Աղանասի ամեն ծակ ու ծուկ գիտեր: Գիտեր նաեւ, թե սատանաներ ո՛ր կ'ընտան ու իր համոզել ու քաղցրալեզու խոսքերով, ինչպե՞ս վանեցիք կըսե՞ր համոզելով զձե՞ ծակէն դուրս կ'անէր: Այս խորամանկ, վարպետորդի մասնագիտութիւնն էր՝ տունը մատցած, հասակ առած ու տախտած աղջիկներուն փեսացուներ գտնել: Հարսնելու աղջիկ ունեցող մայրերն անոր կզիմէին: Ծնն հասակ առած աղջիկ մը Արմաղանի միջնորդութեամբ չկրէր զամուսնանալ, ալ գործն քաշված մարմիններու կազմը պետք էր դասնել: Նա կրնար նշանվածները բաժնել, ու սրգողած ու պառակտված նշանվածներն ալ հաշտեցնել:

Վանի մեջ ամառ առնե, հասակ առած աղջիկներ՝ կիրակի առաւուն միջնաղին իրենց փողոցին դռան

Արմաղանը եկավ, թեկ քիշ մը ուշ:

— Պարի լլնա, Մարանոս հաթին:

— Աստու պարին, Արմաղան: Կիտե՞ս քիս ինչի կանչիցի:

— Զէ:

— Մեր լեռն շատ խիվանդ ի: Յաման կլոխս, յաման սիրտս, յաման փորս, կասի ու կտըլա: Էսա առաւուն վեր էլավ, առանց պրտում խաց ուտելու, յաթաղն ինզամվ, պառկավ: Կլխուն տիրմ էլ կասի:

— Մարե, մէյ խատ վարժմ պե, որ խօտտամ:

— Հը՛մ... վարժ ուղեց, ես խասկցա: Միամիտ մէր, տիւ լխասկցա՛ր ինոր խիվընդութեն, — ըսավ Արմաղան:

— Դէ տիւ որ խասկցար, դարմանմ ասա, տիսնա՛մ: Տիւ աշքպաց կնիկ ես: Դարմանմ կիտես, ասա անենք:

— Դարմա՛ն, էտա խիվընդութենի տեղդարման կա: Զծի կէրեա քիւ, լեռն տեղմ ախիկ ի տիսե, զարկվե: Ինոր խիվընդութեն կլխու կամ փորի ցամ չի, սրտի ցամ ի:

— Է՛... ինձր ճա՛ր:

— Ծա՛ր, ճարն էսա ի Կնա՛ քաղաք, Սուրփի համաս տես: Տիրամէրա թաղ կմես: Ասա, որ ախթարք իրիշկա: Սուրփի համաս «Աղվեսակիրթ» ունի, կկմրտա, հմէն պան զողրի քիս կասի:

— Սուրփի համասի մասին լսի եմ, — ասաց Մարանոս հաթին, — համա կվանիլնամ, որ իրիյս լսի: Կիտե՞ս, յա: Իրիյս էտա թուղթ արողներաց շատ լավատա:

— Տիւ մի՛ վանիլնա, կնա՛ Սուրփի համասը տես, ասա, որ ես եմ օրօխկե քիւ: Քի՞ մէկ մատն՝ էլ շանց տուր, էն կխասկընա, որ ես եմ քիս օրօխկե, էն ճարմ կանի:

առաջ չուր կցանին պողիկով ու չուրի գիծերով առաջ կրեթին զգարվեստական ձևեր ու ապա կավիթն: Արմաղան փողոցներն անցած պահուն այս տունը միտք կպահէր, ու գիտեր, որ այդ տունը հարսնուներ կան: Գիտեր ուրիշ հարսնուներու տուններն ալ: Գիտեր նաեւ բազմատեսակ պատրվակներով այդ տունները մտնելու ու աղջիկներ տեսնելու կերպերը:

Արմաղան կողմնակի գործեր ալ կընէր, Վանի վճուկներուն (ախթարք կամ թուղթ ընող) հանձնարող կգտներ ու փորթիկ հանձնարարողներ մըն ալ այդ ձևով կապահովէր: Սուրբ համասի (ծեր կին մը), Կարթիկ վարմանի, Կոտոյի Մուստու ու ուրիշ համալողներու հետ նախապես կարգադրած ու տված էր նշաններ՝ իր զրկած հանձնարողներին անելիք հանձնարարողները քանակը որոշող:

3 Մատը ցուցնել՝ Արմաղանի, Սուրբ համասի ու

Անպահճառ կնամ: Էսօր—վաղ շաբաթ, սորա
Լեոնի ցավ կշառնա, դհա բէթա՞ր կէլնի:

— Շատ շնորհակալ եմ, աղէկ ասիր,
էթա՞մ Սուրբի համաս տիսնամ: Առ էսա
շաբաթի, տղէյնեբաց վերեն կխըռչես:

Արմաղան քառորդը իր յազմայի ճոթին՝
մեջ փաթթեց, հանգուց մը զարկավ վրան
և մեկնեցավ:

Սուրբ համաս, հասակ առած կին մը,
Քաղաքամեջի հայերուն վհուկն էր: Հմա-
յություն կընէր, որպես թե գողցված առար-
կաներ կգտնէր: Երիտասարդներ կսիրահա-
րցնէր: Հիվանդութիւններ կբուժէր: Բախտ
կնայէր: Գարի կենտե՞ր և այլն:

Արմաղանի մեկնումէն հետո, Մարանոս
խաթուն հագավ իր կանաչ դալմէն, անոր
վրա ալ անցուց կարմիր սնդուան շապիկ և
առանց մխմելի, դեպի քաղաք ճամբա ին-
կավ: Անցավ շատ մը նեղ ու ոլորապտույտ
փողոցներու: Հարցնելով ու փնտրելով, հոգ-
նած ու քրտնած, վերջապէս գտավ Սուրբ
համասի տունը և հսկիչն դռան ուռնակը
զարկավ: Դուռը բացավ Սուրբ խամասի
հարսը, որ առանց հարցուփորձի, ներս
հրավիրեց Մարանոս խաթունը, որովհետեւ
շատ լավ գիտեր, թե աստված ուրիշ հա-
ճախորդ մը զրկած էր և Մարանոսի հագ-
նելվածքեն դատելով, կուհեց, որ հաճա-
խորդը հարուստ դասակարգէն ըլլալու էր:

— Պարի լլնա, Սուրբի համաս,—ըսավ
Մարանոս խաթուն:

— Աստու պարին, խնայար պարօվ: Պա-
րին վէր տղեյնեբացտ: Նստի տիսնանքի,
դարտդ ի՞նչ է:

— Արմաղան գիկ օրօխեց,—և ցույց

տվավ մատը,—էսօր շատ մանախնամիչ
էլիր եմ: Իմ շահէլ-չիվան Լեոն, էրէկ առա-
տուն յաթղից վեր էլավ, առանց պանմ
ուտելու, խիվեցավ, ինզյավ յաթաղ, պառ-
կավ: Կտքլա, կասի՞ մարէ, փորս կցալա:
Քե մեռնեմ, Սուրբ համաս, քո ոտն եմ
ինգլն: Ծարմ կանաս, արա, տղէս շատ
կտանջվի:

— Լեոն քանի՞ տարէկան ի,—հարցուց
Սուրբ համաս:

— Կսան տարէկան:

— Փո՞ր կցալա, թէ՞ սիրտ:

— Փորն էլ կցալա, կլլծխն էլ, սիրտն
էլ: Կլլխուն տիրմ էլ կասի՞ մարէ, մեխատ
վարթմ պե, որ խօտօտամ:

Սուրբ համաս խակույն խասկցավ խնդ-
րույն էութիւնը, կուհեց, որ Լեոն սիրա-
հարկած է, ու իր հարսին դառնալով.

— Ախշի, մէ, խատ էսա «Աղվեսալիլիբը»
պե տիսնանքի, տօլարի մէլն ի:

Հարսը կերեն գիրքը: Սուրբ համաս
կանն գիրքը, կրանա, կքրքրե, կզարձնե
թերթերը: Կփնթփնթա և կկարդա. «Եւ տե-
սեալ զաղշիկն այն գեղեցիկ ցալն անկեալ
ի փորն իւրոյ և ապա փոխեցաւ ի սիրտ
իւրոյ»:

Դանալով Մարանոսին, կըսե.

— Խասկցա՞ր:

— Չէ՞ քրափառ ի, շատ չեմ խասկնա:

— Ախթարբը կասի քիի, տղէտ ախշիյ
մի տիսն, սիրահարվերի: Կլլծխ կցալա:
Ծավ կլլխուց սրտին կզանի: Վերշապէս,
սիրու ցավ ի: Դօկտոր-մօկտոր փանթ շանն:

— Է՞... դարմա՞ն: Էտա ցավի ճա՞ր:

— Դարման շատ կօլայն ի, քյն պանթին
էլ շատ ճճ պան չի: Շոտմ Բիթ-Բազառ՞
կնամ: Էրկու տարէկան անլօրմ, էրկու խա-
վու ծիւ, քյասէմ ծանլար, կլլծխմ կարաքի,
էրկու շուկա էլ մարկուն թանթ առ շնտմ ետ
արեւ: Խա՛, շմոռնաս, որ տաս կուռուշ էլ
սաղ փանթ խնտտ պիրես: Չուր քոյ կլլլը,
ես թխթեր կշինեմ, կհանգնեմ:

Մարանոս խաթուն, Լեոնի սիրուն ամեն
բան զոհող կնիկ, շուկա մեկնեցավ:

Սուրբ համաս «Աղվեսազրբ» թերթերը
դարձուց, թերթեց, փնթփնթաց, կից-կտուր
բառեր արտասանեց, մտածեց, հաշվեց և

որիշ վհուկներու միջև կայացած հանձնակատարի
վարձատրութեան նշանն էր: Յուլիս 10 ղուրուշ,
մատամատը՝ 20 ղուրուշ և այլն:

Սովորութիւն էր, որ Վանի միջակ դասակարգի
կիներ, արաթ կամ պղծեմ գրամները փոխանակ
գրասեններուն մեջ պահելու, իրենց զխիս ունեցած
յազմային ճոթին մեջ կփաթթէին և վրան հանգուց
մը կզարնէին, երեկ ամենեւ ապահով կերպն էր,
որովհետեւ ոչ ոք կհամարանկեր կնոջ մը զխիս կամ
երեսին ձեռք դպցնելու:

Եթարի ետեւը. Սուրբ համաս յոթ դարիի
հատիկներ փող կընցներ, փող կզոցեր, մյուս ձեռքն
ալ վրան դնէր, կցնցեր, կշարժեր և ապա իր մոտ
եղող սեղանին վրա կնետեր և դարիներու ինկած
դրբերն ու ուղղութենէն գուշակութիւններ կընէր:

«Պիթ-Պազար» Վանի այն շուկան էր, ուր
կծախէր ամեն բան:

փետուրն գրիչը ձեռքն առնելով, երկու տարբեր գույն թուղթերու վրա սկսավ խզրզել այլանդակ նշաններ՝ կանաչ մեկանով, Ապա այդ երկու թուղթերը եռանկյունի ձևով ծալեց ու մեկ կողմ դրավ:

Անցավ կես ժամ և Մարանոս հաթուն վերադարձավ, աչ ձեռքով բռնած կապոցների և ձախ ձեռքով ալ աքաղաղ մը, ոտները թելով կապած և գլխիվայր բռնած:

— Ուզածներտ պիտիցի, Սուրբ համաս: էսա այլօր էսա տաս կուռուշ սաղ փանէն, էսա ծանփնր, էսա կարաքի, էսա էլ թաթեր ու խավժիլներ:

— Եա տ աղէկ, Մարանոս հաթուն:

Սուրբ համաս աքաղաղը բակ տարավ, մորթեց գավաթի մը մեջ քիչ մը արյուն լեցնելով, ներս եկավ: Մորթած աքաղաղը հարսին տվավ և պատվիրեց, որ փետուռն Ապա առավ փետուրն գրիչը և նախապես խզրզած գունավոր և եռանկյունի ծալված թուղթերու վրա աքլորի արյունը որպէս մեկան գործածելով, լուսնի, արևի նման բաներ մը գծեց, մեղրամոմով կնքեց և Մարանոս հաթունին տվավ:

— Մարանոս հաթուն, առ էսա էրկու թաթեր: էսոր ուրպա՞ծ ի, բնիտանձոր ես: էսա իրիկուն, լյոս շաքա՞ծ օր, էսա մէկ թուխթ առանց պաննալու կանտանալու, կտնի պանոցի տակ տիր: էսա մեկ թուխթն էլ կտնի իշլիկի ընթի (անութ) տակ կարի թէ որ թամբիսիս պէս հմէն պան տեղ-տեղօք անես, կտնի ցավեր կկարատվեն քանիմ օրից սօրա կաղէյնա: Թէ վոր շաղէյցավ, արեւ, ձիկ խաքան պե, ուրիշ զօռու թուխթ կանես: Ամա, թեւոր ջըսանթ անեք, յա տի յա կտն թխթեր պաննաք կանտանք, տըլըսմ կավիրի, խուրի-փերիներ կխոսվեն կտնի ցավեր դհա բեթան կէլենն: էսա ըսկընա: Մենք էլ քո սայից վաճ ըրըշտօվ ինան խավօվ փալամ կուտենք:

— Անուշ էլիի, Սուրբ համաս, խալալ էլիի: Թող մեխա կտնի ցավերն ընցընեն, փլա՞վն ինչ ի, ես դհա շատ ուրուշ փէշթէշներ կպիրեմ:

Մարանոս հաթուն զգուշությամբ առավ եռանկյունի ծալված թուղթերը, զրպանը դրավ և պատրաստվեցավ մեկնելու:

— Դէ՛, մնաս պարօվ, Սուրբ համաս: Եա՛տ, շատ շնորհակալ եմ: Քյո աղեկութեն շեմ միռնա:

Ապա Սուրբ համասի փողոցի կիսաբաց դռան շեմքին վրա կանգնելով ձեռքերը բազկատարած, աչքերը դեպի երկինք առած, սկսավ բարեմաղթել:

— Ո՛վ շահէլ-շիվանների պախապան սուրբ Սարկիս զօրավոր, քեյ եմ ապավինեմ, քո ոտն եմ ինգի, իմ կտն քեյ ամանաթ եմ տվեմ: Տիւ իմ կտն փժըշկես, սո՛րփ Սարկիս, քյո քտաց խողին, դիվան-դարգըլ-խին կուրբան էլենեմ, ինչիս որ տիւ ախլիկ փախցուցիր, քյո մուրազին խասար, իմ կտնի էլ ուր մուրազին խասուցես, ինոր բանն ուտեմ՝, նոր մեռնեմ:

Մարանոս հաթուն քաղաքամեջն աճապարանք և քրտնաթոր Այգեստան հասավ: Տուն մտնելուն պես շնչասպառ, կտնի սենյակը զնաց:

— Այն պառկի՛ր ես, որտի: Կլխուտ ցավ ընցա՞վ:

— Ձէ մարէ, ինչ ի՛ էն իւ Կասես ցավս քիշմ դհա-դհա զօռեք:

— Վա՛խ, վա՛խ, խուկիս էլենք, բալամ: Մկա՛, մկա՛, կտն շան, մկա կաղէյնաս: Ես տեղ-զանրման պիտիցի: Մկա կաղէյնաս, մանախ մանե: էսա մէկ կտոր թուխթ պառցիտ տակ կտնեմ: էսա մէկէլ կտոր թուխթն էլ իշլիկիս թեկ տակ կկարեմ: էթան իշլիկտ պիրեմ, շապիյտ խան, իշլիկտ խակի: Եվ ցավերդ բիթիւն, բիթիւն կընցեն կէթան կժերս:

— Թխթեր աղէկ, մարէ, ապա քյաֆուր վա՛րթ:

— Մկա՛, կտն շան, մկա իկլին կէրթան, քեյ վանթ էլ կպիրեմ:

Մարանոս հաթուն ձգեց սենյակ, գտավ կտնի իշլիկ և թեկ տակ եռանկյունի թուղթը կարելով, բերեց ու կտնին հագցուց և աճապարանք ալգին զնաց վարդ բերելու: Կտն առիթնն օգտվելով, թուղթը բարձի տակնն հանեց ու սկսավ կարգալ, որու վրա շատ տգեղ գրերով հետևյալը գրված էր, քրդերեն կամ ֆարսի լեզվով.

Ալէ՛հ, Մալէ՛հ:

Վոհա պըկա, վոհա պըկա:

Տալը ու պերա կյար կեն

Չար Ժի մըն

Չըլ ժուա, և այլն, և այլն:

Եվ շատ ուրիշ լայնադակ նշաններ ու անհասկանալի բառեր: Մոր ոտնաձայներ լսելով, անապարանքով ծալեց թուղթը և նորեն բարձի տակը դրավ:

— Էսա էլ բլե բլաֆուր վարթ, բլե մեռնեմ:

— Մարէ, կլլխուս ցավ ընցավ, մկա էլ սիրս կցավա: Օ՛յ... Օ՛յ... Օ՛յ... ամա՛ն, ամա՛ն, մարէ՛, սի՛րս, սի՛րս:

Լեոն կսկսի անկողնո մեջ այս ու այն կողմ դառնալ, կոտորովի, անհանգիստ ըլլալ, տքալ ու լալ:

— Ի՛նչ ի, զավակս: Ի՛նչ էլնով, ինչի՞ կուլան: Չէլնի՞ թէ թուխթ պանցիր կարտանցիր: Դողրին ասա:

Չէ՛, մարէ:

— Սուտ մասս: Թէ որ թուխթ պանցիր կարտանցիր, սաղն ասա, ձր ուրիշ ճարմ անեմ:

Լեոն կսկսի լալ և լալաձայն կսե:

— Խա, մարէ, պանցի թուխթ, փայց չկարտանցի, չկառցա խասկնալ: Վանեցա, ծալցի, նորից պանցի տակ տրի:

— Վո՛ւյ, արևս խավարէր: Տղա, տըլսմ ավիրեր ի ինոր խամար ցավ սրտիտ ի զարկե:

Մարանոս Խաթուն, միտքը երկար չարչարելն հետք, վերջապես որոշեց նորեն Արմաղանին երթալ և խորհուրդ հարցնել: Անապարանքը տունեն դուրս եկավ, Խաթունն փողոցեն անցավ, Պարոնկանց թաղը հասավ և Արմաղանի դռան ոռնակը զարկավ:

— Պարի լյնս, Արմաղան,— ըսավ Մարանոս Խաթուն:

— Պարին վէրէտ, պարին տղիտ վէրէն էլնի: Պարու մեջ մնա: Դէ ասա տիսնա՛նք, Լեոնի ցավ ընցա՛վ:

— Չէ՛, ախի Արմաղան, տղէս դհա կտանջվի: Բլն խաբանն արիցի: Սուրփ Խամասին կնացի: Ինի որ ասիցի, որ տի հս ծորխկե: Մատս էլ շանց տվի, որ խօսքիս ավատա: Բլն անուն լսելուն պես, քյն խաթրի խամար էրկու թուխթ արաց, փոխանակ մեկուս Առի թխթեր, պիրի, ուր ա-

սածի պէս արի: Մեկ Լեոնի պանցի տակ տրի, մեկն էլ իշկի թիվի տակ կարիցի:

— Է՛... դհա աղէկ, ցավն ընցա՛վ:

— Հը՛մմ... ցավն ընցա՛վ: Թուխթ պանցի տակ տնելուս պէս, ցավ կլլխուց սրտին զարկեց, դհա-դհա բէթար էլնով, մկա սանջուն ինգլե սիրտ ինքն փոր: Տղէս լաթղի մեջ կկնալի, կուլան: Գիտե՛ս ինչի: Եփ ոտս շոթից քանջիցի, որ էրթամ քաֆուր վարթ պիրեմ, Լեոն, տի Լեոն, ման մէլնե, պանցի տկի թուխթ պանց, կարտան: Ձիկ կերևա որ տըլսմ ավիրեր ի, ինոր խամար ցավ կլլխուց սրտին ի զարկե:

— Մարանոս Խաթուն, ասածտ դողրի ի: Տըլսմ ավիրեր ի էլ Սուրբ Խամասին չէթան, կպարկանա: Իմ իրիսատեղն էլ կպայսի: Արե, բլե ուրուզ պան սողրցուցեմ: Շիտակն ասած, Սուրփ Խամասի թխթեր շատ զորավոր են:

— Դէ, շնտ արա, ուրիշ ճարմ կիտես, ասա, տղէս շատ կըլըլըլի:

— Արե, բլե ծրծխկեմ Կարիի վարտանի մօտ: Վարտանի արած թխթեր զորավոր են: Դհա շատ վարտան փոխանակ կարու, ցորէն կթնլի, զար՞ կթնլի: Վեցիմզարյակ ունի, հմէն պան տեղն ու տեղ բլե կասի: Չմոռնաս, եփ վարտանին կէթան, էրկու մատկերտ⁹ նշանց տուր, որ ավատա, թէ ես եմ քե ծրծխկե: Վարտան քիւմ շատ փանջ կուզի, ամա ի՛նչ անես, կարծի, ուր բործ կիտցուղ մարթ ի վարտան: Սուրբ Խամասի պէս չի:

— Աղէկ ասիր, վարտանին էրթամ: Ինոր անուն լսիր եմ: Կարծեմ Նորաշէնա թաղ կմնա: Մեկ էլ վո՞ւ վ թյաղաթյ պիտի էթան¹⁰ Սուրփ Խամասին,— ըսավ Մարանոս Խաթուն:

— Խա՛, Խա՛: Վարտան շատ ալ չափուկս պան ի: Բանտ կըպանն, կուրիսած պաներ կկընղընի: Կյուղուփներ էրևան կխանի, շուկա¹¹ անեղով: Սիրահարվածներաց ու-

⁹ Զարեանցի դարերուն նման շորս զարեր էին, արուրե շինված, որոնց վրա կային կետեր, այս զարեր ծակ էին և երկաթե բարակ թելով թուլ կերպով իրար միացված, և ամեն կողմ կրնային դառնալ:

¹⁰ Եժրկու մատները: Կնշանակեր երկու անգամ տաս զորուշեց, այսինքն՝ մեկ մեծիտի հանձնարարողներ:

¹¹ Եռկապ.— Որպես թե Կարիպի վարդան, թուղթ

⁸ Վհուկներ շատ անգամ միամիտների կպահանջին անկարելի: Այսպես՝ շածիված կորնավորի գլխեն երեք թել մազ, ճեճղուկի մը թխկոսից, խաղողի որթի զարնան շուր, տասներկու տարեկան անդրանկի տղայի մը եղունգ և այլն:

րենց մուրադին կխառուցի: Խնդիրներն-
րաց պատճառներ կկրենդեն: Ի՞նչ կիտեամ,
դ՛հա շատ ուրուշ պաներ: Կնա՛ կասեմ,
շմոռնաս ասելու, որ ես եմ քյե օրօխկե,
շմոռնաս էրկու աստկերտ էլ նշանց տաս,—
ասաց Արմաղան:

— Էթամ, անկյնցա, աղէս շատ կշար-
լըրվի:

— Խա՛, Մարանոս Խաթին, մոռցա
ասելու, որ Հիւրիւթից սորա, երբ ճամպլի-
ներ պացկան, վարտանն առեց ուր կնիկ—
զաթի զավակ շունէր—իր կլրթեբ, ցորնի
խատեր, զարեր, փէտուրէ քրիշ, Վեցխա-
զարյակ ու կնաց Ուտուստան: Դա՛ թիֆ-
լիզ հաստատվալ, սորա կնաց Բաբու Տիւ
Կիտեմ, որ շատ-շատեր կարթի կկային,
Վարտանի տոան անո՛ջ ուրեց բախտ իրիշ-
կալու, ինչ կիտեամ, դ՛հա ուրեց ուրուշ
դարդերաց զարման անելու խամար: Կը,
որ մէկ տարվա մէջ խազարավոր մանէթ-
ներ կօլնեցեց, յավաշմ էլնալ նորէն Վան
էկալ: Մկա նստե, խանգլխատ-խանգլխատ
կծառի: Դէ կնա: Անկյնցար:

— Մնաս պարի,—բաւալ Մարանոս Խա-
թին:

— Էթան պարի:

Մարանոս խաթին հագիւլ մեկնած, Ար-
մաղան սկսեց ուրուր փնթփնթալ:

— Հիւար կնիկ, կկարծի, թե՛ ուր լաճ
խիվանդ ի, փորի ցաւ ունի: Բե՛... Լեռն
տեղմ ախլիկ ի տիսե, ախլկան զարկվեր ի,
փախլվել կուզի:

Կէս ժամ հետո Մարանոս Խաթին Վար-
տանի տունը կգտնե, պատահող անցորդնե-
րու հարցնելով:

— Պարի լլոս, Վարտան աղա:

մը, հմայակ մը կգրեր, որու զորութիւն շնորհիւ գո-
ղեր չէին կրնար միգնել, մինչև որ իրենց գողցած իրը
կա՛ն առաքելան տիրոջ չլիբադարձեցին: Նորածններու
ծննդականներու և առհասարակ ամեն տարեթի ճանձ-
նում վնասողներն էին գիշերվա շարքեր, շար աշքեր
և կենդանակերպ ոգիներ, ինչպես գալ, օձ, կարիճ,
զորա, մըլչուն և այլն, որոնք կառաջացնէին զորտ-
նուկ, միշտուկ, օձուկ և այլն հիվանդութիւններ: Վար-
դան այս հիվանդութիւններու համար ալ կշինէր հմա-
յակներ, օրինակ՝ գնկապ, կարիճկապ, զորտկապ,
օձկապ և այլն, և հիվանդներու վրէժն կախել կուտար:
Այս հմայակներ որպէս թե խնդրանքներն էին ուղղված
բարի ոգիներուն, ընդդէմ շար ոգիներու, անհետաց-
նելու համար արկածներն ու հիվանդութիւնները:

— Աստու պարին: Խէր էլնի: Նստի
տիսեա՛նք:

— Վարտան աղա, մեր լաճ, Լեռն, շատ
կլէշ խիվանդ ի: Կլլօխ, սիրտ, փոր հմէն
կցալա: Սուրփ Խամասին կնացի: Անկյն-
սակլիրթյա կարտաց, ուրեւր խաբար իտու:
պտպտաց, ապա էրկու թուխթ արաց: Ա-
սաց՝ Լեռն խիվանդ չի, սիրահարվեր ի,
ախլկա ի զարկվի: Պիրիցի թխթեր, ուր
ասածին պէս արի, փարմ շարաց: Ջանմ,
ի՛նչ սիրահարութեն, ի՛նչ պան: Տղես ցա-
վերաց մեշ կխեխտվի, կտառապի, կտանջվի,
տեղաց մեշ կտաննա, կկլալըրվի: Քյե
մեռնեմ, Վարտան աղա, քյո բախտն եմ
ինգյե, խորհուրթմ կանաս, տու, ճարմ կա-
նաս, արա, տղէս շատ կշարլըրվի: Չմոռնալ
ասելու, որ Արմաղան զիկ օրօխկեց և ա-
սաց, որ էրկու մատկերս տնգյեմ որպէս
նշանապան: Վարտան աղա, Արմաղանի
խաթրի խամար զօրավոր թուխթ արա,
քյե մեռնեմ, տղես խեղճ ի:

— Հը՛մմ... Սուրբ Խամաս... էտա կա-
խառթ խապէպալի, անօթի մէկն ի: Հէշ
պմմ էլ չի կիտե, և միամիտներաց կխա-
պի, ինոցից խաւ, ալիւր, ալլօր ճւլլտուն
վանէկ, կարաք, ծանձար, կուրկնտ, փարմ
կանի: Մկա կյանք քյո լաճու ցալին
...լաճուտ անուն Լեռն ի, ասիր:

— Խրամանքտ ես, Վարտան աղա:

— Խրամանքտ ի պարին կատարեսցէ:
Վարտան «Լեվոն» բառ թխթմ վրեն
կկլրի, կլրեր զատ-զատ, ըսկանն՝ Լեռն
վերուր մատին կխամբի, կասի:

— Հը՛մմ... «Լեվոն» խինգ կլրի ի: Խինգ
պարի թիւ ի:

Ապա կառնե իր հանրածանոթ «ալի-
տիք»¹² ցորենի յոթ պարարտ հատիկները,
ափին մեշ կլեցնե, ափը կզոցե, Երկու ձեռ-
քով կցնցե և իր առջև զտնված սեղանին
վրա կնետե: Երթունքները կշարժե, կիցկը-
տուր բառեր կարտասանե: Այսպէս կնայի:
Այնպէս կնայի: Կծռի, կողմեն կնայի, կդի-
տե պահ մը, կհաշվե և փետուրե գրիշով
թուղթի մը վրա բաներ մը կգրե ու կըսե:

— Հը՛մմ... Խորհուրթ խորին անհաս
անսկիզբ: Խասկցա՞ր, Մարանոս Խաթին:

¹² Ծորենի անուն, կլոր կարմր խառու

— Զէ՛, Վարտան աղա, քրնքառի պծ-
պիկ եմ:

Ես էսա տեղ ախշիմ կտիսնամ: Դոդ-
րին ասա, Լեոն տեղմ ախշիկ տիսե՛ր ի:

— Ի՛նչ մեղքիս պահեմ, օրմ ասաց՝
մարէ, էսօր Սրփիկ տրսա: էն էր, էն էլ
շում մկա պամ շաաց:

— Սրփի՛կ, — կհարցնէ Վարդան, — և
թուղթի մը վրա կգրէ «Սրփիկ» բառը, նո-
րեն դատ-դատ՝ «Սրփիկ», և մատնեբու վրա
կհամրէ, — էսա էլ խինգ իւրի ի, պմրի թի-
վէր: Աղէկ էլամ, պմրի նշան ի: Մարանոս
խաթիւն, ցորէլտեբ կասեն, որ Լեոն և Սըր-
փիկ անուն ախշիկ երջանիկ պիտի ըլլան
և իրենց մուրազին պիտի խասնեն, որով-
հետև անուններու գրեբը խաւարա ին:

Ապա «Էնվոն» և «Սրփիկ» բառերը կա-
պույտ թուղթի մը վրա կգրեն: Թուղթը մեղ-
րամոմի մը վրա կուրեն և Մարանոսին տա-
լով, կըսեն.

— Մարանոս խաթիւն, ա՛ն էսա մոմ,
վաղը ուրպմի՛ր, ամբողջ օր տիւ ինան Լեոն
ծամ պախէթ: Միայն կեսօրին կմղմի մը
ջուր խմեցե՛ր: Իրիկուն մութը կոխելուն պես,
տիւ ծեր փմպմիւր կնն մտի, էսա մոմը
մթան մէջ վմոռի և սպասի, չուր մոմ վմո-
ւի լմննա, գրածս թուղթն էլ խետու էտա
միխիւր պախի: Ապա ա՛ն էրկու ճող հծու
էտա փէտերն էլ վմոռի փէտի ու մոմի մո-
խիւր թխթիմ մէջ ցլէլօվ, կապոցմ շինի և
պախի, զգուշ եղիւր, որ ոչ-ոք չտիսնա: Ուր-
բմի՛ր իրիկուն, երբ Լեոն քնանալու կպատ-
րաստվի, թող կմղմիմ աղճիւր խմի՛ ու
քնանա: Կես ժամեն նա երազի մեջ ախշիկմ
կտիսնա, որ իրեն չուր պիտի տա խմելու
և պիտի ասի, թե վիւր ախշիկն ի: Երբ մյուս
օր Լեոն քի կասի ախշկա լղարի անուն,
տիւ ուրպմի՛ր իրիկուն առ մոխրի կապոց,
կիտի կլլիուց իրեթ թիւ մաղ, ճնշղկան
փիտուիմ, յօթ ծիւ ունեցող խնձորի ճողմ,
հիմեն մէջ կապոց արա և ախշկա փողնի
դուան մօտեբ, կյանտիկ տեղմ քարիմ տակ
տիր կամ խորի կյէտնի տակ: Նորէն կա-
սեմ, ըսբուշ կաց, որ մարթ չտիսնա: Եվ
եթե հմէն պնն ասածիս պէս անեն, ախ-
շիկ խննթի պես Լեոնի վէրէն կսիրահարվի:
Երբ Մարանոս խաթիւն կառնէ մոմն ու
թուղթը և երթալու կպատրաստվի, Վար-
դան կըսեն.

— Կեցիր, Մարանոս խաթիւն, դհա

չմնցա, — և իր կնոջ դառնալով, — Ախշի,
Օղիկ, մէկ Վեցխազարյակ¹³ պե տիսնանք:

Վարդանի կին, Օղիկ, կըբեր շուշփանե-
րու մեջ փաթթված գիրքը: Վարդան երկու-
դածութիւմը՝ մեկիկ-մեկիկ կըսան շուշ-
փանեբ և գիրքը երկնալուն պես կհամրու-
րեն: Ապա ձեռք կառնեն երկաթյա թելով
իրար ագուցված արույրն չորս զարեբ և
սեղանի վրա կը նետեն ու զարեբու վրա
եղած կետերը հաշվելով՝ թիվեր մը կմըթ-
մըթա:

— Յոթ, ինն, տասներեբ, որով կընեն
քսանեկին:

Կրանա գրքի էջ 29, ուր կկարդա՝ ման-
րամասնութիւն տեսնել էջ 69-ի վրա: Կը
բանն էջ 69-ը, հոնքերը կկիտեն, նորեն
կկարդա: Գլուխը կշարժեն: Երթունքները
կկրծեն և իրար կուտա, որպես թե կկարդա
և աչքերը դեպի առաստաղը հառելով կըս-
ցականչեն.

— Յահո՛ւ...¹⁴ Վահո՛ւ, Ահրիմա՛ն: Վա-
հո՛ւ, Իլիլի... Յահո՛ւ՛ շաղար-Ֆենտ, Ուլդ:
Յահո՛ւ, Վահո՛ւ:

Ապա, լուռ մտիկ կընեն, ձեռքով ական-
ջի ձագարը լայնցնելով, որպես թե մեկը
իրեն բաներ մը կըսեն: Գլխի խոնարհումեն-
րով հասկնալ կձևացնեն: Ապա կառնեն փե-
տուրն գրիչ և թուղթ մը, որուն վրա մեղ-
րամոմի պաղած կաթիլներ կան: Գրքին
կնայի մերթ ընդ մերթ: Կգրեն անհասկնալի
բառեր: Կքաշեն կլոր և ուլիղ գծեր, կգծեն
արեի պատկեր ճաճանչներով, կգնեն քանի
մը թվանշաններ: Թուղթը եռանկունի կծա-
լեն, կվառն մեղրամոմ մը և մոմն կաթած
կաթիլներով կկնքեն, որպեսզի չբացվի և
Մարանոսին տալով, կըսեն:

— Էսա նուխաչն. շատ զօրավոր ի,

¹³ Վեցխազարյակ՝ գուշակութուններու արհեստ
սորվեցնող գիրք մը: Ախարքը ընողներու հաւատո
հանգանակը: Կպարտանալն թվանշաններ, զանազան
ձեւերով գծեր, նշաններ ու թելադրութուններ: Ըստ
ոմանց՝ գիրք համարողական արհեստի և ավելորդա-
պաշտութան, հիմնալ յոթ ձայնավոր գրերու վրա:

¹⁴ Յահո՛ւ, Վահո՛ւ, վահ՛ն, ախ-վախ բացական-
չութիւններ գուցե հին շատավածներու, զուցե Վահեի,
Վահագնի կամ շայկ-Օրիոն շատավածներու աղաժադ-
րալ ձևերն են, որոնք կհիշվեն խրախմանութիւննե-
րու և արտածութիւններու ժամանակ, որպեսզի շատ
վածներ գային և անբերութարար մասնակցեին կամ
ընկերանային իրենց պարերուն կամ զօրացնեին դի-
րենք իրենց ցավերուն մէջ:

կլտորմ կտալի մէջ փաթիւթի էրկու յանից
թել ընցու կտնի վզից կախի:

— Շատ շատ շնորհակալ եմ: Աստված
բոյ պակաս շանի մեր կլխուց: Ուրախութեան,
կերպանկութեան մէջ մնաս. վարտան
աղա: Դէ՛, մկա քոյ ուղածն ասա:

— Մարանոս խաթուն, էսա մեղրամոմ
ծանրաց մեղրից ի շինուկ. ես խնայմ որո-
նով եմ կընդե: Շատ թանգիս: Ախարարի
կլին քսան կուռուշի, իսկ նուկսու հա-
մար ես քեզից մենակ քսան կուռուշ կառ-
նեմ: Ուրիշներաց մօտէն էրկու մանջիթիե,
յա՛ թէն շատ կլախ էլ ալել կառնեմ: Ար-
մաղանի խաթրի խամար քոյ մեկ մանջիթիե
թող պակաս էլնի: Էրկուս մէյտեղ կանի
քյոսսուն կուռուշ:

— Կլխուս վէրեն, վարտան աղա, քյառ-
սուն կուռուշ թող քե կուրբան էլնի,—ըսավ
Մարանոս խաթուն, վճարեց և պատրաստ-
վեցավ մեկնելու:

— Ես կալատամ, որ էսա էրկու թղթեր
կտնին շատ պիտի օքնի խարսնիսմ պիտի
անեթ ձիկ էլ հրավիրէր: Է՛ ապա որ շէյնվ:
Կիտես յա, աշխար ի, կպատահի: Թէվոր
քործեր հաջող շինանցին, ձիկ շտորմ խա-
րմար արա: Կիտե՛ս, կտն խիվանդ շի, կտն
սիրահարվեր ի ախշկա վէրէն: Մէ կմնա
ախշիկն էլ կտնի վէրէն սիրահարուցել
Իտոր խամար կասեմ, թէվոր գործեր հա-
ջող շինանցին, մե կմնա մէկ ճար: Ստիպ-
ված հուրինեաց ժողովին պիտի էթնամ ան-
ցամփ ախսանմ ինոնց կլլխավոր Ահրիման,
ինոր խետ խոսեմ քոյ խնթիւր՝ և նոր խոր-
հուրթներ առնեմ: Հուրինեաց ժողով տեղի
կուռնեա ամիս մեյ տիր, ուրպան՝ օր, կիշեր
կլախ մութ կամ կլանդտիկ տեղեր: Կանխ-
կան էլ ցամբուրկ խորեբաց մէլ, կանխ-կան
էլ Սապունջու ծիթխացի Կոնճի տան մութ
փոսի մէլ: Տէլ ձիկ խնայմ շտիլն, թէ էկող
ժողով ե՛փ և ո՛րտեղ պիտի անեն: Եվ ես
Արմաղանի, քոյ և ջահէլ-շիվան կտնի
խաթրի խամար կիշերմ անջուլ և նատոռ
պիտի մնամ և տխունմ Ահրիմանի կամ
ինճի փոխանորթի խետ:

Ապա վարդան աղա զգուշութեամբ և
երկյուղածութեամբ «Վեցհազարյակը» նո-
րեն շուշփաներու մեջ փաթեց ու տոպրա-
կին մեջ դրավ: Մաքրեց փետուրե գրիչը և
զարերու հետ միասին իրենց պատկանյալ
դարակին մեջ տեղավորեց, պատրաստ՝
նոր հաճախորդի համար:

Իսկ Մարանոս խաթուն խոնարհութիւն
ընելով և շնորհակալական ու մաղթանքի
խոսքերով հրաժեշտ առավ և տուն վերա-
դարձավ:

Կտն հանգիստ անկողնո մեջ նստած
կկարդար: Մոր ոտնաձայներ լսելուն պես,
իսկույն գլուխը վերմակին տակ քաշեց,
սկսավ նորեն հիվանդութիւն կեղծել, զա-
լարվել, լալ և տքալ:

— Վա՛խ... վա՛խ... բալամ: Դհա կը-
տանջվես: Էսա ի՛նչ շար սճաթի ռաստ
էկանք: Իշալլահ էտա ցավտ էլ կընցնի,
մանախ մա՛նե, բալամ:

Մարանոս խաթուն կբանա կտնի կուրծ-
քը և եռանկյունի ծալված նուխսն թելով
մը կտնի վզեն կկախե:

— Էսա մէկ: Դհա էսա իրիկուն էլ
փազնի պիտի էթնամ, մեղրամոմը վառեմ,
և... և... մնաց տիւ ձիկ թօ՛ղ, իշալլահ հմեն
պան աղէկ պիտի էթն և լավանաս, կտն
ջան, մանախ մա՛նե: Կիտե՛ս թուրթ արող
վարտան ի՛նչ ասաց:

— Ի՛նչ ասաց, մարէ:

— Ասաց, որ տիւ ախշիմ ես տիսե,
ինոր անվան անանճի կլիր Ս-ի: Կամ տիւ
ախշկան զարկվիր ես, կամ ախշիկ քոյ ի
զարկվել: Էսա իրիկուն սճաթի տասին քնէ-
լուցտ անանճ կանխմ աղճիւր խմի պտուկի:
Անպատճառ էտա ախշիկ պիտի տիսնա
էրազիտ մէլ: Զէ՛ որ աղճիւր խմիր ես, ծա-
րավ ես՝ էտա ախշիկ պիտի կլմ, քոյ ճիւր
տա, որ խմես: Խա՛, շմոռնաա ախշկան
խառցու, թե վի՛ր ախշիկն ի: Իշալլահ
էրազտ ի պանին պիտի կատարվի, ախշիկ
պիտի տիսնա և սուրփ Սարկլիս զօրավոր
քոյ ցավեբաց տեղ-դանման կանի:

Կտն մոր բերանեն այս նոր լուրը լսե-
լով, կիսաժպիտ կազդուրման նշաններ
ցույց կուտա և շտկվելով, անկողնո մեջ
կնստի:

— Գյօ ըտըսկնամ, քոյ մեռնեմ, աղէցար,
աղէցի, կաղէնաս, մանախ մա՛նե:

Արդեն երեկո էր, մութը կոխած, Մա-
րանոս ախոռը գնաց մեղրամոմը ալրելու,
իսկ կտն ըստ մոր խրատին, թիւ մը թթու
բանջարեղեն կերավ, զավաթ մը աղջուր
խմեց և պառկեցավ քնանալու:

Հաջորդ առավոտ, կտնի մայրը կանուխ
և անհամբեր կտնի ննջասնկակը մտավ ու
հարցուց:

— Էրազ տիսա՛ր, կտն ջան:

— Խա, մարէ, տիսաւ:
— Էրազիտ մէջ ախշիկ տիսա՞ր:
— Խա, Մարէ, տիսաւ:
— Ախշիկ ճիւղ իտո՞ւր քյե:

— Խա, մարէ, իտուր:
— Անոն խառցուցի՞ր:
— Խա, մարէ, խառցուցի:
— Դէ ասա տիսնամ, վի՞ր ախշիկն ի:
Լեոն, որ միշտ և շատոնց գիտեր աղջկան
անոնը, ըսավ:

— Խոտի Մկանց Սրփիկ:
— Է՛... քե տիւր էկա՞վ:
— Խա, մարէ, շատ տիւր էկավ:
— Ասելի կսիրես էտա ախշիկ:
— Խա մարէ, կսիրեմ, հայրամբ կսիրեմ:
— Աղէկ: Էլ տիւ հմէն պան թող ձիկ:
Ես Արմաղանին կասեմ: Արմաղան հմէն
տուն կմտնի կէնի: Էն շատ ախշիկներ կճանչե-
նաւ: Շատ ախշիկներաց էլ փեսացու ճարեր ի:
Էն հմէն պան կշրմապրի:

Մարանոս Խաթուն Արմաղանին լուր
կղրկե և իր տունը կհրաւիրէ: Արմաղան
երկու օր հետո կուգա:

— Պանի լիս, Մարանոս Խաթին:

— Պանին վերէտ, վէր ծանցիւրացտ,
Արմաղան, պանծով էկար: Ինչի՞ անկյնցար:
Ձէ՞ որ էրեկ պտի կլիր: Է՛... ասա տիս-
նանք, ի՞նչ կաշկա:

— Սաղութեմ:

— Շատ տներ կմտնես, կէնես: Տիւ
շատ պան կիտես:

Երբ Արմաղան կպատրաստվեր Մարա-
նոսի հարցումներով պատասխանել, Լեոն
կիրահարեց իր անոնը և սեղանի վրա-
յն գիրք մը առնելով նորեն իր ննջասեն-
յակը գնաց: Արմաղան Լեոնը տեսնելով,
պատահ առիթ համարեց խոսակցութիւնը
բանալ:

— Մարանոս Խաթին, Լեոն ի՞նչիս ի,
աղէցա՞վ: Վարտանի մօտ կնանցի՞ր: Թուխթ
իրիշկալ տվի՞ր:

— Խա, կնանցի: Վարտան հմէն պան
տեղբաս տեղ ասաց: Ասաց, որ Լեոն խի-
վանդ չի: Լեոն զարկվել ի ախշկամ և ախշ-
կա անվան անձին կլիր Ս-ի էրէկ կիշըմ
Վարտանի թխթի զօրութեամբ Լեոն ախշիյմ
Վարտան թխթի զօրութեամբ Լեոն ախշիյմ
ման մէջն Լեոնին կանգնիւմ ճիւղ տուր, որ
խմի էրադի մեշ: Վնվ էնի աղէկ ի: Խոտի
Մկանց Սրփիկ: Էրազ տիսնալուց սօրա,
Լեոն քիշմ աղէկ ի: Փորի ցավ ընցե, ամմա

սրտի ցավ գլխն տեղն ի: Արմաղան, թեև
տղէս տէլ շատ ժամանակ ունի, ամմա ես
կխնթեմ, որ տիւ մէյ խատ գլխիս զանեմ:
Խոտի Մկանց տուն Վրզլըզի թաղն ի, քյծ-
շի տուն: Մէ հա մտի, ախշկան տես, թե
վնր խաշնար, պատ շարի, որ Լեոն շոտմ
նշանենք:

— Տիւ զիկ թող: Զիկ Արմաղան կասեմ:
Շատ ախշիկներաց խամար եմ փեսա կնդե:
Լեոնի խամար էլ ճարմ կանեմ: մանախ
մանե: Լեոն քյան չի, իմ տղէն ի: Տղէն
ախշկա վէրէն սիրահարվել ի, մե կմնա
ախշկան էլ տղի վէրէն սիրահարուցենք:

Մարանոս խաթուն վեր կելլե: Հացի
սլան կրերե, սեղան կպատրաստե: Մրգե-
ղեններ, հաց, պանիր, շիշ մը գինի սեղա-
նին վրա կդնե: Կուտեն, կխմեն, կշաղակ-
րատեն: Մարանոս Խաթուն երկու շաբթ
Արմաղանի ափը կդնե ու կսե:

— Ա՛, Արմաղան, բաղաւ էթան պէտք
կուլլա: Ամմա եփ Լեոնի խնթիրն էլ հա-
շօղուցես, էն կլլա տես թե ի՞նչ կանեմ:
Դե, քյե տիսնամ, Արմաղան, շոտ պարի
խանքարմ պիրես:

Մնաս պանի, Մարանոս խաթին: Շա՛տ,
շատ շնորհակալ եմ: Տիւ զիկ թող: Ես հմեն
պանի ճար կկընդդնեմ:

Անցան օրեր: Լեոն կամաց-կամաց կաղ-
ղուրվեցավ և զործի գնաց, իսկ զրացիներն
ու պառավները բացին իրենց բամբասներ
տոպրակները: Այսպես:

— Ախշի, լը՛ր: Օհանէսնց Լեոն սուտ
խիվանդ ի էլե, մանգլար փսայլվել կուզի:
— Խա՛ լըր: Լանքոջ պէտան Արմաղան
էլ մըյուրի պես կեթմ-կուլլա, խանքար
կտանի-կպիրի: Վա՛յ, շիվա՛ր էլա:

— Հը՛մմ... Խոտի Մկանց Սրփիկ սի-
րահարվելի: Քյան Մո՛ւկն էլ օրօճ:

— Մեղա, տե՛ր: Օշնյալ է աստված:
Ի՛նչ օրվա խասանք: Սիրահարութեն: Դե
խո՛ղ ամենք, անամօթներ իմ օղորմած
խնկի մէրս կասէր, ծիանք կնալին՝ կըր-
րեն էլ ոտկեր պարզեց:

— Քյա, տիւ հմէն չես կիտե: Կախարթ
Կարերի Վարտանին կնացիր եմ, թուխթ
անի եմ տվե, որ ախշիկ Լեոնի վէրէն սէր
թալի:

— Ախ, էն թղախավատ վարժանպետ-
ներ, սիւլի-փիլի պախապներներ, սիրու-
հի փնտոռներ: Մոխսի խաթին, ես զաթի

օրըմ պիտի կպնեմ էն Վարժապետներաց։
Մեկ սուրբ օրենքով ունիք, պախան էր, էն
էլ կուտեն, էն կլորղի տարածենք։ Սաղմոս,
նարէկ կնորում ձողան։ Ի՞նչ կկանոնան։
Նորեկով կլորթիք, շուն, կատու, ախլիկ,
սէր, սատանա։

Սրփիկն էլն էքօսպանց,
Քյամին իզարի իրեն իրաց.
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Աշկով-ընքովով սիրտս կզաղես
Կաքյով քէլքյով խնկիս խանես։

Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Կարմիր շուխա, կանանչ ատլաս
Քյն պոնելու ունեմ խավաս,
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Քյն խամար շինեմ կմֆանս,
Մէշ տնեմ կայիմ կէնաս
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։

* * *

Թէ կը սիրես սրտով սիրի
Աստվծի մալն ի՞նչ անեմ,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Թուխ աչք թուխ ունք, Լևոն ջան,
Բիլմ քյն հան ինչ անեմ։
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Լևոն աղի ծին փոթեր ի,
Էրկէն շմբիլ տուն թողեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Հմէն սարի խոտ կիրեր ի,
Պաղ անպարի ճիւր խմեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։

Դրացիներու շարախոսություններն ու
երգերը ստեղծեցին նախանձորդներ ալ,
որոնք նամակով և ուրիշ միջոցներով ազ-
դարարեցին և սպառնացին Լևոնին և իր
մորը, որ հեռու մնան Սրբիկեն¹⁵, բայց
Մարանոս խաթուն կարևորություն չտվավ
և ըսավ.

— Ես էտա ճօռթի ծակից խաճող
զաղարներաց չեմ վախէնա, ինչ կուզեն թող
անեն։

Տարածայնությունները և բամբասանք-

¹⁵ Երբ խոսեցյալներն առ ոչինչ կհամարեն ազ-
դարարություններն ու սպառնալիքները, նախանձոր-
դներ կդիմեն կախարդին և անոր աստու զրամ վճա-
րելով, կխնդրեն, որ զԿալիպպա ընեք, յալիքն՝
հիվանդացներ խոսեցյալները, կամ ատելություն ձգեք
անոնց մեշ, կամ փեսան անկարողության դատա-
պարտեք և կամ հարսնացուն «բըպղզ» հիվանդութամբ
վարակեք։

ները շրջան ընելով, վերջապես Հովհաննես
Աղայի ականջը ինկան։ Երեկո մը Հովհան-
նես Աղան գործեն տուն դարձին, խոժոռ ու
բարկացած, ըսավ.

— Էսա ի՞նչ ի, կնիկ, Ի՞նչ խօհրդա-
վոր, կյանդտիկ-մանդտիկ քյո կլլխու պա-
նեմ կանես։ Սուրբ Խամասին կէթան, Կա-
րիքի Վարտանին թուխ անել կուտաս,
շատախօս Արմաղան օրթէն թանկը ես,
տղիտ խամար ախլիկ կփտես։ Տան կլլխա-
վոր ե՛ս եմ։ Հմէն պան իմ հրամանով պի-
տի էլնի, խասկցա՞ր։

— Արիվուտ մեռնեմ, մա՛րթ, էսա մէկ
պան էլ թող իմ խօսքով էլնի։ Օրմ չէ օր
Լևոն պիտի փսակենք։ Թող մէկ-էրկու
տարի էլ չնո էլնի։ Ի՞նչ զանաւոր կա։ Տնիս
էծում ում ի մնացե ձիկ։ Թող Լևոն փսա-
կեմ, ինոր բանն ուտեմ, նոր մեռնեմ։

— Ես անլա չեմ մեռն, որ տիւ տան
շմբիլ ծեռտ առնես և ուզածտ դեր քյանչես։

— Քյն մեռնեմ, մա՛րթ, ինչի՞ պէրանտ
ըսկեմ կիշ կպանաս։

— Հը՛մմ... Լևոն փսակենք։ Փսակենք
ամմա, ախլիկն էլ քիշ մեր ցեղին լայնդ
պիտի էլնի։ Հո՛ւհ... Խոտի Մկանց Սրփիկ։
Խոտի Մկանք, խոտի Մկանք պստիկ
ծանք մ ունե՞ն։ Թաղի, Թաղակայտեր, Եկէ-
ղեցվոր Հոգեփարցության մէջ պատիվ ու-
նե՞ն, Լևոն փսակենք։ Աղէկ։ Քոնէ շուկա-
յի մէջ պատվավոր առևտրական մաներ
ունենանք, վրո օրմ մե պէտք պիտի կլմ։
Խիկար իմաստուն կասի (մատը ջունքին
դնելով)՝ կնա՞ պոնի քյն խնամի, որ պո՛շ
քյո պո՛շին կնմանի։

Հովհաննես Աղան ապա կսկսի երգել
աղբատներու երգած երգին վերջին համա-
րը, ծաղրելով, կրցածին շափ եղանակ
հարմարեցնելով և ձեռքերը երեքցնելով։

Լևոն աղի ծին փոթեր ի,
Էրկէն շմբիլ տուն թողեր ի,
Հմէն սարից խոտ կիրեր ի,
Պաղ անպարի ճիւր խմեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։

— Ի՞նչ անեմ, մարթ, ի՞նչ սև խո՞ղ տամ
կլլխու։ Լևոն իշտե Սրփիկին ի զանկվի։

— Կնի՛կ, իմ հմէն խրատներս քյո մէկ
ակնջից կմտնի, մէկէլ ակնջից տիւս կէլնի։

— Իմ կլլթի էնկանդամ ճո՛շ չի, որ քյո
հմէն ասածներն էստեղ տեղավորեմ։

— Կնիկս, եղնիկս, ուկիկս, ջելրանս։

ես փորցառու մարթ եմ: Մշու Սուլթան Սուրփի Կարապետ տա քո՞ մուրձո՞ղ ուխտի կնացիր եմ: Խօսքիս ավատա: Միրահարու-թեն ծնութեն ի, հիմարութեն ի:

— Ինչի՞ ըտկնա՞ կասես, ջա՛նմ, իշտե նոր մօղա ի էլն: Հմէն ջահէններն էլ դաշ կսիրահարվեն, սօրա կփսայվեն:

— Կնիկ, ես կլրբի մէջ կամրտանցի եմ, որ սիրահարված ամուսնութիւն կնամանի պաշարված պեռթի, ինձնք, որ պեռթի մէջն են ու պաշարված՝ տուրս էլնել կու-ղեն, ինձնք, որ տիւան են՝ ներս մտնել կուղեն: Տիւ կիտես, լեռն կփսակես, փսա-կի, մեխք քո՞ վիզ: Քո՞ մուր քո՞ ճակատ: Ես պաճառ չեմ էլնե:

— Մարթ աստուծօ, անձ կայնի տիս-նանք Արմաղան ի՞նչ խանար կպիրի: Բանքի կբէհրեն՝ն:

Հովհաննես աղան ու Մարանոս Խա-թուն այդ երեկո երկար վիճաբանեցան լեռնի ամուսնութիւն խնդրույն վրա: Վեր-ջապես Հովհաննես աղան կիտարերան կամք տվավ, ըսելով.

— Տիսնանք վա՞ղ աստված ի՞նչ տուռ կպանն:

Առտուն, ըստ սովորականին, Հովհան-նես աղան գործի գնաց, տալով որոշ պատ-վերներ իր կնոջ և մշակ Սեդոյին:

Արեւ հագիւլ նիզակ մը բարձրացեր էր երկնակամարի վրա, երբ Արմաղան Հով-հաննես աղայի դռան ուռնակը զարկավ: Մարանոս Խաթուն բացավ դուռը ուրախ դեմքով: Ներս հրավիրեց Արմաղան: Մեկ-մեկ աթոռի վրա նստան և անհամբեր սկսան իրենց խոսակցութիւն:

— Դէ ասա տիսնանք, Արմաղան, պան-րի խանարմ պիրիցի՞ր:

— Էնա Տիրամէր¹⁶, որ պիրիցի:

— Է՛... ասա տիսնանք, ախշիկ խօ-րօտ ի:

— Հանմ խօրօտ ի, հանմ մօրօտ:

— Ախշիկ խօ տան ի՞:

— Տան որն ի, տան որն որն ի: Գո՞շ շնորքով ախշիկ ի:

— Է՛... պէրան խօտօտացի՞ր, կոյէշ խոտ կուկէ՞ր:

— Խօտօտացի: Քոյաֆուր վարթի խոտ կուկէր:

— Խետ զրուցիցի՞ր, լեզուն խօ կըլ-վատ չի:

— Լեզուն վարժուհու լեզու ի:

— Է՛... Բօյ-բուտու՛կ (Բուսաթ):

— Բօյն էլ տեղն ի, բուսուկն էլ:

— Ը՛... ապա խանայմ՞ի:

— Խանայմի, մաքրու պէրան:

— Է՛... աչքե՞ր: Աչքեր խօ շիւ, յան խօք խումար չեն:

— Հը՛մմ... աչքե՞ր: Աչքեր կապոտ, ընքվեր կամար, կասես ստեղծվեր ի Լեռ-նի խամար: Ձեռքեր փմփուս, ճակատ սիւլ-տակ կաթի կոն, թշեր կարմիր, շանէն կոն: Չուտես, շամես, ինն իրիշկաս:

— Է՛... Դէ որ քո՞ ասած զօղրի ի, ի՛նչիս անենք, որ շոտո նշան տենենք:

— Նշանտքս քո՞ ծեռն ի,— ըսավ Ար-մաղան,— ամմա դէա շատ պան կա անէ-լու Այն պիտի էթան հոտի Մկանց Զա-րուփու (Սրբիկի մայր) պէնի կոյուն առնե-լու՝ տիսնանք ախշիկ կուտա՞:

Մարանոս Խաթուն տաս զուրուշնոց մը դրավ Արմաղանի ափը և ըսավ.

— Դե՛, քոն տիսնամ, Լեռն քո՞ տղէն ի, թէ որ էսա պան շիտկիցի, քոն չեմ մոռնա:

— Տիւ հմէն պան ձիկ թօղ,— ըսավ Արմաղան:

Արագ մեկնեցավ և ուղղակի Խոտի-Մկանց տունը գնաց:

— Պանդի, Զարուփա Խաթին, ի՛նչիս ես, աղե՛կ ես:

— Աղէկ եմ, շնորհակալ եմ: Տիւ ի՛նչ-խես:

— Աղէկ կոյէշ կարպետ ճրից կիտենմ: Գո՞ կապրենք:

Արմաղանը խոսակցութիւն թելը դարձ-նելով, ըսավ.

— Զարուփա Խաթին, խերիք չի՞ Սրփիկ պախէք, մէկում տվէք, թող էրթան:

— Մանգլան ես չե՛մ ուղե, անկալատ ջահէլմ որ էլնի, մէկ սահմ չեմ աչկե: Մե խամար զօռ պան ի փեսա կնդնել:

— Աստու իմաքով ես Սրփիկին ըս-կուն կանաշ-կտրիճ իրիկմ կնդիր եմ, որ տիւ էլ դարմանաս:

— Էն վո՞ւ ի, Արմաղան:

— Օհանէս Աղենց Լեռն:

— Արմաղան, ես քո՞ շախկեն չեմ: Օհանէս Աղենք զո՞ր, մենք զո՞ր, Ինոնք:

¹⁶ Տիրամայր, կանանց հատուկ երգում, Տիրա-մայր Վանքի անունով: Տիրամայր Սուրբ Աստվածած-նի կամ Խաթուն Տիրամայր Վանք կղտնիկ Վասպու-րական նահանգի Թիմար գավառին մէջ:

մե կիսավնէն: Իսոնց մոռնալ մղրաղմ պանցր ի:

— Զիկ Արմաղան կասեն, մամախ մանե, ես մեկ-էրկու օրից քիս պանքի խանքարմ կպիրեմ. ես ըսկուն պիտի անեմ, որ էրկու շապաթ սօրա ախլիկ-տես կլան: Թէ որ խաղան, էլ տիւ անխիբլ շունես, ես հմեն պան կշիթկեմ: Դէ մեսա պանքի: Տիւ էլ կնա՞ ժամ, Սուրբ Սարկիսի պատկոթի անո՞ն էրկու ծունդր տիր, աղօթք արա, մամ վանի, դիւթըտ արա: Ես էլ իմ խոնար պանցուցեմ, իշալա հմեն պան աղէկ կէթան: Երկու օր հետո, Արմաղանը Հովհաննես Աղանցն տունը դնաց: Մարանոս Խաթուն ուրախ և անհամբեր, ըսավ:

— Ախլի Արմաղան, տիւ կամաթով ես, ես տէլ սեղան չեմ վիրուցի:

Արմաղանը սեղանի նստալ և փոքր գավաթ մը գինի խմել հետո, ըսավ:

Հմէն պան շիտկիցի: Կլան կիրակի հաննա՞ տիւ կնա՞ ախլիկտես: Թե վոր կուղես Կուշոյի Մարան¹⁷ էլ խետտ տար: Էրկուտ կնանցեք, ախլիկ տիսեք, թէ որ խաղանք՝ աղանջին կինը՞ կամ մատին մատնիկմ նշան տրէք, էլէք իկէք: Դհա սորա նոր օլին-նոր պանքին, նշանտրէս կանեք:

Ավելորդ է ըսել, որ Մարանոս Խաթուն Լեոնի սիրույն ոչ մեկ ջանք կխնայե՞ր նշանտուրը հաղորդենելու համար: Լավ գիտեք, որ Լեոնը աղանջան սիրահարած է: Ուրեմն շատ երկար-բարակ շտա՞ծեց:

Ա. Խ. Զ. Ի. Կ. Տ. Ս.

Հարմար կեսօր մը, իր հետ առնելով Կուշոյի Մարանը, Խոտի-Մկանց տունը գընաց: Տեսալ աղանջիլ Կուշոյի Մարան իր կողմն ըրալ լրացուցիչ գովասանքներ Լեոնի մասին: Տիկին Զարուհին ալ ըստ կարգի գովեց իր աղանջան լավ հատկութիւնները: Մարանոս Խաթունը հայտնեց իր հավանութիւնը և որպէս առժամյա նշան՝ իր աղանջի մահմուտին ոսկի գինդը՝ աղանջ

աղանջին կախեց, որպէս նախանշան, աղջկան երեսը համբուրեց և վերադարձաւ:

Երեկոյան Հովհաննես աղան, հոգնած ու պարտասած, տուն եկաւ: Հաղիվ ընթրիքը լրացուցած, Մարանոս Խաթունը ըսավ:

— Կիտե՞ս ինչ, մա՛րթ, Լեոն նշանիցի Խոտի Մկանց Արփիկի խէտ:

— Տիւ քո՞ կամք արիւ: Լաճուտ խամար կինի ճարեցիր: Հմէն ախլիկ որ կինի էնի, սարանդօստիկն էլ խաթին կէնի: Սպասե՛ք տիսնանք:

— Մարթ աստուծօ, աղէկ-կէշ, ըղն-ճանք կանեմ, իմ խաթը մի կտորե: Խոմար չե՞ն:

— Հը՛մ... դէ մկա կնա՞ փանն ճարի, տաս-քսան ոսկի իրար մօտ պե, որ խարունիս անես: Զիկ Օհանէս Աղա կասեն, ես ճիշ խարսնիս կուղեմ, ես իմ աղութին չեմ կիրցուցե պատիկ խարսնիս: Մորէ մէկ լաճմ ունես, աշխար աննա, պանքկամներ, տրուկըցներ հմէն խարսնիս պիտի կանչեմ և ըսկուն ճիշ խարսնիսմ անեմ, որ աշխար հմէն ծէն տա:

Հմէն կլախ խըղիղ շի կլան կն՞ պիրե:

Հմէն կլախ մէր շի կլան լաճ պիրե:

Հաջորդ կիրակի օրինավոր նշանտուր օր նշանակված էր: Հովհաննես Աղան վարձած էր Գևորգ Ախպոր երկձի կառքը և երեկոյան մութը կոխելուն պէս, ծխատե՛ր Տեր-Պետրոս քահանան, կնքահայր Գրիգ Լարուկունի Պողոս, Հովհաննես Աղան և իր կին Մարանոս Խաթուն կառքը նստան, որ սուրաց և Խոտի-Մկանց տան առաջ կանգ առաւ¹⁸:

Խոտի-Մկանց դուռը բացվեցաւ: Նախ Տեր-Պետրոսը ներս մտաւ, որուն հետեւեցան մյուսները և նախապէս պատրաստված սենյակի կախուղ բազմոցներու վրա նստան (աթոռներու սովորութիւն չկար այն տանն):

Խոտի-Մկանց Ավետիս, հարսնու Սրբիկի հայրը, բարի գալուստ մաղթեց հյուրերուն և ապա սկսան խոսակցութիւններ սարեն-ծորեն: Օրվա լուրերուն վրա ծանոթեցին:

¹⁷ Կուշոյի Մարան, հասակ առած էին մը, ամուսինը մեռած: Սա ալ միջնորդ Արմաղանի նման ամեն տուն կտորե ու կլիւր, որոշ պատրվակներով: Բամբասանքի մասնագետ էր և շատ մը ընտանիքներու գաղտնիքներուն ալ ծանօթ:

¹⁸ Հին տաններ արգիլված էր (գլուխներու մեջ նույնպէս փնսացուն նշանտուրի տանիլ): Փնսայի մոր պարտականութիւնն էր քննել հարի գեղեցկութիւնը, բնավորութիւնը, հասակը և ստուգել ուրիշ անհրաժեշտ կարեւոր կետերը:

բացան, քե քեռին (Ռուսիա) շուտով վան
պիտի գրավե:

Կես ժամ հետո հարսնացու Սրբիկը, հա-
գած իր լավագույն զգեստները, ձեռքը ափ-
սե մը, որուն վրա շարված էին օղիի լե-
ցուն զավաթներն և անուշեղեններ, առա-
ջացավ համրաքայլ և Տեր-Պետրոսին սկսե-
լով, հյուրերուն մոտեցավ մեկիկ-մեկիկ և
մատուցց օղի: Այս ատենն էր, որ հյուրերը
կողմնակի և աչքի ձոթով հարսնացուն տես-
նելու և վերեն- վար ղենելու պատեհու-
թյունը ունեցան:

Տեր-Պետրոս խոսք անկելով, ըսավ.

Հովհաննես աղա, կարծեմ ա՛լ ժամա-
նակն է, որ սկսինք նշանտուքի արարողու-
թյունը:

Հովհաննես աղան հպարտ շեշտով մ
ըսավ.

— Տէր հայր, նշան հանգի ի, անի, տիս-
նանք Ամիդիս աղէն ուր ախշիկ կուտա՞
մեր Լեռնին:

— Տալու-շտալու խոսք չեմ անե: Ախ-
շիկ մարգկլորտի պէս ախշիկ ի: Մեռով-ոտով
ախշիկ ի: Ես իմ զավակներու պէրան լի-
մոն քյամիր եմ, կյրել-կամրամլ սովրցու-
ցիր եմ և էրկթէ ձեռքով մեծցուցիր եմ, կի-
տեմ որ պատվավոր են: Մէնակ էսքան կա-
սեմ, որ աստված շնախավոր անի և էր-
կուան էլ մեկ պանցի ծերանան:

— Եթէ այդպէս է, դէ Մարանոս հա-
թիւն ընցի ու պարտքտ կատարի,— ըսավ
Տեր-Պետրոս:

Մարանոս հաթուն վեր ելավ, Սրբիկին
մոտեցավ, որ սենյակի դռան մոտ անկյուն
մը կանգնած էր, դիտեց Սրբիկի հասակը,
քննեց երեսները, աչքերը ձեռքերը և հոտը-
տաց բերանը և աղջկան լսողությունը փոր-
ձելու համար ցած ձայնով քանի մը հար-
ցումներ ըրավ: Ապա զրպանեն հանելով
յաղովթ քարով ոսկյա մատանի մը և կուրծ-
քի ժամացույց մը, Տեր-հոր տըվավ, որ
օրհնե:

Տեր-հայրը կարգաց պատշաճի աղոթքը,
խաչակնքեց, օրհնեց մատանին, ժամա-
ցույցը և քանի մը օր առաջ Մարանոսի
Սրբիկի ականջին կախած մահմուտին զըն-
դերը: Մարանոս հաթուն մատանին Սրբի-
կի մատին անցուց և ժամացույցն ալ անոր
կուրծքին կախելէ հետո, համբուրեց Սրբի-
կի ճակատը և բարեմաղթեց:

— Աստծոաց դիւմբլ կանեմ, որ ծեռտ
շոր զանեն՝ տա՛լար դանա և սէրն ի տա-
նեք պակաս չէլլնի, Սրբիկ ջան:

— Սիմոն Մերունի ըլլան և անթառամ
պսակին արժանանան,— ըսավ Տեր Պետրոս:

— Ծերմակ մօրուք և սիվտակ մազ էլ-
նեն երկուքն էլ,— ըսավ Գլիր Պողոս:

Գինիի և օղիի զավաթները նորեն սկսան
շրջագայիլ: Հյուրեր սկսան իրենց բաժակ-
ները ավելի հաճախ պարպել, շարունակե-
լով բարեմաղթությունները:

— Մտնեն մառան, ձեռ զանեն վոսկու
աման,— բարեմաղթեց հարսի մայրը:

Երեկոյան ուշ ատեն Հովհաննես աղան,
իր կին և իր հյուրերը տուններին վերա-
դարձան քայլելով: Մարանոս հաթուն շտա-
պեց Լեռնի նշանայնյալը: Լեռնը քուն կեղ-
ծելով կխմփար:

— Լեռն ջան: Նշան¹⁹ տրինքյ: Հմէն
պան լմեցավ: Դէ արե ճակատտ պաքյն, մ
վորտիս: Աստված ուր աչք բյ՛ն վիրվուց
պակաս ջանի, բալա ջան: Պանով փսայլի,
բյ՛ն բարն ուտեմ, նոր մեռնեմ:

Հաջորդ առտու Հովհաննես Աղան ալ,
նախաճաշին առաջ Լեռնի ճակատը համբու-
րեց, շնորհավորեց ու ըսավ.

— Աստված շնախավոր անի, տղաս:
Յոթ որտինքով սեղան նստես Թոններով
շրջապատվես և խօրտ տան ճրաքյ վան
պխես: Մէրտ անդիրք կասի, դէ փսայլի,
բյ՛ն բարն ուտեքյ, նոր մեռնեքյ:

* * *

Հովհաննես Աղան, բարեպաշտ քրիստոն-
յա և ընդունված սովորությունները հարգող,
նախ և առաջ Առաջնորդարան գնաց հարս-
նիքի արտոնագիրը ստանալու համար: Ա-
ռաջնորդարանի համեստ և երկարամյա

¹⁹ Վասպուրականի գյուղերու մեջ սովորություն
էր, որ նշանտուքին երկու կամ երեք շաբաթ հետո
հարսի հայրը փեսային այցելության երթար և կար-
գադերն զխավաճառքի խնդիրը, որ սովորաբար պա-
րարտ ոչխար մը կլլար և կկռվոր զանակի կամ զան-
կի ոչխար: Եթե հարսի հայրը ոչխարի մը հետ տուն
վերադառնար, կնշանակեր, քե ամեն բան կարգին է
և ամուսնությունը շուտով տեղի պիտի ունենա: Իսկ
եթե փեսայի հայրը ոչխար մը տալ զգկամբ և հար-
սի հայրը ձեռնունայն վերադառնար, այն ատեն աղը-
ված նշաններ, մատանի, ականջօղ և այլն ետ կզերկ-
վէին և խղումը կատարյալ կլլար:

բարտաշարը՝ Մովսես Մալույանը, զրեց ու Հովսեփի եպիսկոպոս Սարաճյանին ստորագրել տվավ արտոնագիրը և տամարներու մեջ պատկանյալ տեղերը արձանագրելն հետո, զայն Հովհաննես Աղային հանձնեց ու բաժնավ:

— Աստված շնորհավոր անի:

Հովհաննես Աղան վճարեց 50 ղուրուշ Առաջնորդարանին և արտոնագիրը ծոցը դնելով, տուն վերադարձավ:

Վանի մեջ Պահր և Տոն օրերուն պսակը արգելված էր: Զորեքշարթի և ուրբաթ պահրի օրեր էին, շաբաթ իրիկուն և ալ կիրակինս մոտ էր, որովհետև շաբաթ իրիկուն կիրակի օրվան մոտ էր կհաշվվեր, որմե առաջ եկած էր կիրակն մոտ աստվածունը, որ մեր մամիկները կանալ-կտրիճ կիրակնամոտ կկոչեին և անոր անունով կերգվեին, կանիժեին, կաղոթեին: Շատերն ալ շաբաթ գիշեր ճրագը վառ կպահեին մինչև առավոտ, որովհետև կհավատային և կպնդեին, թե արգելված օրեր ամուսնացողները կհիվանդանային, կմեռնեին առանց իրենց մուրազին հասնելու: Ըստ քաղաքական հասկացողությունից, ամսվան յուրաքանչյուր օրն ունի իր բարիքը ու չարիքը, որոնց պատճառները կենդանակերպերն են, որոնք կիշխեն օրերու վրա և կընեն բարի ու չար ազդեցություններ:

Հովհաննես Աղան նկատի ունենալով ավանդական սովորությունները, հարսանիքի օրը նշանակեց Որթկաթողի կիրակի երեկո, որովհետև կիրակի երեկո կհաշվվեր երկուշաբթի օրվան մոտ էր³⁰:

Նա հարսանիքը փալուռն և շքեղ ընծայելու համար ոչ մեկ ջանք խնայեց: Գնեց երկու ուշար, ապսպրեց Շահբաղիի համբավվոր գինի և Մեյխանաչի Սեդրակին ալ մեծ խասիլին օղի: Վարձեց հմուտ հացթուխ տիկին Անթառամ, որ մեկ օր ամբողջ լավաշ հացեր թխեց: Մարանոս Խաթունի խաթր համար կյորկանց Վոսկոուն ալ քա-

նի մը տեսակ բաղարչներ պատրաստեց, իսկ հարսանիքի տեղումը խոհարարի բոլոր գործերու հոգը Յնիոր Յլտան Բաղասրին հանձնվեցավ:

* * *

ՀԱՐՍՆԵՐՆԵՐՈՒ ԳՆԱԿ.—Հարսանիքի որոշյալ օրեն շաբաթ մը առաջ, Հովհաննես Աղան հրավերներ ու հրավիրագրեր զրկեց իր հետեյալ բարեկամներուն ու դրացիներուն, որք էին:

Կյգիր-Արքեի Պաղոս.—Նա ընտրյալ կնքահայրն էր: Ծմած թթով, խոժոռ դեմքով, հսկայամարմին անձ մը, նախապետական և բաղմանդամ ընտանիքի զկալորը և Արարքի գգիրը: Իր խոսքը թաղականական է, թաղային ուրիշ խնդիրներու մեջ կշիռ ունենի, իսկ իր անձը արարքցիներեն շատերուն հարգելի:

Սխաշ վարժապետ.—Հակառակ տեղական սովորության, այս վարդապետը վաճառքերու մեջ չէր բնակեր, այլ Այգեստան, եղբոր տունը: Կսեին թե համարձակի էր կնոջ մը յալտերուն համը նախի, օխէ՛ր... օ՛խ... կամ օխա՛շ բացականչություն մը ընելով, որմե ստացեր էր օխաշ մականունը:

Կանա՛մ Ու.—Վարդապետ մը կեսկ գյուղացի, վերջին կաթողիկոսության հարած: Իրեն գործ մը կառաջարկվի, գործը կատարելուն անվստահ, կըսե՛՛ կանա՛մ որ, ուժ ունի՛մ ընելու, և կստանա Վանա՛մ Ուրա մականունը: Իր ճիշտ անունը ու ազգանունը շատերուն անծանոթ էր:

Տէր Մոլիկ.—Այս քահանան Մոկս գավառն էր: Քուրդերու նեղություններեն ազատ մնալու համար Վան ապաստանի էր և կընակեր Կյոր-Գար թաղամասը: Հոժարակամ և առանց վարձատրության կմասնակցեր Արարք եկեղեցվո ժամերգություններուն: Արտաքո կարգի երկարահասակ (7,5 ոտք) ըլլալուն համար ստացած էր Ձող կամ Ձողի մականունը:

Տէր Աջալէն.—Կեմ գյուղի քահանան, Վան, Արարուց շրջանը ապաստանի էր որոշ խնդրով: Կքահանայագործի Արարք եկեղեցին առժամյա կերպով, Եկեղեցվո մաղթանքները և Ավետարանը շատ արագ կարդալուն կամ արտասանելուն կամ մաղթանքներու բառերը կու տալու համար ստացեր էր Տեր Աջալա մականունը:

³⁰ Այս համոզմուն վրա էր, որ ոմն Ստեփան Մանգույան, յորեքշաբթի և ուրբաթ երեկոներ կուծեր պահքը, առարկելով, թե հաշույդ օրվան աստված արդեն եկած են, արժանանալով սպառնալիքներու և քախսակերք ու ռաճիկ ծաղրական մականուններու: Ինչու հետոն երբեք, երբ նույն սովորությունը կար մեր մեծ ու փոքր զապիկի օրերուն, երբ պահք կուծեին խթան երեկոներ:

ձգեալն՝ Միեաւ.—Ամուրի, հեզ, կար-
ճահասակ, նիհար ծերունի մը: Կհագնէր եր-
կար ու կտրված կամ բաժնված ծոպերով
պնդնալոր զպուն մը: Կաղոթէր զիշեր ու
ցերեկ: Հանրութեան մեջ կերէր միայն Մեծ
Պահոց օրերուն: Այս խեղճ, թույլ ու դեղ-
նած ձգնալորը ունէր եղանակավոր խո-
սակցութիւն:

Սուռ Օրման.—Հայ դերվիշ մը, բայց էր
նշանավոր յուշանկարիչ: Իր նկարած պատ-
կերները հարգի էին և ոմանք ալ եկեղեցի-
ներու և վանքերու սեղաններու վրա տեղա-
վորված: Ունէր արեւադաշտի անխնամ մորուք,
կհագնէր ցնցոտիներ, քալած ժամանակ
միշտ դետիկ կնայէր՝ ձեռքերը զրպաննե-
լուն մեջ: Պարապ ժամերուն փողոցներէն
սիկարեթի մարած ծայրեր կհավաքէր, իսկ
աշնան երբեմն դաշտ կելլէր և իրենց արտի
շոր խոտերն կամ փուշերը կայրէր, հողը
բեղմնավորելու նպատակով, ստեղծելով
մուխի երկար պալաններ:

Սալախ Խաչօն.—Երկարահասակ, բարե-
ձև, լավ հագնված, ճերմակ մազերով անձ
մըն էր: Հավիտյանս-հավիտենից Արարք
եկեղեցւոյ թաղականն էր կամ հոգաբար-
ձուն, միշտ կնտրվէր: Թե ո՞վ կնտրէր զայն՝
ինծի մի՞ հարցնեք, միայն սա լավ գիտեմ,
որ միշտ կգանգատէր այսպե՜ս՝ եղբայր, ազ-
գին ու եկեղեցիին՝ ձրի ծառայել են հոգինիս
կելլալ: Այո, և հոգաբարձու ընտրվելու հա-
մար ալ հոգի կուտար:

Աման Եփեղ Մանուկ.—Բրուտ, միակը
իր արհեստին մեջ, ունէր քանի մը էշեր:
Դատերեն որոշ հողեր կկրէր այդ էշերով,
կշինէր ու կծախէր զանազան տեսակ խե-
ցեղէն կանանչ ընարակված ամաններ: Ծառ-
րակի մասնագետ էր և երբեմն երկու կամ
երեք քար կհանէր՝ խաղի ատեն:

Վըրջի Կարճ.—Մականվամբ՝ Պաշու:
Անդադատ, անգործ, ամուրի, տղետ շա-
տախտ մը, որ միշտ ապուշ ունկնդիրներ
կփնտրէր, և շատ անգամ ալ անոր կուրծքը
կուռէր և մեծամիտի հովեր կառնէր, երբ
դրացիներ զինք ծաղրելու մտք կըսէին՝
Կարո՞, եկուր տեսնենք, ի՞նչ լուրեր կան:
Կարոյի մոտ լուրեր պակաս չէին: Անոր

լուրեր միայն ու միայն հեղափոխական լու-
րեր էին: Նա միայն հեղափոխականներով
կհետաքրքրվէր կամ հեղափոխական լուրեր
կհնարէր: Կարոյի խոսքով Ռուսիան շուտով
Վան պիտի գրավէր: Ըստ Կարոյի, ամեն
շաբաթ Պարսկաստանն զինված խումբեր
զաղտնի ճամփա կելլէին և Խանասորի կամ
Բարդուղիմեոս վանքի կամ Սարայի գծով
Վան կհասնէին, զենքեր կփոխադրէին Վան,
և զինավարժութիւն կնեին: Գիտէր նոր
եկող երևակայական խումբերու և կովկա-
սահայ խմբապետներու անունները: Անոր
խոսքով մինչ մեկ-երկու խումբեր Վան
կհասնէին, Վանն ալ ուրիշ խումբեր Պարս-
կաստան կմեկնէին զենքեր բերելու: Կարոն
կպատմէր իրարու ետեւ սահուն լեզվով և
զոց ըրած ոտանավորի պէս, որովհետև
միևնույն երևակայական լուրերը այնքան
կրկնած էր, որ զոց գիտէր՝ այսինչ խմբա-
պետը իր խումբով Բարդուղիմեոս վանքն
ճամփա ելավ երեկ և շուտով Վան կհասնի:
Սարայի դաշտի վրա այսինչ խումբի զին-
վորներ մոսկններով զինված օր-ցերեկով
զեպի Պարսկաստան գնացին: Շաբաթ մը
առաջ այսինչ խումբ 23 սնդուկ հրացանի և
ատրճառակի մասեր ներմուծեց Վան: Այս-
ինչ խումբը մեկ շաբաթ ի վեր Վարազա
վանքի լեռներու վրա զինավարժութիւն
կընէ, և այլն, և այլն: Սուտեր և երևակա-
յական զեպեր ու վրձուր: Կարոյի համար
մուկը ուղտ շինել մեծ բան մը չէր:

Կոկէ Խաչօն.—Երկարահասակ, տղեղ և
աղքատ հագնված, բաղմանդամ ընտանիքի
հայր: Տան մեջ կտավ կզործէր, և հազիվ-
հազ իր ընտանիքը կպահէր: Երբեմն եր-
բեմն ստիպված էր կողմնակի գործեր ալ
ընել: Փոքր զմեկով ոչխար կմորթէր, կեր-
թէր և կմաքրէր երկու ղուրուշի համար: Այդ
երկու ղուրուշը վայրկեանայեւ փուռը կտա-
ներ, երկու օխ հաց կզնէր և ուրախ-ուրախ
տոն կերթար, ճանապարհին ուտելով զնած
ցամաք հացին գրեթէ կեսը²¹:

Դեմաղկյան Հակոբ.—Մականուն՝ Կլորա-
կոտ: Անգրագետ, և թաղի մուխթարը, հար-
կահավաքը: Այս մարդու համար զուր քո-
յութիւն չունէր: Կարմիր Սուլթանի փնտրած

²¹ Փար հանել.—Երբ ճատրակ խաղող մը հազ-
թողի համար կհանէ և փոխանակ 16 քարերու, 14
կամ 13 քարեր կշարէ իր կողմը, ի զիմաց հակառա-
կօրի 16 քարերուն և կհաղթէ, քար հանող կկոչվի:

²² Վանի բարբառով կար Կոկէ Խաչօն ասացված-
քով: Ամեն անգամ, որոնք փութեան հաց զենել հետո,
ճանապարհին հացը ուտելով տուն կրբեին, Կոկէ
խաչօն կկոչվէին:

մարդն էր: Իր ամենօրյա զործն էր, առտուն
կանուխ ոստիկանատուն երթալ, ոստիկանի
մը ընկերանալ, հայերու խանութներու առ-
ջե տնկվիլ ու հարկ պահանջել կամ հավա-
րել: Ով որ ոստիկանն վախճարու և վճարեր,
կառնէր դրամը և իր գրպանը կզնէր, քոշան
կոշված թուղթի մը անվաճիւր կտորը տալով
վճարողին: Իսկ այն հայ խանութպանը, որ
դրամ չունէր կամ կոժկամներ վճարել, աչ-
քով-հոնքով իր կողքին կանգնած ոստիկա-
նին նշան կնէր, ըսելով՝ իշերի էթ: Եվ ոս-
տիկանը շատ զժպարութեամբ ժամանակ
կուտար խեղճ խանութպանին իր խանութը
զոցելու և առաջնորդէր ոստիկանատան նեղ
ու մուկ խուցը: Հակառակ հայ մայրերու
ծանր անեծքներուն, Կլորակոտը աշխույժ
էր, առողջ և բուրբաժ 50 տարեկն: Արժա-
նացած Տաճկի-Ճրագ և Կլորակոտ մական-
անուններուն՝ թրքասեր ըլլալուն և կլոր գլուխ
ունենալուն համար:

Կապաբուկ.—Իր բուն անունն ու ազգա-
նունը ինծի և շատերուն անծանոթ, 55—60
տարեկան, լճացած աչքերով, կարմիր կո-
պերով, հաղթանդամ և բարձրահասակ մարդ
մըն էր: Կիսաղցներ տիկնիկներ, ձեթի ճրագի
լույսով՝ ճերմակ սավանի վրա ցուղաց-
նելով ստիկներն իսամաճիկներուն, որոնց
կմախքները շինած էր կաշիի ու փայտի
կտորներէն և շարժական առանցքի մը վրա
ամրացուցած՝ պատրաստ որևէ կողմ դարձ-
նելու: Թեև անգրագետ, բայց սուր հիշողու-
թյուն ունէր: Կհշանար մտքեր, կստեղծէր
խամաճիկներու երկսեռ տիպեր: Տեսնելու
բան էր, թե ինչպիսի վարագույրի մը ետև
նստած, անտես հանդիսականներէն, երեք
ժամ կամ ավելի, ձեռքերով կխաղցներ ա-
նոնց ստվերները սավանի վրա և առանց
նոթագրութեան կուտար հարց ու պատաս-
խաններ անոնց սեռին ու տարիքին համե-
մատ, կեղծելով իր ձայնի ելեղներն ալ,
զուրս բերելով սիրային վեպ մը կամ ըն-
տանեկան տգեղ պատկեր մը:

Իր խամաճիկներուն հերոսն էր Կարա-
գլուխ²³ ըսվածը և իր բոլոր տրամախոսու-
թյունները կնէր թուրքերենով, թրքական
հանգեսներու և տոներու ատեն փնտրված
անձն էր, գիշերները տաճիկներուն զվար-

ճացնելու համար, մանավանդ Բայրամի
օրերուն: Նա Վանն զուրս ելած չէր, մա-
րիտենքներու ձեռքն ու տարազը, սննդ
բերան դրված երկար տրամախոսություննե-
րը բոլորն ալ իր մտքի արտագրություննե-
րն էին, շարաշար ինքնաշխատութեամբ
զարգացուցած:

Դարասնֆեյյան Պողոս.—Մականուն՝ Մազ-
գաթ Մալի.—Համարձակախոս, զվարթ և
կարճահասակ ծերունի մըն էր: Կիսոսեր
Պոլսո Քրիպար» թուրքերէն: Կպտտեր հա-
յոց թաղերը օգնականի մը ընկերակցած և
կծախեր տնային առարկաներ, ցինկե ա-
մաններ և այլն: Երբեմն ալ բարձր ձայնով
կկանչէր՝ «գեղեցիկ պիտույք»: Դավոյի
ղեպքին, գործեն տուն դարձին, թուրքեր
կրնեն զայն և խռովողը կես կտրած
կձգեն, որ շարժարկելով մեռնի: Կերպով մը
ինքզինք իր տունը կձգե և կնոջ ու աղջկան
բազուկներուն մեջ կմեռնի քանի մը ժամն:

Խորեհի Մեռն.—Արարք գլուխը գլուղա-
պետ: Միականի, միաթիւ, արագաշարժ և
զործոնյա: Նահապետական բազմաբան
ընտանիքի մը զվաճար: Ունէր հրամայե-
լու ազդեցիկ ձեռք և իր հրամանները շու-
տով և լռելայն կկատարէին իր ընտանիքի
անդամները: Խոժոռ էր և շղային:

Կյոռուոյի Մովսիս.—Կաղ, կարճահա-
սակ, զարձ: Կիսոսեր երգեցիկ տոնով: Կբա-
լեր երկու ձեռնափայտով՝ իր կոններ խաղ-
ցնելով կամ քարշ տալով: Անգրագետ ծե-
րունի մը: Բեկարույթի անուն հանած էր և
երբեմն ալ վհուկություն կնէր:

Լըմբցու Մովսես.—Բարի, հեզ, մեղմա-
խոս, սիրահոժար և մատչելի անձնավորու-
թյուն: Թեև անգրագետ, բայց կենդանաց
և մարդոց շատ մը հիվանդութիւնները
հմտութեամբ կրուծէր և աժան վճարքի մը
փոխարեն կպատրաստէր իր ղեղերը բույ-
սերն ու արմատներն: Անոր ղեղադիրները,
որոնք երեսներ պիտի լեցնէին, կորսվեցան,
ղեղագիրներ, որոնք կրնային արդի գիտա-
կան բժշկներն ալ զարմացնել:

Խամբոյի Լորթոն.—Համբավալոր իր
ուժով: Ծանապարհներու մասնազետ գիշեր
ատեն: Միախոտի անվախ մաքսանէր:
Կառավարական օրենքներ ոտնակոխող
հայնդուք մը: Միշտ և զաղտնի ատրճանակ
և դանակ կկրէր իր հագուստներու ծալքե-
րուն մեջ: Բանտարկված քանի-քանի ան-

²³ Կարագլուղ խաղցող—վերջն էր երկրորդ մա-
կանունը զարձակ:

գամները: Քանիցս ալ Ռուսիա փախած: Տե-
սա օր մը, թե ինչպէս իրենց հիվանդ և
ճանապարհին մնացած էջը շալկած տուն
բերեց և թե ինչպէս այս անսովոր տեսա-
րանին ի տես, Արարուց Մեղդանի շները
բայլ առ բայլ իրեն հետեկեցան, հաշելով:
Անոր երգած «Գարահիսար լեռան կրծքին»
երգը մեկ հատիկ էր:

Կոտիկ Սեփան.—Մականունն ինչպէս
դրոշմով.—Կըսեին, թե շատ հարուստ էր,
բայց ցույց չէր տար: Ունեւ հակա իրան մը,
Տարիքը 60 անցած, բայց աշխույժ: Առանց
իր իշուն ոչ մի բայլ չէր աներ:

Շիլ Մարկոյ.—Շիլ ու կարմրած աչքե-
րով մեկը, 50 տարիքը անց: Խոժոռ ու ան-
մատչելի: Կհագնեւ պղնձավոր, ծոպերը
կտրած փեշերով զգում²⁴: Չափազանց ժլատ:
Քերթովիկ Խեֆլիմ.—Կարճահասակ ու
ծուռվիկ: Կպտտեւ գալազանը միշտ ձեռ-
քին: Կըսեին, թե բժիշկ է:

Կումարբազ Փանոն.—Միջոցներու մեջ
խտրութիւն չընող խեցեվաճառ մը: Ունեւ
մասնագիտութիւն թուրդերուն կոտրված,
պատռած խեցիներ վաճառելու: Միշտ բախ-
տախաղով զբաղած: Երբեմն ալ մոնետիկի
դեր կկատարեր: Կորսված էջ մը կամ եզ մը
գտնելու համար փողոցն-փողոց կանցներ
բարձրաձայն կանչելով՝ է՛ջ մը կորսված է,
ե՛զ մը կորսված է, գտնողին մեկ մեծիտ
պարգև կա:

Խանկէ կյէլարֆ.—Ցոթանասուն տարինե-
րու բեռը շալկած, բարեկեցիկ ու պատ-
վավոր ընտանիքի մը հայրն էր: Իր ներկա-
յութիւնն ու խոսքը թաղային խնդիրներու
մեջ միշտ կհարգվէր:

Կոկազի Սանասար.—Հսկամարմին, օժ-
տյալ մեծ ուժով: Միշտ վերարկուն ուսին
կնետեր, քան թե կհագներ: Կհիշեմ իր հսկա

տները: Թե իր ոտներուն համաշափ կո-
շիկներ ուրկն կգտներ, չգիտեմ: Տարիքը
վաթսուին մոտեցած, միշտ ուրախ:

Մուկէկ Նյան.—Երկաթագործ, երկարա-
հասակ, բարձրամիտ մը: Սա ալ ունեւ բա-
զուկի հսկա ուլժ, և ակնհայտին՝ Արարուց
հրապարակի վրա:

Ուքա Խաչիկ.—Պերպեր Խաչիկ ալ
կկոշվեր, թե շատ քիչ անգամ սափրիչու-
թիւն կըներ: Իր մասնագիտութիւնն էր
ատամներ քաշել, արյուն անել, և խորոզ
հիվանդութենէ բռնվողները բուժել: Խանութ
կամ պաշտոնատեղի չունեւ, բայց իր վար-
պետութիւն համբավը հաճախորդները իր
տունը կբերեր: Ոչ թմրեցուցիչ դեղ ունեւ և
ոչ ալ թմրեցուցիչ դեղերու մասին զգա-
փար: Միշտ խոժոռ էր և լուրջ: Մեջքին կկա-
պեր քանի մը բաժանմունքներ ունեցող կա-
շիկ գոտի մը: Անոր մեջ կշարեր մեկ կամ
երկու ածելի: Ատամնաքաշ երկու տեսակ
աքցաններ, կեռ երկաթ մը, սանտր մը,
փոքր կոտող մը և վեց նշտրակներ պարու-
նակող արուլքի քառակուսի տուփ մը:

Ատամ քաշել ուզող հաճախորդը պար-
զուկ աթոռի մը վրա կնստեցներ: Իր մեկ
ոտքը նույն աթոռին վրա կգնէր՝ հաճա-
խորդին ետը: Վախցող և կիսալաց հաճա-
խորդներուն հոգեբանութիւն կգործածեր,
ըսելով. «Գիտ ինչո՞ւ կվախնաս, նս պիտի
վախնամ, որ ատամը պիտի քաշեմ: Դու
ինչո՞ւ կուլաս, տխրելու դժվարութիւնը իմս
է, ոչ թե բուկդ: Զվարթ և կարճ պատմու-
թիւն մը կպատմեր, հաճախորդին զուլթը՝
աթոռին վրա դրած իր ոտքի ծունկին վրա
կհանգնեցներ և կխնդրէր հիվանդն, որ բե-
րանը բանա: Քանի մը անգամ բերանի այս
ու այն կողմը կնայեր, կեռ երկաթով փտտած
ատամը կստուգէր և անգամ մը որ աքցանը
հիվանդի բերանը մտներ ու բռներ ակունք,
պարապ չէր վերադառնար, հոգ չէ թե հի-
վանդը որքան շարժեր կամ ալլանդակ ձայ-
նով պոռար: Ապա քաշված ակոյալի փո-
սին մեջ քիչ մը բամբակ կթխէր, իր վարձ-
քը կառնէր ու ճամբու կղներ: Եթե մեկը
իրեն հարցներ՝ ութա Խաչիկ, կրնա՞մ քու
ատամներդ տեսնել, պիտի նկատես, որ
Խաչիկի ատամներու երեսուներկու սենյակ-
ներ վաղուց ամայացած էին ու իրենց
վարձերը վճարելն դադրած:

Արյուն անելու համար երկու միջոց ու-

²⁴ Առաջին անգամ վանի մեջ եեզ տափատ հա-
գած է հայրս՝ Կարապետ Տեր Մկրտչան, արժանա-
նալով սովորներու, ծաղրանքի և մականուններու,
օրինակ՝ Չաթալ Տաղդին (երեկուղ ստեղծին) և
այլն: Զորս օր հետո հորս արհեստակից (ռակերի)
Խանիկյան Մկրտիչը կսկսէ հագնել եեզ տափատ,
նույնպէս արժանանալով ծաղրանքներու: Ապա տա-
փատը կամոց-կամոց կընդհանրանա: Դեռ մինչև մեր
օրերը կային անհատներ, որոնք կհագնէին փեշով
երկար զգուներու: Այս անգամ ալ անոնք կարժանա-
նային ծաղրանքի, որպէս հին սովորովի կառողներու:
Նույնիսկ փեշով անունը մականուն դարձավ Տիգրան
անուն մեկի մը:

ներ: Առաջին՝ տղրուկ կփակցներ և կթողուր, որ անոնք ծծեն հիվանդի արյունը մինչև որ հագնան ու ինքնաբերաբար վար իյնան: Երկրորդ միջոցն էր հիվանդի թևի երակին նշտակ մը դարնել և որոշ քանակությամբ արյուն հոսեցնել, հետո դադարեցնել հոսումը՝ վրան բամբակ դնելով ու կապելով:

Խորոզ հիվանդություն կրուժեր այսպես: Հիվանդին նակատեն քիչ հեռու գլուխը կածիւր հավիթաձև կոտորը ածիված տեղին վրա կդնէր, կոտորչի բարակ կողմը իր բերանը դնելով, կոտորչի միջի օդը կծծեր և այդպիսով հիվանդի գլխի վրա ուռուցք կգոյացներ: Կնշտակներ այդ ուռուցքը, կոտորը նորեն վրան կդնէր, բերնով նորեն օդը կոտորչին կծծեր և գլխի այդ մասնն արյուն կհաներ: Ապա կոտորը վար կառնէր, կոտորչի տակ հավաքված ու լեղացած արյունը կմաքեր, վրան բամբակ կդնէր և կպատվիրէր հիվանդին երեք օր պաղչեղով մածուն ուտել: Ուսթա խաչիկ խորոզ եղող հիվանդներուն դաչելի առաջ, անպայման գիտնալու էր, թե ե՛րբ հիվանդացեր են: Եթե հիվանդը ուշ մնացեր է, 24 ժամ վրան անցեր է, այդ հիվանդին չէր դաչեր, առ ոչինչ համարելով ամեն թախանձանք: Կհիշեմ, թե ինչպես մոր մը աղաչանքին պաղարյունությամբ պատասխանեց. «Մարէ, Վերէն ընցեր ի, ինչ էլ անեմ, ինչքան էլ արյուն առնեմ, փա՛րա՛ լանե, երեք օրեն պիտի մեռնի, չորս օր անա՛ջ հոս բերելու էիր տղադ: Եվ իր գուշակությունը իրականացավ: Այս հիվանդությունը, որուն գիտական անունը ինծի անծանոթ է, խոչափողի հիվանդություն էր և միայն 5—10 տարեկան մանչերու հատուկ: Հիվանդը կգծվարանա խոսիլ ու շընչել: Խոսած ժամանակ կարծես խոչափողը կքերվէր և խոպոտ ձայներ կհաներ: Վանեցիք կըսէին՝ հիվանդը աչուրի պես կխոսի: Հիվանդություն մը, որ 4—5 օրեն հիվանդը կլեկղդէր, թեև հիվանդը անկողին մտնելու վիճակին չէր և կրնար ոտքի վրա կենալ, քալել, ուտել և խմել:

Ճնոթոյի Ակառ.— Լճացած աչքերով և ձնոնփայտով հազիվ ըսող ծերունի մը:

Տոնչի Պատու.— Ունեի սեփական հացի փուռ: Օրական քանի մը անգամ Բագոսի տաճարը կմտնէր երկրպագելու, մանավանդ երեկոները:

Կարիքի Վարտան.— Վհուկ մը, որու մասին նախապես պատմեցինք:

Կասաբ Ավետ.— Համբավավոր մասագործ: Զվարթաբարո, համակրելի և դյուրամատուց:

Հրավիրված էին նաև Տեփուր Յարեան, Տեփուր Մոխսին, Կակալ Մոխսին, Վզվզի Մոխսին, Զկառն Ակոփ և ուրիշներ:

* * *

Մարանոս Խաթունն ալ իր կարգին հրավերներ դրկեց իր հետևյալ բարեկամ ու զրացի տիկիններուն:

Նղսա Խաթուն Գգիրյան.— Կնքահայր Պողոսի կինը և միանգամայն Քավորիկին Խաթուն:

Բաճոյի Մարինեն.— Վարժ ու համբավավոր, ինքնուրույն վերաբույժ մը, եղակի իր ճյուղին մեջ: Շատ ծանր ու անհույս վերավորներ մահվեն ազատեց: Պատվավոր ու բարեկեցիկ ընտանիքի մը մայր: Իր տղան՝ Հայրիկ, իմ դասընկերս էր Վանի Հայկազյան Կեղոնական վարժարանին մեջ, 1905-ին:

Կուշոյի Մարան.— Տարբեր առած հսկա կին մը, որու մասին վերը պատմեցի:

Թանգոյի Պառավ.— Բթախոտի մասնագետ: Իր պատրաստած քթախոտը կփնտրվեր երկսեռ հասակառուներին անխտիր: Կրսեին, որ ծխախոտի անպետք ու չորցած կոթերը կաղար և ուրիշ համեմունքով կխառնէր ու քթախոտ կպատրաստէր:

Մարիամ Փաշեն.— Թիկնեղ, բարձրահասակ, համարձակախոս ու կտրիճ կին մը, որ Վանի Սովի տարին իր համարձակությամբ ու կազմած կանանց խոմբերով համբավ հանած էր ու փաշա Խիտղոսին արժանացած:

Կաշի Պառավ.— Կհագնէր հազար ու մեկ կտորներով կարկունջած հագուստ: Կողքն կախած կունենար ծարիրի տուրակը՝ լեցուն աչքի փոշիով: Միշտ կհալածներ ու կանիծէր փողոցի շարաճճի տղաներ: Ինք տղաներուն հանգիստ չէր տար, տղաներն ալ իրեն: Ամեն օր եկեղեցի կերթար և շոր տախտակի վրա ծուկի եկած կաղոթներ ու կարտասվէր:

Հրավիրված էին նաև Բաղդկանց Պայծառ, Խամբոյի Ասիկ, Մապունջու Սաքեմիկ, Բազառ Աղասոնց Օղիկ, Տակր քացող Ալ-

մաստ, հաճեց Մայրամ, Միջնորդ Արմա-
ղան և ուրիշներ:

* * *

Հարսանիքի նախորդ օրը Հովհաննես
Աղայի տան մեջ կարգավորվեցան քաբախի
և ազաբբաշի երկու հարցեր:

Քաբախ.— Կեսօրվա ատեն Մարանոս
հաթուն պատրաստել տվավ Քաբախը, որ
հարսի տունը պիտի դրկվեր: Առավ զեղե-
ցիկ և ծաղիկներով նկարազարդված մեծ
փուլաթափսի մը: Մեջտեղը դրավ փոնը մը
ծաղիկ, երկու նուռ, կողքին շարեց փախ-
լավայի ձևով և զանազան գույներով թուղ-
թերու մեջ փաթթված շաքարներ: Տոպրակ
մը կարմիր հինայի փոշի և նամակ մը,
որուն մեջ գրված էր՝ վաղը, այսինչ ժամին
կուգանք հարսը առնելու: Ապա վրան քա-
շեց մետաքսն ու գունդգույն ներկված
շղարշ մը և իր մշակ հեգ գլուղացի Սերգո-
յին տվավ թափսին, որ զգուշությամբ հո-
ռոն—Մկանց տունը տանի: Մարանոս հա-
թուն չէր մոռցած նաև այս հանդիսավոր
օրվան առթիվ զարդարել իր մշակն ալ:
Գնած էր նոր սև քյանզախիկ մը, կարմիր-
կանանչ գույներով մեջքի շալ մը, նոր ճե-
մակ քուրդ մը, մետաքսն սև փոշի մը և
նոր ճեմմակ Շատխու շալ, շալվար մը:
Մշակ Սերգոն զարդարված այս նոր հա-
գուստով, կեսօրվա ժամը մեկին զգուշ
քայլերով, երկու ձեռքերով բռնած փուլա-
թափսին՝ հոտի—Մկանց տունը տարավ և
վերադարձավ:

Ազաբանտում և անգաբբաշի.— Վասպու-
րականի մեջ սովորություն էր, որ նորա-
պսակներ շար աչքն զերծ պահելու համար,
ամուրի երիտասարդները փեսայի տան մեջ
ժողով մը գումարեին և ազաբբաշի մը ընտ-
րեին:

Առնի պատվերով իր տունը հրավիրվե-
ցան իր ընկեր, բարեկամ ու զրացի հետևյալ
ամուրի երիտասարդները:

Գուլշոն, Վանլի խորեն, Բորիկ Գող, Սա-
րուխանի Պուլզ, Քախան Քուր, Մուճկե Վա-
հան, Քերծկի Մուկ, լըմըցու Պիսը, Միա-
պետական Մանուկ (իր կամը քալեցնող),
Մծիկ, Լորեզի հոսորով, Կյանջու, Բարեքին,
Ուլմա Կյօրօն²⁵, Բանտանվոր Քափթափէն

(Կյօր հաց՝ մեջտեղը ծակ), Խոանի հաշիկ,
Ճոռոն, Աթօն, Պթօն, Շխու Միրան² և ուրիշ-
ներ:

Հարսանիքի նախորդ օրը, երեկոյան
մինչ հարսի տան Հինադրեսի արարողու-
թյունն ու ձևականությունները կկատարվե-
ին, վերոհիշյալ ամուրի երիտասարդներն
ալ Առնի տունը բազմոցներու վրա նստած,
ժողով կընեին ազաբբաշի մը ընտրելու:
Համար ժողովը կարճ տևեց և անգաբբաշի
ընտրվեցավ Վանլի խորեն: Անգաբբաշի
ընտրության ձևը Վասպուրականի մեջ ա-
նուպես էր: Անուրդին գինն էր խմիչը: Ամե-
նեն շատ գինի կամ օղի մատակարարողը
կգներ պաշտոնը և կստանար կոպալը: Ա-
մուրիներու այս խուճուկ կկոչվեր միսկներ:
Վանի Արճակ գավառի մեջ հայաբնակ փոքր
գյուղի մը անունն էր Միսկներ, և միանգա-
մայն Վանի փոխարեական ոճերեն մեկը,
ժողովրդական ասացվածք մը, որ կնշանա-
կեր երկրորդական, մասնավորապես հար-
սանիքներու ատեն գործածվող:

Վանլի խորեն, բարձրահասակ, լայնա-
լանց, կլոր երեսներով սիրուն երիտասարդ
մըն էր, օժտված կատակարանությամբ և
նմանախոսության ձիրքերով, միակ հարմար
անձնավորությունը այդ պաշտոնին համար:
Իր անուշ ու համակրելի ընավորությամբ
կսիրվեր Վանի գրեթե բոլոր իր հասակա-
կիցներեն և կկոչվեր Սողեմթի ծաղիկ:
Ուրախ էր, գոհ և ծիծաղը միշտ երեսին:

²⁵ Ուլմա գլուղացի, Վան հաստատված: Գլխին
կզկեր բարձր ու ճեմմակ քուրդ, որու կողքին կփաթ-
թեր մետաքսն և ուլունքներն հյուսված սև փուշի մը:
Քուրդին գրեթե ու փոշի կապելու ձևերը կհամեմատեին
հպարտություն: Բնավ չէր խնայեր. միշտ խոստ ու
հոռետես: Ունեւր լավ ձայն: Կերպի քրդերեն երգեր
շատ զեզեցիկ եղանակներով և քրդերեն երգերու շոն-
մարան մըն էր:

Վասպուրականի գլուղացիներեն շատեր քուրդի
ընտրության և փուշի կապելու տարբեր-տարբեր ձևեր
ունեին, մասնավոր շատախոսներ: Ուլմա Կյօրօն ալ
շատախոսներու նման փուշի ծալը ձախ ապանջի
վրա կախ կուտար:

2 Շխու Միրան.— Խնդացեալու ձիրքերով զօտյալ
երիտասարդ մը: Ինք կհօրիներ իր կատակալից խոս-
քերը: Կհիշեմ օրինակ մը անոր խոսքերին. «Այսօր
Ավանց եմվաճառեալ եմ մը ցամաքեց, որու բն-
րած ապրանքներն էին՝ 60 հակ մկան բուրդ, 24 պու-
տուկ ճեմմակ մամուն և 24 սետուկ ալ այծերու կո-
տոշ, զարան արտեր ցանելու համար, որ այծեր
բուսեին» և այլն:

կշիւներն ու կնորոգեր ամեն տեսակ հովանոցներ, ըլլալով միակը այդ արհեստին մեջ, Վանի հրապարակին վրա:

Հարսանիքի օրը Վանի խորեն գլխին դրած էր արարական ակալը, մեջքին կապած էր խոշոր գեղեցիկ պարսկական շալ մը, որուն արանքներուն ու ծալքերուն մեջ դասավորած էր բաղաճ և օղիի երկու լեցուն փոքր շիշեր: Հագած էր Շատախի շալն հյուսված պենակն սիրուն ու լայն շալվար: Զեռքին ունէր պաշտոնական կոպալը²⁶, որուն վրա կ'պցված էին 20-ե ավելի փոքր ու բարակ մեղրամոմներ և անոնց արանքները դարձդարձիկ փաթթված կարմիր, կանանչ ժապավեններ, զանազան տեղեր ալ փակցված կանանչ-կարմիր թուղթեր: Մոմերը պիտի սկսեին վառվիլ պսակի արարողութան ատեն, եկեղեցւոյ մէջ: Հին ավերորդապաշտութիւններն մեզի հասած հավատքն էր, որ ազարբաշի կոպալի կանաչ-կարմիր գույներու և վառված մոմերու զորութեամբ շարբըր կ'հետանային: Ազարբաշի պարտականութիւնն էր ամուսնացյալ զուգի առջեւն կամ կողքին քալել և եկեղեցիէն տուն առաջնորդել ապահով:

Հարսանիքի օրն է: Օդը գեղեցիկ ու պայծառ: Ամուրի երիտասարդներ խորենի շուրջ հավաքվեցան, հրավիրալ երկսեռ հարսնեկորներն սկսան իսկիկ-մեկիկ հասնիլ: Այլեւր տարբեր, իսկ կիներ տարբեր սենյակներ առաջնորդվեցան և նախապես պատրաստված բազմոցներու վրա նստան ծալապատիկ և սկսան խոսիլ սարեն-ծորեն՝ զանազան հարցերու վրա: Ոմանք սկսան շեշտել օգին գեղեցիկ ու պայծառ ըլլալը: Ոմանք ալ կսենն՝ օդը պայծառ է, որովհետեւ հարսը թնթնոց չէ լզած: Երբ հարսանիքին օրը պայծառ ըլլար, կհավատային, թե հարսը թնթնոց չէ լզած, իսկ, ընդհակա-

ռակն, եթե հարսանիքին օր անձրևոտ ըլլար կամ ձյուն տեղար, կհավատային, որ հարսը փոքր հասակին ճաշի ատեն թնթոց լզած է կամ թնթոցով հարսա կերած է, կամ մատները լզած է:

Փեսայի ածիլումն և ածիլվելու եղբ.— կտն թեև աղվամաղ, բայց ըստ տեղական սովորութեան ածիլվելու պարտավոր էր: Երբ այրերու սենյակը հրավիրայնեցող լեցվեցավ, սենյակին մեջտեղ դրվեցավ թիկ-նաթոռ մը, որու վրա բազմեցավ կտն: Ուսթա խաշիկ (որու մասին վերը պատմեցի) եկավ կանգնեցավ կտնի մոտ, ածիլի սրցնող սև կաշին մեջքեն կախած, իսկ ձեռքին բռնած ածիլի մը, պոշավոր հայելի մը և պղնձի պնակ մը, տաք օժառաշուրով լեցված, որոնք փեսայի մոտ գտնվող փոքր սեղանին վրա դրավ և սպասեց: Սովորութիւն էր, որ հարսնեկորներեն մեկը հայելիի վրա արծաթ դրամ²⁷ դնէր, և այդ մեկը կ'լար առհասարակ փեսայի հայրը կամ քվոր աղան: Հովհաննես աղան առաջ անցավ և հայելիին վրա սահեցուց հինգ զուրուշնոց մը: Պերպեր խաշիկ ի տես արծաթ դրամին, սկսավ գործել և կտնի երեսը լվալ օժառաշուրով, ու նորեն կանգ առավ, սպասելով որ ուրիշ հարսնեկորներ մըն ալ դրամ դնեն հայելիի վրա: Լորեզի Մնտն եղավ երկրորդ անձը, որ հայելիի վրա դրավ ուրիշ արծաթ դրամ մը, սափրիչը նստել սկսավ գործել և քիչ մը ածիլելն հետո, նորեն կանգնեցավ: Սափրիչը կանգ առավ և սկսեց գործել ըստ հայելիի վրա դրված դրամներուն, որքան շատ դրամ նետվէր հայելիին վրա, ածիլումը այնքան շուտ կ'վերջանար, իսկ եթե դրամներու երեսում հայելիի վրա դանդաղէր, ածիլումն ալ կ'դանդաղէր: Մինչ փեսայի ածիլումը այսպես առաջ կ'երթար, Միկներ խումբը սենյակի մեկ անկյունը առանձնացած, սկսավ երգել փեսայի ածիլումի հետևյալ երգը.

Աղբընեք²⁸, անգընեք, կտրիճ-մարալ անգընեք,

²⁶ Կոպալ.— Վասպուրականի գյուղացիները ունեցող կնիքն: Գյուղերու մէջ մինչև մեր օրերը կար հետեւյալ սովորութիւնը: Գյուղի երեսասարդները քանի մը փայտի կտորներն խառ մը կշիւնէին և փեսայի զնիին կ'դնէին, որպէս թագ, որը դարձալ չար աշքն ազատ պահելու նշան էր: Վանի մէջ այս թագի փոխարեն քահանան պսակի արարողութենէն հետո փեսայի կտորքեն խառ մը կկախէր, որ դերը հալածելու զորութիւնը ունէր և պսակէն հետո եկեղեցիի մէջ շնորհավորելու պահուն հարսնեկորները նախ այս խառը կհամբուրէին, ապա փեսայի ճակատն ու երեսները և կթրթիւն ձեռքը, ընելով բարեմաղթութիւններ:

²⁷ Այդ դրամները սափրիչի ածիլելու վարձատրութիւնն էին:

²⁸ Վասպուրականի գյուղերուն մէջ ավելի շքեղ կերպով կկատարէին փեսայի ածիլվելու արարողութիւնը: Աղբիկներն ու երեսասարդները կըրտապատեն փեսան, ծաղիկներ կըսենին անոր շուրջ և զափ ու թմրուկ զարնելով, կպարեն և կերգեն այս երգը, մինչ փեսան կածիլվէր, կհագնէր ու կզարգարովէր:

Հա տիւակեթ, անգար լաճեր, ախշկներ,
Կանաչ-կարմիր, ալ-դարմաճի կումաշով:

Պար բռնեցեք թագավորի կշտերով:

Թագավոր, ի՞նչ պիրենթ քյե նման
Քյո կանաչ արեն ի քյե նման:

Մեր վարթէնիս որ կպացվէր

Պացվէր քյո արեու նման,

Սարի սուսուն որ կպացվէր

Պացվէր քյո արիվու նման:

Թագավոր, ի՞նչ պիրենթ քյե նման

Քյո կանաչ արիվու նման:

Ախարանց արուն (ծաղկի անուն) որ կը
պացվէր

Պացվէր քյո արիվու նման

վարթ մանուշակ որ կպացվէր:

Պացվէր ալ արիվուս նման:

Հանդերձօրհենքը.—Տեր Պետրոս Հայրը,
որ քանի մը օր առաջ հարսի տունը հանդի-
պած ու օրհնած էր Սրբիկի հանդերձները,
մինչ ևս կածիլներ, ուրիշ սենյակ մը ան-
ցավ է օրհնեց ևսնի նոր հագուստներն ալ,
նորին շար աչքե զերծ պահելու համար:
«Մի իշխեսցէ մերձենալ ի սոցա շար աչաց,
դիմաց կամ կախադրաց, այլ ամբացյալ
զօրությամբ սուրբ խաչին քո փրկեցիկն հա-
մենայն որդալթից սատանայիս: Քահանա-
յի այս աղոթքով շարեր կհեռանային:

Փեսայի քուր կամ քումով.—Ըստ հնա-
վանդ սովորության, փեսայի կողքեն թուր
մը կկախեն կամ փեսայի առջեւն բռնած
կտանեին՝ երկու նշանակությամբ: Առաջին՝
որ փեսան ընտանիքի տերը կլլար և իշխա-
նությունը ձեռք կառնէր: Երկրորդ՝ թուրը
որպէս պողպատ հակազդիչ էր շար աչքե-
րու Որովհետեւ հայեր թուր կրելու կամ
պահելու արտոնությունը չունեին և փեսայի
կողքին թուր կախելու պետքը կար, ըստ
հիննէ մնացած սովորության, ամուսնութե-
նէն օրեր առաջ փեսայի զրացի թուրքն մը
թուր մը փոխ կառնեին, քահանային օրհնել
կուտային և փեսայի կողքին կկախեին,
ամուսնութենէն հետո նորեն թուրքին վե-
րադարձնելու խոստումով:

ԺԸ դարու վերջերը Վանի ազդեցիկ ա-
ղաներն Գարասնֆէրյան Ախիշան աղան
այս սովորությունը կարգիւն և կորոշե, որ
թուրի փոխարեն՝ թուրի երկարությամբ հա-
տուկ մեղրամոմ մը գործածվի և այդ մեղ-
րամոմի վերջեն եկեղեցվույն նվիրվի: Ահա
այս սովորության համաձայն, Հովհաննէս

աղան մասնավոր շինել տված էր երկար
մեղրամոմ մը, որ կկոշվէր թրամոմ և փոք-
րիկ մը ձեռքին բռնած միշտ փեսայի կող-
քին կկենար:

Խաղախուր կամ ճարճառ.—Լեռն հագիվ
ածիլված իր սենյակը գնաց և հագավ Տեր-
հոր օրհնած հագուստները: Իրեն կօգնեին
Մծիկ և Միապետական Մանուկ: Վանի խո-
րեն, ըստ հնավանդ սովորության, իր փայ-
տին կամ կոպալին ծայրը հարսնեւորներն
շատերուն համբուրել տալով զբաղած էր:

Քավոր աղայի հրամանով հրավիրյալ-
ները մեկիկ-մեկիկ փողոցը լեցվեցան, հար-
սին տունը երթալու համար: Փողոցը 10—12
կառքեր պատրաստ կսպասեին, որոնցմէ
Արաբաչի Գէվլոյի մասնավոր փայթոնը
եկավ և դռան հիշտ մօտ կանգնեցավ: Այդ
փայթոն նստեցան Տեր-Պետրոս, Հովհան-
նէս աղան, Քավոր աղան և Լեռն: Օխաշ
վարդապետ, Տեր Զորին, Կանամ Որ և Տեր
Աշալեն երկրորդ կառքը նստեցան: Մնաց-
յալներն ալ ուրիշ կառքեր: Խամբոյի Լոռ-
թոն, Վերջի Կարոն, Տնփոր Յարիջան հե-
ծան իրենց վարձած ձիերը: Կյոնուոյի Մուխ-
սին հեծավ իր կովու ջորին, Կոտկե Սեփան
և Աման Շինոզ Մանուկ հեծան իրենց համ-
բավավոր էշերը: Նախ փեսայի կառքը սկը-
սավ շարժիլ, ապա վարդապետներու կառքը
և անոնց հետեւեցան ուրիշ կառքեր, որոնց-
մէ երեքը կտանեին քավորիկն և ուրիշ կի-
ներ, և ձիավորներն ու իշավորներն ալ ա-
նոնց հետեւեցան:

Հոս կուզեմ հիշել, որ Խամբոյի Լոռթոն
ցուցամոլությունը ծայր աստիճանի կհաս-
ցնեն իր նեղուզը քառամբակ վազցնելով,
երբեմն կառքերն առաջ անցնելով, երբեմն
ալ կառքերուն հետեւելով: Կյոնուոյի Մուխ-
սու փոքրիկ ջորին շատ անգամ ցույց տվավ
իր համառությունը, խրտչելով ամեն մի սև
կետի ի տես, ետ-ետ երթալով կամ կողմ-
նակի քալելով, Կօտկե Սեփանի էշը աչքի
կիչնար իր ռահվան-քալլվածքով, իսկ
Բրուտ Մանուկի էշը իր զոռոցով: Պետք է
հիշեմ, որ Բրուտ Մանուկի էշը մինչև հար-
սի տուն հասնելը շատ անգամ եղանակեց
և հարսնեւորներու խումբն միշտ ետ մնաց,
որովհետեւ եղանակը շփոթացուցած քալել
չէր սկստի:

Կառքեր խոտի-Մկանց տուն հասնելուն
պես, ամեն ոք վար իջավ: Այրերը առաջ-

ներդիցեան տարբեր սենյակ, իսկ կանայք՝ տարբեր և բոլորովեցան ամեն տեսակ ուտելիքներով լեցուն սեղաններու շուրջ:

Այստեղ պարտ կհամարեմ հիշել հարսի տան հրաշխարայներեն ոմանց:

Քոռ Քաղաքովու²⁹.—Մեկ աչքը կույր, մեծ գլուխ, ահարկու և ամուրի անձ մըն էր: Մեջքին կկրեր դանակ մը, որուն ծայրեն արյուն կաթած էր շատ անգամներ, կսեին: Ուներ երկու ձեռք անկողին՝ մեկը քրոջ տունը կպահեր, իսկ մյուսը բանտին մեջ, որովհետև բանտեն արձակվելէն հետո նորեն բանտ վերադառնալը օրերու խնդիր էր:

Բոլաշըզ Պատուր.—Ամեն գուցն առնող մեկը: Ուներ ձիեր: Միշտ ծայրաբերս:

Պեռլի Պատուր.—Նանուկներու գիշերալին պահպան:

Ազգիկ Միքան.—Անհնազանդ, անգրագետ, անվախ և միշտցներու մեջ խտրութիւն չգնող երիտասարդ մը:

Հրաշխարայած էին նաև՝ Նախշի Թանգյալ, Նախշի Սախուն, Քյարխի Մուսուն, Զրով-ջրովի Կուկազ, Քալրիսդ Խաչուն, Ջօլեօյի Արքեն, Մրոտի Պապոն, Նադանի Թումպուն, Պալքաշին, Աղաբան Պուպուն, Էլեսանի Կապան, Փինալի Պատուր, Ման Բուր, Արտաւ Կարուն և ուրիշներ:

Այստեղ միջանկյալ կուգեմ հիշել երեք հին սովորութիւններ կամ միջադէպեր, որոնք տեղի կունենային գյուղական հարսանիքներու ատեն: Մեկն է մենամարտը, մյուսը՝ Աղվեսը, իսկ երրորդը՝ Խուր պոնել:

Մենամարտ.—Գլուխներու մեջ սովորութիւն էր առհասարակ աղջիկը տարբեր գլուխը ընտրել: Երբ հարսի տան հարսնետրները հեռուն կտեսնեին փեսայի հարսնետրներու զաւր, բոլոր այրերը անմիջապէս տունեն դուրս կելլեին, մասնավանդ երիտասարդները, և բաց դաշտի վրա կարգավ կկանգնեին: Իսկ իրենցմէ քանի մը քալլ առաջ կկանգնէր մասնավորապէս ընտրված զորավոր կամ ուժեղ երիտասարդ մը: Կհասնէին փեսայի հրաշխարայ հարսնետրները և քսան քալլ հեռու կարգավ կկանգնեին, առաջ մղելով իրենց ընտրած ուժեղ երիտասարդը: Այս երկու ընտրյալ ուժեղները նախ իրարու ձեռք կթոթվեին և հետո կսկսեին մենամարտիլ: Առհա-

սարակ փեսայի կողմի ընտրյալ ուժեղը կհաղթէր: Մենամարտեն հետո նորեն ձեռքի թոթվում, և թէ հարսի և փեսայի հարսնետրներ իրար խառնվելով, ուրախ, զվարթ, կատակելով ու խնդալով հարսի տուն կմտնեին և ճոխ ուտելիքներով պատրաստ սեղաններու շուրջ կշարվեին: Այս ալ հեթանոսական սովորութիւն մըն էր մեզի հասած, բայց մեր օրերուն գրեթէ անհետանալու վրա էր: Հայրս ինծի պատմած է, որ Գործոթ գյուղին մեջ հսկա, հաղթանգամ հայ մը կա եղբի Մելիք Մելու անունով, որ բազուկի ահռելի ուժ ունեցած է և իր ուժին համար շատ մը ամուսնացողներ մասնավորապէս կհրավիրեին զայն, որ իրենց համար մենամարտեր և իրենց հարսնեքը պատվավոր և հաղթական ըլլար:

Աղվես.—Երբ հարսնառի գացողներ հարսի տունը կմտնեին և ամեն բան կսկսէր կանոնավոր ընթանալ և հարսն ալ կսկսէր իր նոր հագուստները հագնել և պատրաստովի հարսնառի խումբին ընկերացող և փեսայի մտերիմ երիտասարդ մը կամաց մը և անշնչմար սեղանէն կհեռանար և կաներևութանար: Ամենայն զգուշութեամբ հարսի տունէն դուրս կելլէր անկատու Ձեռքի փայտին ծայրը թաշկինակ մը կկապէր, փայտը ուսին կդնէր և փոխանակ ուղիղ ճամբայի, մինչև գլուխն հեռանալը, դաշտերն ու ձորերն անցնելով, առ ոչինչ համարելով ձյուն, անձրև կամ մութ գիշեր, արագաքայլ կամ վազելով իր գլուխը կկերպադանար մեն-մխնակ և ուղակի փեսայի տունը կերթար և կուտար բարի լուրը՝ թէ մենամարտը վերջացավ, թէ ամեն բան կարգին է և թէ հարսը քանի մը ժամէն կհասնի: Փեսան կամ իր հայրը այս լրարբերին պարզ և մը կուտար: Այս պատգամարեղ գլուխներու մեջ Աղվես կկոչվէր, և այս սովորութիւնը մինչև մեր օրերը գոյութիւն ունի:

Խուր պոնել կամ ճուր բոնել.—Եթէ պատահէր, որ աղջկա գլուխը բաժանան հեռու ըլլար և հարսնառի գացողներ միևնույն օրը չկրնային հարսը առնել վերադառնալ, հարսի գլուխացիներ ի հարգանս հարսի հոր, յուրաքանչյուրը մեկ երկու հոգի կզատեին հարսնառի գացողներէն, իրենց տունը կտանեին, կկերակրեին, կհարգեին ու կպատվէին, գիշերը կպահէին և մյուս օր հարսի տուն կբերեին: Այս սովորութիւնը կկոչվէր Խուր

²⁹ Քրքին մեջ հիշված փեսայի և հարսի տուն հրաշխարայներն թէ արանց և թէ կանանց անունները իրական մականուններն են:

պոնել և մինչև մեր օրերը գոյութիւն ունենալու համար ըստ էության չեն փոխուի: Զեռնները ներկած կարմիր հինալով հոտաւիտ: Քաշկինակը ափին մեջ, մագեղը սանրած, երկարապող հյուսած և կոնակին ի վար կախված: Քաշկինակը նոսր խաթուն քողովը³⁰ ձեռքին հարսին մոտեցավ: Տոթն անգամ քողը հարսին շուրջը պտտեց, հետո գլխին վրա ձգեց, ծածկելով անոր երեսը, քողին եղբայրները վար կախելով ետ ու առաջ: Ապա յոթը գնդասեղներ կամ ասեղներ տեղավորեց քողին վրա, որ շահի, և որ գլխավորն է՝ շար աչքերն հեռու պահել հարսը³¹:

Նոսր խաթուն հագիւլ քողի արարողութիւնը վերջացուցած էր, երբ հարսին մոր աչքերին սկսան արտասուքի կաթիլներ վար գլորիլ: Փոքրիկներն ումանք բարեմաղթող կարճ ոտանավորներ արտասանեցին: Նոսր խաթուն բացավ իր հետը բերած փոքրիկ և կլոր շաքարներու տոպրակը և սկսավ ճանկերով շաքարիկներ թափել հարսի գլխին վրա, ի նշան խաղաղության և ուրախության: Ծաքարիկները վար գլորվելով, սենյակի գորգին վրա թափվեցան, փոքրիկներուն կովըտուքի առիթ ստեղծելով, որովհետև ամեն մեկը կշանար որքան կարելի է շատ շաքարիկներ հալաբերի:

Քանի մը ըրոպեն հետո, Տեր-Պետրոս կանանց սենյակը եկավ, հետը բերելով լեռնը: Անոնց հետեւեցան այրերն շատեր և սեղմվեցան կանանց սենյակին մէջ որքան որ տեղ կրնային գտնել: Տեր Պետրոս հարս ու փեսան իրար մոտ կանգնեցուց: Հարսի ձախ³² ձեռքը լեռնի աջ ձեռքին տալով, ըրավ կիսապսակ կամ պսակի կարճ արարողութիւն

մը: Կարգաց Ավետարանէն կարճ գլուխ մը, ապա «Հայր մեր» ըսավ և օրհնեց, շնորհավորեց զանոնք, հետո փողոցը սպասող կառքին դիմեց: Վանլի խորհն, որ փայտը ձեռքին պահապան հրեշտակի պես փեսայի կողքին կանգնած էր, պոռաց:

— Ատովա՞ծ շնախավոր անի՛:

Նվ փայտը այս ու այն կողմ փարատելով, ճամբա բացավ և փեսան դեպի կառքը առաջնորդեց: Անոր անմիջապէս հետեւեցավ հարսը համարաքայլ, որու երկու կողմերին կթալին կնքահայր և ուրիշ մը հարսի քողին առջևի եզրեր բարձր բռնած. պատահութիւն տալով հարսին իր ճամբան տեսնելու: Հարսը հագիւլ փողոց ելած, գրացիներն մեկը հին կողքի մը կամ լակաշ մը նետեց հարսի ետեւին, որ նշան էր լավ բաղձանքներու:

Նվ բազմութիւնը սկսավ շարժիլ: Որը կվազեր, որը կուլար, որը վերջին բաժակը կկոնծեր, որը իր կառքը կփնտրեր, որը կերգեր, որը կպոռար: Նվ ամեն որ եկեղեցի երթալու կպատրաստուներ:

Վերջապէս կառքեր սկսան շարժիլ, որոնց հետեւեցան ձիավոր և իշավոր հարսնետրներն ու ուրիշ հետաբերի ոչ հրապիրայները:

Հասան եկեղեցի: Վանլի խորհն կամ Ազարբաշին, որ քիչ մը հարթած էր, ինչպէս որ սովորաբար կըլլային բոլոր անգործաշինները, գործի վրա էր և իր խեղկատակութիւններով, իր ծաղրածու խոսքերով, իր շարժուձեւերով, ձեռքին կոպալը այս ու այն կողմ փարատելով, կրանար կամ, ալելի ճիշտ, ըստ հեթանոսական սովորութեան, կաշխատներ ժողովրդի և կամ ներկաներու ուշադրութիւնը իր վրա կեդրոնացնել և փեսան ու հարսը շար աչքերն ազատ պահել:

Եկեղեցիին մէջ փեսան առանձնացավ Տեր-Պետրոսի մոտ և աջակողմյան դասին մէջ, ըրավ կարճ խոստովանանք մը: Այսինքն՝ Տեր-Պետրոս «Մեղա աստուծո՞ւ» քարոզեն առաջին և վերջին համարը ըսավ աճապարանօք, ի փոխան փեսային և վերջացուց խոստովանանքը, ուրիշ խոսքով ինք իրեն խոստովանեցուց: Ապա հարս ու փեսան սեղանին քիչ հեռու առջայնի մէջ իրար քով կանգնեցուց, հարսը ձախ և փեսան աջ կողմ և սկսավ «Հայր մերով», հետո՝ «Աւույլ զձեռն Նվայի և տվյալ ի հայն Աղամա» բարոզը:

— Որքայիկ իմ լեռն, մինչև ի մահ տէ՛ր ես,—հարցուց Տեր-Պետրոս:

³⁰ Ունտը հարսեր կկապեն արծաթե քամար, ոսկի ճանոց կամ մարգարիտ մանյակ:

³¹ Հարսին քողին գոյնը կարմիր ըլլալու էր, ըստ հնամանդ սովորութեան, զոն կարմիր շերտեր ունենալու էր, եթէ քողը ուրիշ գոյն ըլլար:

³² Ըստ ավելորդապաշտութեան, յոթ կապերով կկապեն շար աչքերը: Կհամարային, թե պողպատե սեղանի, զներ կամ շարերը հաճախու գործութիւն ունենին:

³³ Սովորութիւն էր, որ կիսապսակ կամ պսակի տակ, հարսը նախապէս իր ձախ ափին մէջ ունենար շաքարի կտոր մը, անշմար փեսայի ափը սահեցնելու համար, քողի տակ, ձեռքերը փեսային տված ժամանակ:

կետն գլուխը խոնարհեցուց կամաց մը:

— Որդյակ իմ հարսիկ, մինչև ի մահ հնազանդ ես,—հարցուց Տեր-Պետրոսը հարսին:

Երբոր հարսը հազիվ քիչ մը գլուխը ծոց, Վանլի խորեն, որ նոր ետևը կանգնած էր, իր ձեռքով հարսին գլուխը քիչ մըն ալ ինք դեպի առաջ քեքեց, օգնելով անոր հավանության, ապա բարձր ձայնով բռնաց:

— Աման տերտէր, քիչ մեղմեմ, կայիմ-կայիմ փսակի, որ մեկ պնոցի ծիրանան, մինչև ի մահ իրարու խնտ մնան:

— Լո՛ր, պարոն, անգամ մըն ալ ձայն հանես, պսակը կիսկատար պիտի մնա,— ըսավ Տեր-Պետրոս: Խոժոռ նայվածքը Վանլի խորենին ուղղելով:

— Մեղա աստուծօ, տերտէր, օրջնյա ի տէր, ծառա եմ կարթիտ:

Պսակի արարողությունը վերջացավ: Տեր-Պետրոս քահանան հարս ու փեսայի երեսը դեպի ժողովուրդը դարձուց: Փեսային կուրծքին կախաց փոքրիկ խաչ մը և առաջին անգամ ինքը համբուրելով խաչը, շնորհավորեց նորապսակները:

Անոր հետեւեցան կնքահայրը, ապա Հովհաննես աղան, ապա մյուս հարսնետոներ, որոնք կարգավ և մեկիկ-մեկիկ մոտեցան: Նախ փեսայի կուրծքին վրայի խաչը համբուրեցին, ապա փեսային ճակատը, ոմանք ալ ճակատն ու երեսները և ձեռքերը թոթվելով, շնորհավորեցին, ընելով իրենց մաղթանքները:

Հետաքրքրական էր տեսնել Վանլի խորենի և մխկներու համբուրյոները: Այս երիտասարդներեն ոմանք փեսային մոտենալով, նախ երկար շունչ մը առին, ապա մեկիկ-մեկիկ իրենց ձախ ձեռքը փեսայի ծոծրակի վրա դնելով, անոր ճակատն ու երեսները համբուրեցին ու համբուրեցին և փեսայի երեսը լվացին իրենց համբուրյոներով:

Համբուրյոներ և շնորհավորանքներ հետո, քանի մը տիրացուներ ու մխկներ ճեղքահարաշ շարականը երգելով, նորապսակները դեպի եկեղեցին դուռը առաջնորդեցին: Ծիշտ դռան մոտ, ամուսնացյալները դեռ եկեղեցին դուրս չկած, հարսնետոներ մեծ աղմուկով և բարձրագույն երեք անգամ բռնացին:

Աստծո՛ւն ամանա՛թ,
Աստծո՛ւն ամանա՛թ,

Աստծո՛ւն ամանա՛թ:

Ոմանք ալ այդ ժխորին մեջ կրօնան:

Առչո՛ւն ամանա՛թ,

Առչո՛ւն ամանա՛թ,

Առչո՛ւն ամանա՛թ,

Իսկ փոքրիկ տղաներ ու զրացի հանդիսականները, ծաղրելու համար, կրօնան:

Պալթազո՛ւն ամանա՛թ,

Պալթազո՛ւն ամանա՛թ,

Պալթազո՛ւն ամանա՛թ:

Ի դեպ է հոս հիշել քանի մը հեթանոսական սովորություններ պսակի մասին: Առաջին՝ արշալույսի պսակ: Հին ատեններ պսակի արարողությունը կկատարվեր առավոտյան ժամերգության միջոցին—գուցե արևապաշտության ժամանակներին մեզի հասած—արշալույսը դեռ չբացված, որպեսզի պսակվելն հետո նորածագ արևի շողերն ու ճառագայթները նորապսակներու վրա իյնային: Մինչև իսկ մեղք կհամարվեր արևածագեն հետո պսակվելը: Այս սովորությունը կամաց-կամաց անհետացավ, իր գոյությունը պահելով մինչև մեր օրերը քանի մը գյուղերու մեջ միայն: Երկրորդ՝ թոնիրի պսակ: Մեծ մը, որ գուցե մնացած է հեթանոսական ժամանակներից կամ կրակապաշտությունն: Ակուժի վրա կպսակվեին, որպեսզի նորապսակները բնավ աղետներու և վտանգներու չհանդիպեին: Շատ մը երիտասարդներ և մանավանդ եկեղեցիներ հեռու եղողներ, քալելու անկարողներ, երբեմն ալ աղատամիտներ (ինչպես Կարապետ Աղա Նատանյան), հաճախ թոնիրի շուրջ կպսակվեին, պայմանով, որ թոնիրը վառ ըլլար: Արդեն մեր մամիկները թոնիրը Տաճար աստուծո կկոչեին, թոնիրով կերգվեին ու կանիծեին: Դեռ մինչև մեր օրերը թոնիրներու կողքերը խաչեր կկրեին:

* * *

Եկեղեցին նորապսակներ կառքը առաջնորդվեցան: Նորեն ամեն մեկը իր կառքը նստավ: Նորեն ձիավորներն ու իշավորները հեծան ձիերն ու էշերը: Խամբույի Լուսինն նորեն աչքի ընկավ իր ձիու քառասմբակ արշավով: Կյիճուտոյի Մովսես շորին նորեն ցույց տվավ իր համառությունն ի տես ա-

24 Պալթաչին չքավոր ու անզրազեռ փայտահատ մըն էր Արարուց Բազի մեջ:

մեն մի սև կետի: Կառքերն սկսան սուրալ դեպի փնսայի տունը:

Նորապսակները արդեն տուն հասած, կառքին իշած, դռան առջևն են: Դուռը բաց է:

Ենմֆի արագադուրյուն և մատաղ.— Կուկն խաշոն ոչխար³⁵ մը մորթից փնսային առջև և դռան շեմքին վրա: Ոչխարի արյունն³⁶ մաս մըն ալ փնսայի փողոցի դռան ճակատին քսեց: Կումարազ Փանոն իսկույն հողե մեծ քյասա մը կամ մաթրաթ մը հակառակ կողմը դարձնելով, շեմքին վրա դրավ, փնսան վրան կոխելով փշրեց քասան և ներս մտավ: Ծիշտ այդ ատեն բուրդ հարսնետրները մեկկեն պոռացին:

— Կոտրի քյասա³⁷, ապրի փեւէն:

Փնսայի մուտքեն հետո, հարսը իր ամուսնույն դռան շեմքին մոտեցավ: Նորեն հարսնետրները մեկկեն պոռացին:

— Ա՛յ ոտք, հարսիկ, ա՛յ ոտք Սրբիկ (անուն ա՛յ վոտ շեմքից ներս տիր, որ նշան էր բարեհաշող մուտքի):

Փնսայի մօր պարզ³⁸.—Նորապսակները հաղիմ դռնեն ներս մտած ու քանի մը քայլ հառաջացած, բակին մեջ անոնց դիմացը լիավ Մարանոս խաթուն, երկու ձեռքերով, մեծ ափսն մը գլխին վերև բռնած, որուն վրա կային բաղարջներ, շաքարահացներ, քաղցրեղեններ, պտուղներ և սկսավ պարել: Պարելն հետո ափսեն վար առավ և նորապսակներու առաջ եղող փոքր աթոռի մը վրա դրավ, համբուրեց նորապսակները և խոսքը անոնց ուղղելով, տվավ իր օրհնությունն ու բարեմաղթությունը:

— Աստուծոց դիմաք կանեմ, զավակներս որ, մուխ ծեք էրտսից, վիժ ծեք բլմկից,

ալլուր ծեք թանջրից, կլինին ծեք մաղաղից, ձանվար ծեք մառնից, աղօթք ծեք պերնից և ծեքուհին ծեք տնից պակաս չէնի:

Այս բարեմաղթությունեն հետո մխկներ խումբը սկսավ շուրջպարը, երգելով հետևյալ երգը և դառնալով փնսայի մօր շուրջ, ոտքի դոփյուններով թնդացնելով գետնի:

Թաքավրու մէր, տիւս արե,

Քյն կլլօխ դմփող եմ պիրե,

Կարմիր պանդանձ ծեռտ արե,

Արադի փանջ ծեռտ արե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Քյն նուշ-անբրան ենք պիրե,

Վանթ ու ծաղիկ ենք պիրե,

Մեխակ շուշան ենք պիրե,

Թաքավրու մէր, տիւս արե,

Սարի կաքյավ ենք պիրե,

Սարի մարալ ենք պիրե,

Խօրօտ չէյրան ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Կօվեր կթօղ ենք պիրե,

Բէր կնանջող ենք պիրե,

Լվանց անօղ ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Չախրակ մանօղ ենք պիրե,

Առկան մանօղ ենք պիրե,

Լման լվացող ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե

Թօնէր վառօղ ենք պիրե:

Կեր-խում արօղ ենք պիրե,

Խմոր կձօղ ենք պիրե:

Ալլուր մաղօղ ենք պիրե,

Խմօր շաղաղօղ ենք պիրե,

Կյոտնակ արօղ ենք պիրե,

Քյն խաց թխօղ ենք պիրե:

Լվանց անօղ ենք պիրե,

Թանթրտ լցող ենք պիրե,

Սուլեր շիտկօղ ենք պիրե,

Փալթօտ պոնօղ ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Քյն տեղ իսկօղ ենք պիրե,

Մաղեր սանդրօղ ենք պիրե,

Քյն զանարօղ ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Տախտ ավիօղ ենք պիրե,

Քյն զլօլի կաղ ենք պիրե,

Լեզուն տաս գլանօղ ենք պիրե:

Թաքավրու մէր, տիւս արե,

Շիրիկ-շիրվօր ենք պիրե,

Խեռ ու խեռակ ենք պիրե,

³⁵ Հստ դասակարգի կամ ըստ հարստության, սովորություն էր, որ հավ մը, աքաղաղ մը, գառ մը կամ ոչխար մը մորթիքը դռան վրա, որպես թե, ըստ հեթանոսական սովորության, փնսային գալիք փորձությունները մօրթվածին կփոխանցվեին:

³⁶ Կհավատային, որ դռան ճակատին քսված արյունը շար ոգիներու մուտքը կարգիւնր:

³⁷ Կուզեմ հիշել նույնպէս, որ հարսանիքի տեղություն կտրված թանկագին ափսեներն ու ամաններն իսկ րնավ հող չէին պատճառեր այն համոզմամբ, որ ատոնք նորապսակներու գլխին գալիք փորձանքներուն արգելիւնք էին:

³⁸ Հստ հնավանդ սովորության, փնսայի մայրը եկեղեցի չէր երթար, պսակի արարողության ներկա չէր ըլլար:

Քյն կլլոխ դամիօղ ենքլ պիրե:

Հովհաննես աղան վարձած էր երկու տարրեր նվագախումբեր: Առաջին խումբն էր Նաղարաշի Ճոհիկ, Զոտնաշի Գյալհուն և պարող մը: Ծոհիկը Վանի մեջ նշանավոր նաղարա զարնող, իսկ Գյալհուն նուրնպես միակ համբավավոր փողահարը Վանի մեջ: Այս խումբը վերջին պահուն լուր տվավ, թե Շամիրամ տակ³⁰ տեղի ունեցող խնջույթի մը խոսք տված էր և ստիպված էր բացակայել: Երկրորդ նվագախումբն էր Կոն Սէթոյին: Այս խմբի ղեկավարն էր Կոն Սէթոն, որ կնվագեր Քեման, մյուս անդամներն էին Քեծոն, որ կնվագեր քանոն, Կուշոյի Ակոն, որ կզարներ դաֆ ու միանգամայն կերգեր, և Կուշոյի Քյալալ, որ կփչեր փող:

Որովհետև Կուշոյի Ակոն թե դաֆ կզարներ և թե կերգեր, որով իր ձեռքերն ու բերանը միշտ զբաղած էին, որովհետև խիստ ծխամուղ մըն էր, իր կողքին միշտ նստած կպահեր շիպուխի մը, իր 12 տարեկան տղան, որը ծխախոտը թուղթի մեջ փաթթած, ծխամորճին անցուցած, վառած, հոր նշանին կսպասեր, մանավանդ երգերու համարներու ընթացքին: Նշանը տրվելու պես, ծխամորճը իր հոր բերնին կըռներ, Ակոն երկար շունչով և ախորժակով կծխեր, առանց ընդհատելու իր երգն ու դաֆին նվագը:

Կուշոյի Քյալալ թեև նվագողներու խումբին ընկերացած միշտ փող փչելով զբաղած էր, բայց փոքր և մեծ դատիկն իր խըթման օրերուն պիտույն անձն էր: Վանի մեջ սովորութիւնն էր, որ խթման երեկո, ժամասացութիւն սկսելին առաջ, ժողովուրդը եկեղեցի հրավիրելու համար, եկեղեցի կոչնակը սովորականն ավելի երկար և անընդհատ զարնել, փոխանակ տասը վայրկյանի Կուշոյի Քյալալ ունի այդ մասնագիտութիւնն ու բազուկներու ուժը: Նա տախտակե երկու թակոցներ ձեռքին, կզարներ կոչնակին արագ-արագ, առանց ընդհատումի (զրեթ մեկ ժամ) և առանց հոգ-

նելու: Տեսա զինք խթման օր մը, թե ինչպես կոչնակը զարնելն հետո սանկ հաղթականի հովեր առած, զոհ ու ուրախ Արարք եկեղեցի տանիքն վար իջավ, մեզ փոքրերուս, զարմանք և հիացում առթելով:

Միկներ հաղիվ վերջացուցած փեսայի մոր երգը, Կոն Սէթոյի նվագախումբը ըսկըսավ նվագել «Կարմիր վէլօյով ախշիկ» պարերգը: Միկներ և ուրիշ պարողներ նորին սկսան շուրջպարը, թնեկով և ոտքի դոփյուններով գետնը թնդացնելով, ստեղծեցին ոգևորիչ մթնոլորտ մը:

ԿԱՐՄԻՐ ՎԷԼՕՅՈՎ ԱՆՁԻԿ⁴⁰

Տղան.— Կարմիր վէլօյով ախշիկ,
Նարոյ, Նարոյ, Նարոյ ջան,
Քյն խօրն ասա քին տա ձիկ,
Նարոյ, Նարոյ, Նարոյ ջան:

Աղջիկ.— Իմ խէր զիկ թանգլի պախե,
Նարոյ, և այլն
Դանմամ մարթու չի ծախե
Նարոյ...
Վանն խոջին ի պախե,
Նարոյ...

Տղան.— Էլի բա կայնիր ես տուռ,
Նարոյ...
Մեռ պոնիր ես ջուխտմ նուռ,
Նարոյ
Մեջ մէկ նուան խանգլի խատ,
Նարոյ
Ամէն խատին պարյմ տուր,
Նարոյ

Աղջիկ.— Էսօր մեր տուն խարսնիս կա,
Նարոյ
Խարսնիս կանենքլ տեղ չկա,
Նարոյ
Կօյօտ փեսին բեղ չկա,
Նարոյ

Մինչ նվագախումբը ոգևորված կնվագեր, մինչ երիտասարդներ պարելով կզվարճանային, հարսը առաջնորդվեցավ կանանց բաժանմունքը և շրջապատվեցավ խայտաւորէն հագուստներով զարդարված իրեներ: Հարսին քողը դեռ գլխին քավորկին խաթուն հարսի գլխին վրա թափեց թուղթե պարսկի

³⁰ Շամիրամ տակ.— Գիտենք, որ Հայոց Զոր գավառն Շամիրամի անվով չուր բերված էր Վան: Այդ լայն առուն մինչև մեր օրեր գոյութիւն ունի: Վանի այն թաղամասերու այգիներ, որոնք ցած մակարդակի վրա գտնվելով, այս ջուրն կօգտվեն, Շամիրամ տակ կկոչվեն:

⁴⁰ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչանը, «ձայնագրեց՝ Ա. Փիլիկն:

մը մեջ լեցված ու խառնված մանր դրամներ և հացահատիկ⁴¹ ու կիսով չափ հոտ տալով հարսի քողը, բանալով անոր երեսը:

Արանց բաժնի մեջ հարսնեւորներ կամաց-կամաց սկսան ներս երթալ և նախապէս պատրաստված կըլոր սեղաններու բոլորները նստիլ, ծալապատիկ և բազմոցներու վրա: Այդ սեղաններու վրա շարված էր ամեն տեսակ ուտելիք: Ճերմակ լավաշ հաց, պանիր, քանի մը տեսակ աղցաններ, գինիի, օղիի սրվականներ, զավաթներ և պտուղներ ալլաղան:

Ցնփոր Բաղսար, խոհարարի ճերմակ գլխարկը գլխին, ճերմակ զոգնոցը կապած հոլանդական պանիրի նմանող իր ճարպոտ փորին, համադամները եփած-պատրաստած, իր հինգ օգնականներով կանգնած էր և սպասարկելու նշանին կապասերու:

Առաջին սեղան.—Փեսա Լեոն, իր հայր Օհաննէս աղան, Քավոր Աղան, Օխաշ Վարդապետ, Կանա՛մ Որ, Տեր-Պետրոս, Տեր-Աճալին, Տեր-Ձողին, Ճգնավոր Մինաս, Կյնոսոյի Մուխսին, Կապարուկ, Կարիբի Վանդան, Խանկէ Գեորգ, Կուկազի Սանասար, Սալխյան Խաչատուր, Վրոջի Կարոն, Կոտկէ Սեփան, Քեթրավիզ Խեքիմ, Շիլ Մարկոյն, Լորեդի Մնոն, Մուռ Օրման, բոլորն ալ հասակառուներ:

Երկրորդ սեղան.—Մազզաթ Մալին, Բարթոլոմէայի Ակոն, Յրոզնի Պատուր, Ցնփոր, Յարիշան, Կակուզ Մուխսին, Վրզվրդի Մուխսին, Ճիգան Ակոր, Կասապ Ալինոն, Մուճկն Նշան, Կումարբազ Փանոն, Լըմբցու Մուսես, Կոկէ Խաչոն, Կլոբակոտ, Խամբոյի Լոթոն և Բրուտ Մանուկ:

Երրորդ սեղան.—Միայն միակներ երիտասարդներու համար: Ասոնք միասին քալեցին, միասին խաղացին, միասին ալ մեկ սեղանի շուրջ նստեցան: Այս ամուրի երիտասարդներ միշտ ուրախանալու, ուրախացնելու, խնդացնելու, պարելու, երգելու և խեղկատակութիւններ ընելու մասին կ'մտածեին:

⁴¹ Նորասպաններու գլխին քափած ընդդէմի կամ դրամի սովորութիւնը շատ հին էր: Գրամե և հացահատիկի զատ, ոմանք հարսի գլխին կ'քափէին զարի, կորեկ, սիսեռ, փոքր շաքարիկներ, որովհետեւ կ'հավատային, թէ այդպիսով կ'բարեմաղթեն կամ բազմանք կ'հայտնեն հարսին բախտավոր ու հարուստ ըլլալուն:

Չորրորդ և փոքր սեղան.—Կծր Սէթօյի Եվազախումբի շորս անդամներուն համար:

Օխաշ Վարդապետ օրհնեց սեղանը: Կընդահայրը տվավ նշան և ամեն ոք սկսավ ուտել: Խոհարար Ցնփոր Բաղսար և իր օգնականներ սկսան սպասարկել: Գավաթներու ճընկ-ճընկոցներ, բարեմաղթութիւններ, կենացներ, այնպիսի ժխոր մը ստեղծեցին սենյակին մեջ, որ այլևս ոչ ոք կրնար բան մը հասկնալ: Ամեն բերնն ձայն մը կ'ելլեր:

— Խմենք Լեոնի և հարսի կենաց,— առաջարկեց կնքահայրը:

— Նո՛շ, նո՛շ, նո՛շ⁴²,— պոռացին ամենքը միասին:

— Լեոն, կնքամիտ տանուկի,— ըսավ կնքահայրը, որովհետեւ կ'հավատային, եթէ գինի խմած ատեն փեսան իր բաժակը ամբողջովին չպարպէ, զօրքանը շուտ կ'մեռնի:

Երբ առաջին սեղանի հարգելի և տարիքոտ հյուրերը հասան օղիի տված իրենց զվարթութիւն ծայր աստիճանին և կամաց-կամաց անոնց անունները Բաղսարի հաճախորդներու տետրակին մեջ արձանագրվեցան, կնքահայր գլխի Պողոս դեմքը խոժոռած, իր գոռ ու բամբ ձայնով պոռաց, խոսքը միակներուն ուղղելով:

— Մո՛, սատանի վիւնկներ, ի՞նչ էլանք, ժէոքնիւրտ ինչի՞ չէլին: Տյո՛ւք էլ շարիօշցաք:

Կնքահոր պահանջին զոհացում տալու համար, Վանլի Խորեն նշան ըրավ և միակներ սկսան երգել հետեւյալ խմբերգը ու պարել:

ԼԱԼՈՒՅԱՆՆԵՐ

Պծպիկ մի՛ քլէլի, Լալուխան,
Փուշ կէլնի տօտիկ , Լալուխան,
Առծթէ կօտիկ, Լալուխան,
Տիւ ես խօթօտիկ, Լալուխան:
Էթանք Ստամբօլ, Լալուխան
Պիրենք վոսկի ըծլ, Լալուխան,
Անենք շուխտմ սօլ, Լալուխան,
Խայնենք զօրէզօր, Լալուխան:
Էթանք Պատիկ կյեղ, Լալուխան,
Ժօղլենք ինկիմ եղ, Լալուխան,
Անենք ծվանդղ, Լալուխան,

⁴² Գուցե ռանտը բառի կրճատում:

⁴³ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փիլիքի:

Ուտենք միատեղ, Լալուխան:
էթանք էրէրին, Լալուխան,
Ոչխար վեր բերին, Լալուխան,
Կթենք թուս մաքրին, Լալուխան,
Լցենք սուրճին, Լալուխան,
Պանոնք սև եղան, Լալուխան,
Առնենք խմորդան, Լալուխան,
Փշենք դեխ զօղան, Լալուխան,
Ջօղան քյե մէղան, Լալուխան:

* * *

Մարանոս խաթունն ալ իր հրավիրած
բարեկամութիւնները ու դրացի կիները ուրիշ
սենյակի մը մէջ սեղանի շուրջ հավաքած և
սեղանին ղուխը հարսի կողքին նստած,
կհրամայէր, կուգր ախինջ կերակուրը,
այնինչ խմորը և աշալուրջ կհակեր, որ սե-
ղանի վրա որևէ բան չպակսի:

Կաշի Պառավ քիչ մը ուտելէ և լավմը
խմելէ հետո, սկսավ պոռալ:

— Զանըմ, արա՛ղ, էլ արաղ շմնա՛ց,
արաղ պիւրէյ, դուքմէս դոռեց:

Ծառայող մատակարար մը լեցուց զա-
վաթը և պառավին տվավ: Պառավ պար-
պեց այդ զավաթն ալ: Օղին թռավ կմոռնդ⁴⁴,
վխկաց, հաղաց, վխկվխկաց, վիզ թալեց
ոտներ պարզեց: Վերցուցին պառավը, ոտ-
ներեն ու ձեռքերեն բռնած և ուրիշ սենյակ
մը փոխադրեցին: Քանի մը օրեր հետո լուր
տարածվեցավ, թէ Կաշի Պառավը մեռեր է,
որով մրա հանեցին հետևյալ երգը.

Կէր, կէր ու չկէր, մէյ կծէ ջանդիկմ կէր,
Խճիթիկի քծխթիկմ պոռնաէն լէնջվիւր էր,
Ուր պոռնուրիկ պսպեղ ջօրով կպսպղէր,
Կյանի կյանի էլ

անփանթթիկ տախտ կլպստէր,
Յա որ չէ լնվու-լնվու կըսրկտէր:
Ծիծաթեալ օրն ինէր լըպ, կճմկտէր,
Կյանուն մաթրաթմ քյանլադ⁴⁵ կքրսէր,
Խճէր, խճէր, հնմ կխճէր, շուր փոր տճկէր,
Լսկուն կփքլուէր, փոթից կվանէր:
Պառա՛վ, պառա՛վ, չկա պառա՛վ,
էն խեղճ պառվու աշկեր թռավ,
Կյրճի իզանի խնկիւն տարավ,
Խանդան ջօրով փիծաղ պառավ,
Ծիծաթեալ օրն իսովխրավ:

Սրանց սենյակը եղողներեն ոմանք ձա-
շերին վերջացուցած՝ ղուխին կորորին,
ոմանք հարբած, սեղանի շուրջ երկնցած,
կխոսփային, ոմանք կիցկտուր ձայներ
կհանեն: Զգնալոր Մինաս վեր ելավ և
սկսեց եղանակով երգել «Շայր մերը»: Օխաշ
Վարդապետ ձայնակցեց Մինասին: Տեր-
Աշալեկն կարգաց «Պահպանի»: Սեղանը նո-
րեն օրհնեցին և զոհութիւնով վերջացու-
ցին, բարեմաղթելով արևշատութիւն նորա-
պսակներուն:

Այրերեն ու կիներեն ամեն անոնք, ո-
րոնք կանգնելու ու քալելու ուժ ունեին, կա-
մաց-կամաց խոշոր սենյակը առանձնացան:
Վանլի Խորենն ալ իր խոսքով հոն եկավ:
Անոնց հետեց Կոր Սեթոյի նվագախումբը:
Երբ սեղանատունն ամալացավ, Հով-
հաննես Աղան պատվիրեց մատակարարնե-
րուն, որ սեղանները նույնութեամբ մնան,
պատրաստ հաջորդ օրվան համար ըստ
նահապետական սովորութեան:

Հաջհետե և ընդմիջումներով Կոր Սե-
թոյի խումբը նվագեց հետևյալ պարերգնե-
րը՝ հարսանիքի տևողութեան:

ՄԱՌՆՆ Ի ԿԱՆՎՃ

Կնանցիք կալեր,
Կտրիցիք շալեր,
Բանժ-բօյխտ մեռնեմ,
Նշանու յարեր:
Մառից ի կախվե
Տավերկու ծիրան,
Սիրիւր եմ կաննեմ,
Անուն ի ծրան:
Մառից ի կախվե
Տավերկու տանն,
էն տղէն կաննեմ,
Անուն ի Միմուն:
Մառից ի կախվե
Տավերկու խատ նուշ,
էն ախիկ կաննեմ
Անուն Սիրանուշ:
Մառից ի կախվե
Տավերկու խնձոր,
Սիրիւր եմ կաննեմ
Անուն ի Քրիքոր:

⁴⁴ Ենչափողին մէջ զնաց:

⁴⁵ Քյալադը—ճոթ նյութերն կերակուր՝ արորած
լորթան, ծիրանի չիւր, ոսպ, խախիզա, հաց, սոխառած,
համեմունք:

⁴⁶ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա.
Փիլիքին:

Ծառից ի կախվե
Տավերկու խառն վարթ,
էն ախշիկ կառնեմ,

Անուն ի նվարթ:

Մեր ածուն նանա,

Մեր ածուն նանա,

էն ախշիկ կառնեմ՝

Անուն Անանա:

Կնանցինք Վարանկյ

Ձարկիցինք աղվէս,

Սիրիւր եմ, կառնեմ

Անուն Ախանէս:

Ես քիչ շնմ առնեմ,

Ատէլի Սրպապի,

Կարինէն կառնեմ,

Աշկերն ի թուխ-թուխ:

ԻՄ ԿՅՐԼԽՈՒ ՖԻԹԷՆ

Իմ կլլխու ֆիթէն կուտամ (կրկնել),

Դէ՛ խան ծամթելն ի ծովէն,

— Լողվօրի մէկնէլ ես եմ,

Չեմ խանե ծամթելն ի ծովէն:

Իմ կլլխու շամբան կուտամ (կրկնել),

Դէ՛ խան ծամթելն ի ծովէն:

— Լողվօրի մէկնէլ ես եմ,

Չեմ խանե ծամթելն ի ծովէն:

Իմ մէծանց քյանմար կուտամ (կրկնել),

Դէ՛ խան ծամթելն ի ծովէն:

— Լողվօրի մեկնէլ ես եմ,

Չեմ խանե ծամթելն ի ծովէն:

* * *

Յար ունի, յար ունի,

Յարս յօթն ախպէր ունի,

Յար ունի, յար ունի,

Յօթն էլ կընանցիւր են պանէլու:

Յար ունի, յար ունի,

Նախարակնէն ուղի ծառ,

Յար ունի, յար ունի,

Խնձօր թանկեմ արե տար:

Յար ունի, յար ունի,

Խնձօրի կէս կըծած էր.

Յար ունի, յար ունի,

Չորս պիլիթ առժըթէ էր:

Յար ունի, յար ունի,

Ախպէրս ուղեց շտվի,

Յար ունի, յար ունի,

Սիրած յարի օրթիկած էր:

ՀԱՆԻՄԱՆ, ԶԱՆԻՄԱՆ

Ուրպաթ առատուն աղօթին, հանիման,

հանիման,

Ասինքն էթանք Վանից (Վարագից) իկին,

հանիման, հանիման,

Մեր խուրուղուն տփենք կյետին,

հանիման, հանիման,

Ուտենք-խմենք խետ մեր քլէֆին,

հանիման, հանիման:

Կռկէ Դիքրան ափալ-թափալ

հանիման, հանիման

Չում հաշ-փօղան մէլ լար կնաց

հանիման, հանիման

էսատեղ ինգլանվ, էնատեղ ինգլանվ

հանիման, հանիման

Արաբաշի Կլէվօն կնգանվ

հանիման, հանիման

— Պարի Լյոս քիւ, Կլէվօրք ախպէր,

— Ասուռ պանին, Դիքրան ախպէր,

— Քյո առարէն կուտամ քլըրօվ,

— Թօղ առարէն ես քիւ ծառ:

— Կնիկ-տղա մենք մեր քյուֆաթ,

Վարանկյ կէթանք էսա

ուրպաթ,

Քյրէտ կուտամ չորս մանջիթյամ,

Մարթալլօթ մէկ մանջիթյամ,

— Իմ առարէն, խրեղէն կառք,

Միանք ունեմ թևալոր խալք,

Խանքար արա թօղ հանգլին,

Չում մշակներ ձիանք լծեն,

Կիտեր առին պիքք ու պանին,

էկան մտան մէլ արաբին:

Ճամբան ինգլանք ուրպաթ առատուն

Կնանցին, ընցան ուրպաթ անուն,

Տէլ շխասած Փօթօղմ քյար

Կօտրավ, ինգլանվ խտվու (ետեի) թանքան,

Արին-չարին չում շխտկիցին,

Պանրկէ թելօվ կապկպիցին,

Քյուրլուռալէն քյանքլըլիցին,

Չում Շուշանից տակ պիքիցին:

ՀԱՄ ԳՅՈՒԼ, ՀԱՄ ՎԱՐԹ

Համ գլիւ, համ վարթ,

համ նարգլիւ,


Գլօլի կուռնգլ էրկէն վիգ,

Բաթօ, մամօ, կարքա զիս,

Թանրի մարթու մի տա զիս,


Կառնի ասեղ խշթի զիս:

ԹԱԳԼՈՐԻ ՄԵՐ ՏՅՈՒՎ ԱՐԵ




ՄԱՔՐՈՒՂԻ


(Քարվան էկազ)




ԱՎԱՆՑՑԻ



ԲՈՒԲԻԿ ՄԻ ՔԵԼԵ ԼԱՆՈՒՆԱՆ



ԱՂՔԱՍԱՆ




ԼԼԵՐՆ ԷԿԱՆ




ՃԱՆ ՄԱՐԱԼ ՃԱՆ



ԿԱՐՄԻՐ ՎԵՆՈՅՈՎ ԱՆՉԻԿ



ԾԱՌԻՆ Ի ԿԱՆՈՎ (Դնոցիմ կալեր)



Համ գլխի, համ վարթ,
 համ նարդիդ,
 Գլօլի կռունգ էրկէն վիզ,
 Բարօ, մամօ կարբա դիս,
 Սօլ կարօղի մի՛ տա դիս,
 Կաննի խիրուն խշթի դիս:
 Համ գլխի...
 Գլօլի...
 Բարօ...
 Խնտաղ մարթու մի՛ տա դիս,
 Կէթն տանտեր մի՛ տա դիս:
 Համ գլխի...
 Գլօլի...
 Բարօ...
 Կարտանցվորի մի՛ տա դիս,
 Կլիբի կկարտան, մի՛ տա դիս:
 Համ գլխի...
 Գլօլի...
 Բարօ...
 Շալ կլիթօղի կարբա դիս
 Աննի ուր կլիթօլ պարի դիս:

ՋԱՆ ՄԱՐԱԼ ՋԱՆ⁴⁷

Ջան մարալ ջան, ամբիւր ես ամբի նման,
 Ջան մարալ ջան, շնքայն ես կանդի նման,
 Ջան մարալ ջան, ճիւրն ի էլն առտ իրես,
 Հոյ մարալ ջան, բանդրգանն աստված սիրես,
 Հոյ մարալ ջան, թէ որ Ջանիկ կլիզ կէթնս,
 Հոյ մարալ ջան, իմ սիրածին կընդընես:
 » » » թէ կընդընես զիկ օրօխկես,
 » » » տանի տկէն մուկ կէլնի,
 » » » Ախպէր քլիւրն խուր կէլնի,
 Հոյ մարալ ջան, ես անխալիւր եմ, տիւ ճիւր ես,
 » » » ես զըզըզամ, ալիւ խմես,
 » » » ես վախէնամ, տիւ ծոես,
 » » » ծառի տըկի պաղ անխալիւր,
 » » » առթէ թաս, վառիկ ճիւր,
 » » » պարս կուղեմ՝ էրկու տուր,
 » » » ճիւրն ի ինգլն անվընէր,
 » » » սէրն ի ինգլն պառվընէր:

ՏՕ, ՏՂԱ ԼԱՕ

Աղբիկ.—Տօ, տղա լաօ, զի կլետն ընցու:
 Տղա.—Ձիկ ի՛նչ կուտաս, որ ընցուցես:

Աղբիկ.—Ճայտիս մախէն թօղ քլն էլնի:
 Տղա.—Ճայտիս մախէն ես ի՛նչ անեմ:
 Աղբիկ.—Տօ, տղա լաօ, զի կլետն ընցու:
 Տղա.—Ձիկ ի՛նչ կուտաս, որ ընցուցես:
 Աղբիկ.—Վիզ վընցու թօղ քլն էլնի:
 Տղա.—Վիզ վընցու ես ի՛նչ անեմ:
 Աղբիկ.—Տօ, տղա լաօ, զի կլետն ընցու:
 Տղա.—Ձիկ ի՛նչ կուտաս, որ ընցուցես:
 Աղբիկ.—Մէճացու քլանմար թօղ քլն էլնի:
 Տղա.—Մէճացու քլանմար ես ի՛նչ անեմ:
 Աղբիկ.—Տօ, տղա լաօ, զի կլետն ընցու:
 Տղա.—Ձիկ ի՛նչ կուտաս, որ ընցուցես:
 Աղբիկ.—Տիւ ի՛նչ կուտաս, որ ընցուցես:
 Տղա.—Պարսմ թէ տաս՝ քլն կընցուցես:

ԱՎԱՆՅՅԻ⁴⁸

Հօյ նար-նար, Ավանցի:
 Էսօր մեր տուն խարսնիս կա,
 Հօյ նար-նար, Ավանցի:
 Խարսնիս կանենք տեղ չկա,
 Կօյտ փեսին բեղ չկա:
 Պոտկօլ փալ ի փիցի,
 Կարբա-եղօլ եղիցի,
 Վանն խօջին կիրցուցի,
 Կիդր քլոմիւր տաս կուտու,
 Տանինգից վանիցի,
 Մեր պատ պլանլ քլօ անպօլ,
 Մեր խօրօտիկ խարսն անպօլ:

ՄԱՐՈՐԻՆԷ⁴⁹

Քյարվան էկալ զնգլնգլալէն,
 Մարբուհի ջան, Մարբուհի,
 Մէլ քանդին ճիւրն կէր,
 Մարբուհի ջան, Մարբուհի:
 Ճիւրն քլամալ սնդիւկմ կէր,
 Մարբուհի ջան, Մարբուհի:
 Մէլ սնդիւկն բօխէմ կէր,
 Մէլ էն բօխին շուշիէմ կէր,
 Մէլ էն շուշիին հալիւկմ կէր,
 Մէլ հալիւկն ախիւկմ կէր,
 Ալքն ու ընքլվեր խրեղէն էր:
 Ախիւկ, ախիւկ, անուտ ի՛նչ է,
 Մարբուհի ջան, Մարբուհի,
 Ախիւկ, ախիւկ, սէրտ տուր ձիկ:

⁴⁷ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, Լալազրեց՝ Ա. փոլին:

⁴⁸ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, Լալազրեց՝ Ա. փոլին:

⁴⁹ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, Լալազրեց՝ Ա. փոլին:

Մաքրուհի ջան, Մաքրուհի
— հորած խեղճութեամբ, Դավիթ ի՞նչ է,
իմ խէր լսի՛ր քեզ կսպանի,
Թրով դանի, խոկիլիտ խանի,
Արունտ խառնի կյիկնուն խմի:
Տղան.

— Ախի, ախի, քսան տարէկան,
Քո՞ խօրն ասա, քեզ տա իրկան,
Վեր լմնաս վեր քո՞ խօր տան,
Ախպօրտ կիյտեր իրես կուտան:
Ես ի՞նչ անեմ վիզ ու վզնոց,
Ջահէլ կուզեմ մտնի իմ ծոց,
Որ խամբիւրի իմ սրտիս խնց:

Տղան.

Քյանի էկա ծեր տուտ փակ էր,
Տիրմ էլ էկա ավեր ամակ էր,
Վեր շիր առնե՞ թող շխապիր,
Խնկար ախպէր քո՞նր կպարբիր:
Իրիկուն է, բերի կյանի է,
Բերի ճօր թիվէս կախ է,
էկան ասիս յարձ յախ է,
Աշկերս առցունքի, սիրտս ուրախ է:

ԼՎԵՐՆ ԷԿԱՆՏ

էլա՛ կննցի շում մեր Փրիսուս,
Լվերն էկան ժողովան կլլիսուս,
Զթօղիցին ինգնի լլիս,
Կէս կիշերին միցին տիւս:
Լվերն էկան լավազ-մավազ,
Կնմանեն՝ փանջի կավազ,
Լվերն էկան տեղին-մեղին,
էկան թառան փեսի բեղին,
Ճկոցուցին խարսի լեղին:
Խմբար տարան տէկէրկընգյան,
Մեռքեր իզար վեր ուր ծնգյան,
Պտղտովով ծեռաց մըռցան,
Հմէն մըռցան շանձ պատընցան,
Վալէլէ՛ր, Ջուլօ, վալէլէ՛ր:
Քյո տարօղի տուն ավիւրէր:
Կլլիսուն ինգյան թախի ֆուէն:
Աման լվեր, յաման լվեր,
Կարակնգյուղ կարմիր լվեր,
Կիշեր կէլենն ճվերն է վեր,
Ցերէկ կէլենն սնեւն է վեր:
Հայ չա՛ր լվեր, մաղանթ լվեր,
Սլլլլլլիկ մեջիկ լվեր:
Լվերն էկան ուրուս-մուրուս,

էկան թառան վեր խնամուս:
Զթօղիցին որ պանցվէր լլիս,
Կիշեր խնամուն փախցուցին տիւս:
Լվերն էկան ան-թան,
Զիթ կզանեն առանց փանթ,
Հա՛ կթռնեն քոշից քոշան,
Դիւնջ շեն թողն խարս ու փէսա:
Հա՛յ անիծած կարմիր լվեր,
Կարակնգյուղ կարմիր լվեր:

ԱՂՔՏԱՆՍ

Ախպիր կասի.—
Ես Աղքատան շուռ-մուռ կուլլանմ,
Զանիման, Զանիման:
Պտտուրն ալուկն ալան, Զանիման, Զանիման,
Մմեռ կէլենն էրեւկան, » »
Կյարուն կէլենն կուրիսական, » »
Խմբար տարբեր իմ ճրպանին, » »
Որ ճիւր լցի մէլ ալիսին, » »
Կտէլ-կտէլ ցվրի խալիսին, » »
Ճաշկիտեր կասի.—
Սալան արէք քեռքեռական, » »
Ժողկենք էթանք իստենք ալան, » »
Կօտ խորէմ մեր ճրպանին, » »
Տէլ շի տվե, կառնի փէշին, » »
Լէշիկ տենն վեր ճիւղ նաշին, » »
Որ չկորէր մեր ճաշկ պանին, » »
Քյանքերի տուն էլնի վէրան,
Սուն կնտրի, մնա կէլան, » »
Տարին խնկար կուտուշ կէլան, » »
Ճյուր շխառավ դահի պէրան, » »
Աղքատան ցածր է Սոֆու դահի, » »
Պուտմ ճիւր շի ծնծնա փորէն, » »
Քյանքան պակաս չէլով խորէն, » »
Տիրվանք կըտրան թխթմորէն, » »
Քյանքան կասի՝
Մօ՛, շան Թուման, շան պուրճիկ, » »
Կպտկվես օր կես տուճիկ, » »
Որ հանիս ուզեմ, կեննա կուճիկ, » »
Փախենա մտենա նեղ պուրճիկ, » »
Անշանք զարկի տուան լանգյան, » »
Սօլս մաշավ, փոքսող ինգյան, » »
Ումուտ կանեմ, նիրսանց տիւս կյան, » »
Բանքի շառ-թիւ իմ հանիս տա, » »
Անշանք զարկի տուան ճիւկ, » »
Կնգյան խառ կանէր խոնջիկ, » »

ՏՏ Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչանը, Հայնազրեց՝ Ա. Փիլիկ:

Քյն անիծի սուրբի Մկրտիչ, » »
Իմ հանիս տուր, թէ շատ թէ քիչ, » »

ՃՂՕՐԻ ԵՐԳ

Քյիւֆ հը քյիւֆ դանն դանն,
նս էլն պեոթ բանն,
Կանչիցի Տեր-Ջանքյանրա,
Խոնդի, մոմ խանդար արա,
Առաւօտուն պաշտօն արա,
Իրիկուն խթում արա:

Փիւ էն պուճախ, փիւ էն պուճախ,
Մեր քաւորանց մեղրի պուճախ,
Շէն կենա իմ խօր օճախ:
Քյիւֆ հը քյիւֆ դանն դանն,
նս էլն պեոթ բանն,
Իմ ախպէր վէր էն պեոթին,
Վանկի թուր վէր էն թրին,
Կէրթն խաղա տէմ լիւսնկին,
Լիւսնակ տփեց մէշ իրիսին:

Փիւ էն պուճախ, և այլն:
Քյիւֆ հը քյիւֆ էթնմ փտոնմ,
Իմ ախպօր կնիկ ճարնմ,
Վորտեղից ճարնմ, որտեղից ճարնմ,
Վանքկա սարից ճարնմ:

Փիւ էն պուճախ, և այլն:
Տուղ տփեմ մարմար քյարօվ,
Մտնեմ ներս զանրամանքօվ,
Խէր խորեմ թասմ արաղօվ,
Փիւ էն պուճախ, փիւ էն պուճախ, և այլն:
Մէր խապեմ մատմ խինօվ,
Ախպէր խապեմ պօլատ ծիոփ,
Ախլիկ պիրեմ խանդար պանօվ:
նս պանպանիկ, տիւ պանպանիկ,
Քյաւորկին ինզանլ տուճիկ,
Քյաւորն էկաւ տիւ կխանէր,
Ոտնէն պոնած տիւ կքյանշէր,
Փիւ էն պուճախ, և այլն:
էշ քյանշիցին թօրվան պէրան,
Ոտկերն արին սուն ու կյէրան,
Կյլօխն արին փանշան կէրան,
Ուսկոտն արին կօղվի մէրան,
Կաշին արին դիւֆ-նաղարա,
Կուպօն զանի, Խուպօն խաղա:
Փյու էն պուճախ, և այլն:

ԷԼԷՔՑ ՏԻՍԷՔ

Էլեքյ տիսէքյ վնվ
ի կիրե մեր էծ.

Կյէլ վէր էծուն,
էծ վէր ուլուն,
Ուլ, վէր թփան,
Թիւփ վէր, իկյուն,
Իկյին Վանքկյան,
Տակն անկոկյան,
Ինշ բէթասես,
Վերէս կուկյան,
Խալալէր, շալալէր,
Ինշ վանրի տանրի էլ,
էկաւ գյոլէր մե
Գյո վէր մե:

Էլէքյ տիսէքյ վնվ ի կիրե մեր կյէլ,
Առն ի կիրե մեր կյէլ:

Առն էր կյէլուն,
Կյէլն էր էծուն,
էծն էր ուլուն,
Ուլն էր թփան,
Թիւփն էր իկյին,
Իկյին Վանքկյան,
Տակն անկոկյան,
Ինշ որ ասես,
Վերէս կուկյան, և այլն:

Պարերուն մեջընդմեջ Վանլի Խորենի
խումբը սարքեց սննդակի խաղեր, որպիսիք
հետեւյալներն են.

Կեհա-կիկյա (կերթա-կուգա).— Խաղցող-
ները բոլորակի կնտիին բաղմոցներու վրա,
հինգե տաս հոգի, և կընտրեն իրենց խմբա-
վարը, որ կըսն նախադասութիւն մը, որու
մեջ կեհա-կիկյա բառերը կգտնվին: Օրինակ՝
Յըմ խղար կեհա-կիկյան, կեհա-կիկյան
Խմբավարի կողքին նստողը պիտի կըրկ-
նե խմբավարի ըսածը և ինքն ալ պիտի
ավելցնե իր կողմն երկրորդ նախադասու-
թիւն մը, այսպես.

Յըմ խղար կեհա-կիկյան, կեհա-կիկյան:

Յըմ լեղուն կեհա-կիկյան, կեհա-կիկյան:

Երրորդ անձը պիտի կրկնե առաջին եր-
կուքին ըսածները, ինքն ալ ավելցնելով
ուրիշ նախադասութիւն մը և այսպես հա-
ջորդաբար: Դիտելի է, որ բոլոր նախադա-
սութիւնները վերջանան կեհա-կիկյան բա-
ռերով, և արգարացնեն նախադասութիւն
միտքը, և խաղացողները շատ սուր միտք
ունենալու են, որ կարգաւ և առանց սխալի
կրկնեն բոլոր նախադասութիւնները: Խմբ-
ավարը աշաւորը կհսկու Մխալվոզները
երկու տեսակ տուգանքի կենթարկվին: Կամ
սխալողի երեսին մուր կքսեն և կամ սխա-

լողը խմբավարը շալկած սենյակի մեկ կողմէն մյուսը պիտի տանի:

Հավկիթ պանել.—Առ հում հավկիթ մը և ըսն ընկերներուդ, եթէ որեւէ մեկը այդ հավկիթը պահէ, դուն մեկ փորձով իսկույն կգտնես զայն: Նախքան սենյակին դուրս ելնելդ, մտերիմ մը ունենալու ես սենյակին մեջ, որ քու մարգարեութիւնդ փորձել ուզող միամիտը շփոթեցնեն, ըսելով, —«հոս դիր, հոն դիր», և, վերջապես, «գլխարկիդ տակը դիր»:

Ներս երթալեդ վերջ, լավ մը դիտելէ հետո, ընկիւթդ պարզ է, ձեռքդ ամենայն ուժով գլխարկին վրա կզարնես և հավկիթը կտորվելով, կսկսի ծորել պահողին երեսն ի վեր:

Աչխ-կապուկ.—Սենյակի մեկ պատեն մյուսը թել մը կապել: Այդ թելն որոշ հեռավորութեամբ քանի մը խնձորներ կախել որիւր թելերով: Ապա կանչել մեկը, ցույց տալ անոր խնձորները և աչքերը կապելէ հետո, տեսողութիւնը փորձել: Հետո քանի մը քայլ հեռացնելով, ինքն իր վրա քանի մը անգամ դարձնել և ձեռքը մկրատ մը տալով, թողուլ, որ գտնէ խնձորներու թելը և կտրել: Պայման է, որ միայն մեկ ձեռքը գործածեն:

Առանց արձոյի նստիլ:—Խաղին կրնան մասնակցիլ 15—20 հոգի, նայած սենյակի մեծութեան: Շրջանակաձև կանգնելէ հետո, յուրաքանչյուրը իր ընկերոջ ծածրակին նայելու է, ապա աջ ոտքը առաջ նետելով, ամենքն ալ նստելու են: Ոչ մեկը պիտի իյնա, որովհետեւ մեկի ծունկը մյուսին իբրեւ նստարան պիտի ծառայէ: Ժիշտ այդ պահուն փոքրիկ մը ուրիշի օգնութեամբ նստողներուն ուսերուն կը քարձարնա և կսկսի ցատկել մեկէն մյուսը:

Դիակ փոխադրել.—Քսան-երեսուն հոգի ուղիղ կկանգնին, աչքերնին իրարու ծոծրակին հառած: Ապա կնստին և կպառկին այնպէս, որ մեկի գլուխը մյուսի փորի վրա հանգչի: Հետո ձեռքերնին ու ոտքերնին վեր կպարզեն: Ժիշտ այդ ատեն երկու ուրիշներ, երրորդ մը գետին պառկեցնելով, կվերցնեն զայն ու գետին պառկողներու շարքին մոտեցնելով, շարքին ամենաառաջինի ձեռքերուն և ոտքերուն վրա կգետնուին: Եւ պառկող տղան մինչ ձեռք-ձեռք անցնելով, շարքի վրային պառկած գործիքան մեջ,

շարքին վարը կփոխադրվի, առաջին շարքին վրա երկրորդ մը և երրորդ մը գետնեղելու է հաջորդաբար:

Ջուրեն բերնով դրամ հանել.—Ջուրով լեցուն քանի մը պնակներու մեջ մետաղե դրամներ նետել և սենյակի հատակին վրա դիր, իրարմ մեկ քայլ հեռու Պնակին թիվներուն շափ ալ մարդիկ ընտրելով, յուրաքանչյուրին ձեռքերուն բով մատները նստնին տանելով, ամուր մը կապել առանձին առանձին և առաջարկել:

—Ջուրին մեջ նայեցեք և ջուրին մեջ եղած դրամը բերնով դուրս հանեցեք:

Հարց-պատասխան.—Սենյակի մեջ գտնելով ողնեքուն թուղթեր բաժնեցեք, առաջարկելով, որ իրենց թուղթերուն վրա ընթերցելի գրով մեկ-մեկ հարցում գրեն: Ապա երկրորդ անգամ թուղթեր բաժնեցեք և խնդրեցեք, որ այս անգամ իրենց ուզած պատասխանը գրեն թուղթի վրա: Հավաքեցեք այդ թուղթերն ալ զատ տեղ մը և սկսեք կարգաւ մեկ թուղթ հարցումի տրցակեն, մեկ թուղթ պատասխանի տրցակեն:

Գլխարկի տակի ջուր.—Գրասեղանի վրա գալաթ մը ջուր դիր, գլխարկը վրան դիր, երգում ըրն, որ դուն առանց գլխարկին զպչելու կրնաս այդ ջուրը խմել: Հետո սեղանին տակը մտիր, խմելու պէս կում-կում ձայներ հանն, մատովդ գրասեղանին զարկ, ապա սեղանի տակէն դուրս ելիր ու ըսն:

—Հիմա, պարոններ, գլխարկը վերցուցեք և տեսեք, թէ ջուրը խմեցի: Երբ միտ մը գլխարկը կվերցնեն, դու իսկույն գալաթը վերցուր ու խմն, ըսելով,—ես խմեցի ջուրը, առանց գլխարկին զպչելու:

Թագավոր.—Կամանակցին ութ կամ տասը Էրկսեռ անձինք: Կընտրեն իրենցմէ միամիտ մը, զայն թագավոր կընեն, գոգնոց մը վրան քաշելով և գլխին գնելով մեծ ու շինծու գլխարկ մը, կնստեցնեն աթոռի մը վրա: Ապա անոր ջուրը կհամալրեն վեց-յոթ հոգի, որոնք արթուն հսկողութիւն կընեն, որպէս թէ թիկնապահներ են: Կանխավ եղած կարգադրութեան մը համաձայն, քանի մը թոպի հետո, ուրիշ մը, բռնած իր ընկերոջ օձիքեն, քաշելով կրերե թագավորին առաջ ու կընն:

—Թագավոր ապրած կենա, ես ոստիկան մըն եմ և պաշտոնս կատարած ատեն տեսա, որ այս մարդ խանութ մը մտավ,

թոփ մը պատմա գողցավ և կիսնդրեմ, որ վճիռ մը տաս այս գողին:

Թիկնապահներու գրգռմով, թագավոր և տքի կելլե և անոնց օգնութեամբ ու խորհրդով գողին վեց կամ յոթ ամիս բանտարկութեան վճիռ կուտայ: Դիտելի է, որ մինչ թագավոր զբաղած էր այս դատաւարութեամբ, Թիկնապահներն մեկը թագավորի աթոռը զղուշութեամբ կտանի հեռու անդ մը կղնն:

Երբ թագավորը դատը վերջացուցած և Թիկնապահներու խորհրդով կուգն նորեն աթոռ վրա նստիլ, գետին կիշնա, ոտքերը վեր տնկելով և խաղը կվերջանա քրեիքներու մէջ:

Բան մը պահել.—Ամասնակցին հինգ-վեց հոգի և կընտրեն իրենցմէ միամիտ մը, որ առարկա մը պահ և հեռուն գնացող խորամանկ մը, իր աչքերը զոցած, որպէս թէ երբ վերադառնա, իր իմաստութեամբ ու մեկ ակնթարթով կրնա գտնել պահված առարկան:

Երբ մյուս ընկերներու գրգռմով միամիտը որոշված առարկան իր գրպաններուն մէջ տեղ մը կպահէ, զուրս գտնվող և որպէս թէ աչքերը զոցող իմաստունին լուր կուտան, որ զա և անմիջապէս գտնէ պահված առարկան: Իմաստունը կուգա, միամիտին լավ մը կդիտէ շատ լուրջ կերպով, ապա կըսն.

— Ես գիտեմ, թէ ուր պահած ես այդ առարկան, բերանիդ մէջ պահած ես, հաճիս՝ բերանդ բաց, որ նայիմ:

Միամիտը, որ բոլորովին վստահ էր, թէ իր բերանին մէջ ոչինչ ունեւ պահած, բերանը լայն մը կբանա: Զիշտ այդ պահուն իմաստունը իր գրպանը ունեցած ալյուրեն կամ հողեն ճանկ մը ապուշին բերանը կնետն և խաղը կվերջանա խնդրեցներու մէջ:

Հարսենիյը (խարսենիյը) և հարսենիյը.—Երեկոյան ժամը 10 անցած էր, նվագախումբը հռաւդով կնվագէր, երկուսարդները իրենց խաղերով սենյակը կթնդացնէին, երբ լուր տարածվեցավ, որ հարսնախումբը.—Երեկոյան ժամը 10 անցած էր, նվաիրենց հորեղբայր Մարկոս՝ լապտեր մը ձեռքերին, ներս մտան:

Վանի մէջ սովորութիւն էր՝ պսակեն շորս-հիգը ժամ վերջ, հարկի ընտանիքի անդամներն մի քանիներու փեսայի տունը

երթալը՝ տրտում հարսը քիչ մը զվարճացնելու ու միտքարելու համար:

Կոր Սեթոն իր նվագախումբով, Վանի խորեն իր խումբով հարսնեւորները ուրախ պահեցին մինչև առավոտյան ժամը շորսը: Հարսնեւորներն ոմանք ալ մեկիկ-մեկիկ սենյակեն մեկնեցան կիսախուփ աչքերով և անկուններ փնտրեցին մրափելու համար:

Երկրորդ օր առավոտյան, ոմանք, թեթև հախաճաշ մը ընելէ հետո, իրենց տունները մեկնեցան, բազմավաստակ բարեմադիւթութիւններ ընելով փեսային, հարսին, չովհաննես Աղային և Մարանոս Խաթունին:

Միսկներ և ուրիշ մոտիկ բարեկամներ մտադրած էին այս հարսանիքը շորս օրվան վերածել: Ուրիշ խոսքով՝ կուգնին իրենց պնդեցնողութեամբ մնալ, ուտել, խմել, պարել և ուրախութիւն ընել: Մանավանդ որ Կոր Սեթոնի նվագախումբն ալ Միսկներու ստիպման տակ հանձն առած էր մնալ և նվագել:

Կհիշեմ՝ հարսանիքի երկրորդ օրն էր, կեսօրն հետո ժամը երկուրը, երբ Խմբուրի Լոթօն, Արմաղաց թաղի ուժեղ երիտասարդներու ախոյանը, մտալ չովհաննես Աղային ախոռը, էջերեն մեկուն բերանը քիչ մը օդի լեցուց, ապա Մովսէս Նշանի (բազուկներու ուժով օժտյալ ուրիշ մը) օգնութեամբ, էջի փորին տակեն շվաններ անցնելով, կոնակն առաւ և էջը շալկած կամաց-կամաց ու տրաքալով երկրորդ հարկը հանեց և հարսնեւորներու սենյակի մեջտեղը կանգնեցուց: Էջը հարբած ու զոդողուն, սրունքներու վրա հազիվ կանգնած կզողար, և զարմացած այս անսովոր ընթացքն, երկար ականջներ տնկած այս ու այն անձի կդիտեր խնդրե, ծիծաղ, զարմանք, ուրախ բացականչութիւններ իրար հաջորդեցին: Շատեր էջը այս ու այն կողմը հրեցին ու հրմշտկեցին, ոմանք էջին քացի տալով, իրենցմէ հեռու պահել կջանային: Վանի խորեն էջի վրա ցատկեց հակառակ կողմն, երեսը ետեկ կողմ զարձուցած, ծոցեցով, էջի պոչը բռնեց և ըսավ.

— Էջը քաղաք կերթա, ես՝ գլուր:

Միսկներ խումբ, ամեն վայրկյան պատճառ մը, բան մը, գործ մը կփնտրէր հարսանիքի ուրախութիւնը երկարաձգելու և իրենց հոն մնալը արգարացնելու համար: Չովհաննես Աղան ունեւ կուլեր և էջեր:

Ախոռի մէջ անոնց արտադրած տառքները գարնան ատեն մշակ Սերգոն կողովով այգին փոխադրած էր ու հոս ու հոն տարտըղնած շորնալու համար:

Վանի խորեն գաղափարը հղացավ ձմեռւա շատ պետքական և այգին տարածված այդ շորցած ցաներն, տառքներ ու փթիրները վառելիքներու հատուկ ամբարանոցը համաքել տալ, որ երկու-երեք օրվա գործ էր տանեցիներու համար, ուստի սենյակը մտավ և սկսավ բռնալ:

— Քաւորաղայութիւնց: Փթիր կրելութիւնց: (Այսինքն՝ քավոր աղա կամք կուտա՞ս, որ շորցած փթիրները ամբարանոցը համաքենք ձմեռվա համար):

— Բնոօթի⁵¹ աղվեսներ, որթկան ցիցէր⁵², սատանի պուպոններ ու անառակներ, կնանցեթ, ինչ կուզէթ արէթ,—հոխորտաց կնքահայրը:

Մխկներ խումբ, խորենի առաջնորդութիւնը այգին ելավ: Ամէն մեկը հանց իր վերադրուուն և այս ու այն ծառի ճուղկն կխխեց: Թւերին սոթեցին և սկսան փթիրներն ու տառքները ձմեռվան վառելիքի ամբարանոցը համաքել: Տեսնելու բան էր, թե ինչպէս քրտնաթոր կաշխատեին: Շատ շանցած ամբարանոցը լեցվեցավ և փթիրները շարվեցան կանոնավոր կերպով: Այս հոգնեցուցիչ գործեն հետո, անշուշտ, երիտասարդներ նորեն սեղան նստան, նորեն կերան ու խմեցին, պարեցին ու զվարճացան:

Մխկներու խնդրանքին վրա Կոր Սեթոյի նվազախումբը նվազեց հետևյալ խաղեր՝ թանգարա, մամուր, փափոռի, թամուրի, մշուխըռ, կասապ աղասի, խարբութ աղասի, լուտկի, սընջանն և այլն խաղեր, որոնք կպահանջեն հմտութիւն, ծունկերու և ոտքերու ճկունութիւն ու շարժումներու համաշխարհային, հատկութիւններ, միայն երիտասարդներու հատուկ:

Մխկներու ստիպման տեղի տալով, Ոզմա Կյորոն ձեռքը ականջին դրած իրարու հետև և իր բարձր ու անուշ ձայնով երգեց հետևյալ քրդերեն երգերը՝ հեղի բաժո, աղայն խորթան լո բրինդարո, կոռն խարսան, ավ սալ սալա պարֆեվո, և քրդական ողբ մը, որու անունը չեմ հիշեր:

Այդ օր երեկոյան հարսնեւորներեն շա-

տեր իրենց տունը մեկնեցան երկար ու սրտառու բարեմաղթութիւններ ընել հետո:

Երրորդ օր առավոտյան մխկներ խումբը նորեն գործի վրա էր: Անոնք շատ կանուխն արթնցած, երեսնին լվացած, նորապսակ ամուլին կսպասեին:

Քաղաքի և գյուղերու մէջ սովորութիւն էր փեսան և հարսը երրորդ օրը արևածագեն առաջ տանիքը հանել և երգել «էգ բարն» երգը:

Լեռն և իր նորահարսը, Մխկներ և քանի մը ուրիշ հարսնեւորներ արդեն տանիքն են արշալուստն առաջ: Խորեն թաշկինակի մեկ ծայրը Լեռնին և մյուս ծայրը հարսին ձեռքը տալով, դանոնք մէջտեղը կանգնեցուց, ապա երիտասարդներ սկսան երգել հետևյալ երգը, արևածագն առաջ, որպէսզի արեն իր նորածագ հառազայինները ամուլին վրա զարնելով, անոնց կանաչ-կտրիճ զավակներ պարգեն: Երգը ուղղված է նոր ամուսնացող ամուլին, մանաւանդ փեսային:

Պանիլիսու տէմ կայնիր ես

Ալ նարնջին տիւ խակլիր ես,

Կանանչ-կարմիրն էլ կապիր ես,

Աստված քն պախի քն պարզիր ես,

Քչ թագուհին պանծի վայելիս:

Էգ բարև, ա՛յ էգ բարև,

Էգն արևուն տանք բարև,

Մեր թարվորին շատ արև,

Մեր թարվորին շատ արև:

Վահհ՝ վահհ՝ վահհ՝...

Այս երգը կրկնեցին շորս կամ հինգ անգամ, միայն փոխելով առաջին տողը. այսպէս՝

Խեք բաղիւքի տէմ կայնիր ես,

Լոս-լուսանակի տեմ կայնիր ես,

Լոսու-աստղի դեմ կայնիր ես:

Արեգական տէմ կայնիր ես:

Վերահիշյալ երկնային մարմիններու մասը (որ շատ հին ժամանակներն մնացած էր, գուցե հեթանոսական շրջանն) երգելի հետո, սկսան հիշել վանքերու անունները, որը կկոչվի քրիստոնեական ձևը: Երկնային մարմիններու տեղը հիշելով Վանին մոտիկ գտնվող վանքերու անունները, և նորապսակներու դեմքերը հիշված վանքին կողմը դարձնելով: Այսպէս.

Ջուխտ Վանքիւն տէմ կայնիր ես,

Ալ նարնջին տիւ խակլիր ես,

⁵¹ Պառօթ, կնշանակն արեգտեմ:

⁵² Որթկան ցից, կնշանակն բարակ վիզ ունեցող:

կանանչ-կարմիրն էլ կապիր ես,
Աստված քյե պախի քյե պարզիրես,
Քյո թաքուհին պարծով վայելես:

էգ պարե, ա՛յ էգ պարե:
էգն արևուն տանք պարե:
Մեր թաքվորին շատ արե
Վահ՛ն, վահ՛ն, վահ՛ն...

Այս փոխելով միայն առաջին տողը,
կրկնեցին այս երգը շորս-հինգ անգամ:
Այսպես՝

Ախթամարա տէմ կայնիր ես:

Ախթամարա տէմ կայնիր ես:

Ասպարածնա տէմ կայնիր ես:

Խոկյուց Վանից տեմ կայնիր ես:

Տէսկանվորտու տէմ կայնիր ես:

Երուսաղմա տէմ կայնիր ես: Եվ այլն⁵³

Այսպես, վանքերու անուաները փոխելով,
շարունակեցին երգել, մինչև արևածագ: Ա-
պա նորասպասկ ամուրը հետերին անած՝
տանիքեն վար իջան ու նստան ճաշի:

Երրորդ օր երեկոյան, զրեթե բոլոր
հարսնետոներ մեկիկ-մեկիկ իրենց տուններ
մեկնեցան, շնորհավորելով, բարեմաղթե-
լով, օրհնելով: Մնացին միայն Մխկներ և
բանի մը մոտիկ աղգականներ:

Ալ ճարեցին.—Միրանեգույն հագուստ,
որ թագավորներու հատուկ էր, և որովհետև
նորա փեսան ալ իր ընտանիքին վեհապետն
էր, պետք էր հագնել թագավորներու հա-
տուկ ծիրանի հագուստ, որ պնդակտր էր
և կկոշվեր աղապաղա, աղայի հատուկ հա-
գուստ: Այս բառեն ծագած է աղբեն վերետ
ըլլա, տարոս քեդի ասություններ, որոնք
կըսվեն հյուրերու կողմեն՝ փեսան շնորհա-
վորելն հետո ամուրիներուն դառնալով: Ա-
ռաջինը աղավաղվելով՝ այսպես վերեդ ըլլա
(փակաղեղե, հայպա) ծաղրական ասության
փոխված էր: Կկարծվի թե «տարոսը» աղա-
վաղյալ ձևն է «տարադ» բառին, երևի փե-
սային տարադին ակնարկելով:

Կանանչ-կարմիր.—Հավանաբար, կա-
նաչ-կարմիր նարտոն էր, որ խաչաձև փե-
սայի գլխին կկապեին, որ թագ կամ պսակ
ալ կկոշվեր:

Խեհ-բազում.—Օրիոն-Հայկ և Բույլթ

⁵³ Բարի լույս.—Կնշանակե արշալույս, որ քրիս-
տոնեացած ձևով շաղաթաթախ ազդերան կկոշվեր:
Այնքան նվիրական մեր մամիկներուն համար, որոնք
անով երգում կենին, կաղթեին, կանիծեին և կօր-
հնէին:

համաստեղությունը:

Լուսու-Աստղ.—Արուսյակ կամ Լուսնթագ
աստղը:

Շատ առե.—Երկար կյանք:

էգ պարե.—էգուց, այգ կամ առավոտ,
այսինքն՝ ողջույն, ով առավոտ կամ՝ ող-
ջույն արևին:

Ուոց կտրել.—Զորորդ օրը, առավոտ-
յան ժամը 10-ին ատեններ, Տեր Պետրոս
քահանան նորեն Հովհաննես Աղայի տունը
եկավ, ուոց կտրելու արարողությունը կա-
տարելու համար:

Փեսան ու հարսը սենյակին մեջտեղ
դեմ-դեմի կանգնեցուց, գլուխին և ճա-
կատնին իրար դպցնելով: Այն բարձը, որուն
վրա պիտի քնանային, դրավ հատակին՝
նորասպակներու մեջտեղը, խաչերու նշան-
ներով դարդարված ուրար մը նորասպակ-
ներու գլխին նետեց (ի նշան միության),
սպա կարգաց ըստ պատշաճի քանի մը
աղոթքներ, օրհնեց, խաչակնքեց և «Հայր-
մերով» վերջացուց:

Զրուցելա.—Հետո վեր առավ ուրարը,
իրարմե քիչ մը հեռացուց նորասպակները,
փեսա առավ խաչը փեսայի կուրծքեն, զոր
եկեղեցվո մեջ պսակեն հետո անոր կուրծ-
քեն կախած էր որպես նվիրական Ուոց կամ
հուսութ և հարսի գլխին բոլորովին վեր-
ցուց քողը: Ապա առավ զավաթ մը գինի,
կեսը փեսային խմցուց և մյուս կեսը՝ հար-
սին, որպես միության և սիրո նշան: Ահա
այս ատեն առաջին անգամ հարս ու փեսան
իրար երես տեսան ու իրար հետ խոսեցան:
Հարսի առաջին անգամ խոսելուն առթիվ,
փեսան երկու ոսկի նվեր տվավ հարսին:
Այս նվերը, որ կկատարվեր ըստ կարողու-
թյան կամ ունևորության, կկոշվեր Շջուու-
ցեկա:

Վանե, վանե, վանե.—Այս բացականչությունը
գուցե հին շատավանքերու աղավաղյալ անուններեն
մէկն է, գուցե Վահ կամ Վահագն շատավանքերու
աղավաղյալ ձևը, որոնք կհիշվեն խախտանքներու
կամ տրամաթյուններու ժամանակ, որպեսզի աստ-
վածներ զայն և աներևութաբար ընկերանային իրենց:
Դիտելի է, որ Վահ բացականչությունը միայն արա-
կան պարերգներու մեջ կհիշվի, իսկ իզական պա-
րերգներու մեջ կհիշվի նախա և կամ Տանախ, կամ
Նանե, որ Արամազդ շատավանքի դասեր անուն էր,
պաշտված հայերի, և որուն մեհյանը Վասդուրակա-
նի Անձևացաց զավաթին մեջ էր, այժմու Հոգոց կամ
Հոգյաց վանքին տեղը:

Շատ հին ատեններ, ըստ ավանդության, այս խորհրդավոր գինին քահանան կիսմցներ ամուսնացող զույգին այն արծաթյա թասով, որ հարսնացուն իր աղջիկության շրջանին զվարճանք վրա կկրեր իբրև զարդ և իբրև նշան կրուության: Այս թասին վրա փորագրված կըլլային արևի, լուսնի և աստղերու պատկերներ, վերջինս՝ նաև խաչի պատկերներ:

Թասը աղջկան զվարճանք վրա կառնվեր և այդ թասով գինի կամատուցվեր նորապսակ ամուսին: Երբեմն այդ թասը եկեղեցիին կնվիրվեր և երբեմն ալ նորեն հարսին կվերադարձվեր: Հարցը թասը նորեն իր զվարճանք վրա կկրեր և ամուսնության յոթ տարիներ անցնելէ հետո, տան մեջ եղող ուրիշ աղջկան մը կփոխանցվեր: Այս թասի սովորությունն ալ կամաց-կամաց վերջացավ: Մեր օրերուն միայն քյուրդերու և ասորիներու մեջ կտեսնվեր հոս ու հոն:

Ուոց կտրել.—Վանի մեջ կնշանակեր փեսայի և հարսի հուռութիւնը վար առնել կամ դուրս հանել, պսակեն երեք կամ չորս օր հետո:

Հին ատեններ նորապսակ ամուսինը՝ շար աչքե ազատ մնալու, բախտենին միշտ բաց պահելու և նախանձորդներու նենգութուններն զերծ մնալու համար՝ իրենց վրա կկրէին հուռութիւնը, ասեղներ, հմայիկներ, զրպաներու մեջ յոթը հանգուցներ կրող կապույտ թել մը, գոցված կղպանք մը, դմելի մը և այլն:

Հնդիկներ շատոված մը ունեին, որ կկոշվեր նիւթ: Այս շատովածը իր զորութիւնը, իր շանթերը կղնի նախանձորդներու աչքերուն մեջ և շար զորութեամբ լեցված նախանձորդներ կվիճակէին մարդոց, կենդանաց և առարկաներու: Ահա այս կործանարար շանթերը շնորհաբանելու համար, մեր նախնիք հնարած էին շարը խափանող առարկաներ:

Երբոր մեկը շատ կհորանջեր, կըսէին՝ «նիյաթ ի առն»:

Կախարդներու շինած մայկեկներն (նուխաս և թիլիսմա) զուտ հասարակ ժողովուրդն ալ գտած էր առանձին նյութեր, շար աչքը խափանելու համար: Այդ առարկաներն էին՝ խեցեպատյաններ, կոտոշ, հին կոշիկ, կանաչ ու կարմիր մետաքս իրք և նարոտ, ծայրը կոտրած ասեղի մը մեջ

անցած կապույտ թել, սև սունիճ (արջնդեղ), էրեթնակ կոշված փշալից բույսը, դժնիկ (փուշ), լաշ կոշված ծաղին ճուղը, ուոց կոշված վայրի ծեփրին, արծաթե և պողպատե շինված օձի, կարծիի, մողեսի և գորտի նմանող զարդեր, կապույտ հուռութիւն ու հուռութիւններ, օձի շապիկներ և այլն:

Վերոհիշյալ առարկաներն որևէ մեկը իր վրա կրող նորապսակ ամուսնու շար աչքե հետու կմնար և բախտավոր կըլլար: Իսկ եթե մեկը վրան կրեր այս առարկաներն մեկը կամ հմայիկ մը, ոչ թե շար աչքե՝ նույնիսկ պատերազմի ալ երթար՝ անխոցելի կզառնար...:

* * *

Զորերդ օրը երեկոյան վերջապես կոր Սէթուի խումբը մեկնեցավ, որուն հետեւեցան Միկներ երիտասարդներ, և հանդարտութիւնը տիրեց Հովհաննես Աղայի տան մեջ:

Հարսի առաջին լոգանքը.—ըստ հնավանդ սովորության՝ առաջաստին հաջորդող առաջին հինգշաբթի օր տեղի ունեցավ Սրբիկի լոգանքը: Այս պաշտոնական լոգանքի արարողութիւնն մասնակցելու համար քաղաքի նախնու հրավերներ էր իր շատ մոտիկ արյունակից քանի մը հասակաւոր խաթուններ: Այս հասակաւոր տիկնիկները ձեռքերին բռնած մեկ-մեկ վառած մեղրամոմ, բոլորակցան պղնձե տաշտի մը շուրջ, որուն տակը նախապես դրված էր խաչաձև զուլդ մը շամփուրներ, իսկ տաշտին մեջ պողպատե կայծահան մը: Տաշտին բոլորտիրք մի քանի մեղրամոմ փակցնելէ հետո, հանեցին հարսին հագուստները և նստեցուցին տաշտին մեջ, ապա կենտրոն նախ թաս մը պաղ և ապա թաս մըն ալ տաք ջուր նետեց հարսին մեկի մարմնույն վրա, փնթփնթալով:

—Պախապան խաչ խրիշտակ:

—Զորս կյլոխ Ավետարան,—ըսավ ուրիշ խաթուն մը:

—Ուր կանոն Սաղմոսարան,—մըմընջաց երրորդ խաթունը:

—Մայր աստվածածին օրնական և պախապան,—բարեմաղթեց չորրորդ խաթունը:

Ապա քիչ մը ևս տաք ու պաղ ջուր,

օճառ, մազերու սանրում¹ և լողանքը վեր-
ջացավ:

Սրբիկ հանգստությանը դիմադրեց այս
արարողության, որ բարույթորձ մըն էր իր
շղապին, պաղարուն կամ հնազանդ ըլլալը
ստուգող:

Եթէ հարսը շարժվեր կամ ցնցվեր այս
տար ու պաղ ջուրերու աղբեցութենէն, դա
նշան էր անհամբերության և անհնազան-
դության: Բայց Սրբիկ (ինչպես բոլոր նո-
րահարսեր խրատված իրենց մայրերն)
կորովով և հանդարտութեամբ դիմադրեց
տար ու պաղ ջուրերուն, ավելացնելով իր
վրա կեսորոշ ու ներկա պառավներու համա-
րումը:

Հարձուրդուն.—Անցան քանի մը շա-
բաթներ: Մարանոս հաթուն մտադրեց
Սրբիկին տալ հարսնութեան վերաբերյալ
կարգ մը խրատներ ու պատմելներ: Առտու
մը, երբ Հովհաննէս Աղան և Ատն գործի
գացեր էին, նախաճաշին հետո՝ Սրբիկը իր
մոտ կանչելով ըսավ.

— Ախիկա, խարսիկա, զավակա, մեր
խին անքնի կասի, որ խարսնութեն յոթ տարի
կըլնալի: Իտոր խամար քչե Թամբեխ կա-
նամ որ իրեստ հմ ծածկուկ պախես, ինչ
կյանի կուդի Թող էլնի, կուդի խավերաց կուտ
տված կյանի Թող էլնի:

Մէնակ իրկանտ, պստիկ տղէյներաց և
պստիկ ախշկերաց խես խանրար պիտի
տաս, դհա ուրուշ մեկուս խես լէզու Թրջէ-
լու չես:

Օհաննէս աղէն եկի քչե խառցում կանի՝
ձեռով, կլլիսով պատասխան տուր:

Սի մեր տուն խուր կյան, քյո՞ օղէն կնան,
կար արա, ճու՞թ արա, շում խըրէր էթանն,
նոր տիւս արե:

Տան մէջ ինչ քործ որ էլնի, առանց
տրտնջալու, ֆանդ չի անե, Թե ի՞նչ ի,
շտորմ կատարի:

Իրիկները փօլօր տեղեր իսկելու ես և
առտվներ էլ վիրուցէլու ես:

Առամտները շոտ վեր էլնելու ես, և իրիկ-
ներն էլ անկյան պառկելու ես:

Սեղին վէրէն յավաշ-յավաշ կծամես
պրտններու պստիկ պիտի անես և մստու ու-
կիւ չկոծես⁵⁴: Կիրածու կյան պոկներու ծած-
կըված պախելու ես յաղմօլ:

Կլլին, արաղ շիմես: Եվ այլն, և այլն:
Դէ կնան, զավակա, ու քործերու արա:

— Շնորհակալ եմ, հաթին:

Ամուսնութեան յոթ տարիներուն հարսը
կատարյալ գերի մըն էր, երբ մանավանդ
պահանջկոտ ու անգութ կեսուր մը ունէր,
որ հոգեառ հրեշտակի մը պէս կհսկեր հար-
սին վրա: Կպատահէր երբեմն ալ, որ հար-
սը կարծանանար կեսուրի և էրկան ծեծին
ալ:

Նորահարսին խմելը.—Օր մը Մարանոս
խաթուն, դրացի քանի մը պառավներ հա-
վաքած, անոնց հետ կճաշեր: Մտադրեց
անգամ մը փորձել, Թե իր հարսը գինի պի-
տի խմե՞ր: Երբ ամեն ինչ սեղանի վրա
շարվեցավ, Մարանոս հաթուն հարսը հա-
վիւրեց, որ սեղանին նստի:

Նախ Կուշոյի Մարան գինիի զավաթը
լեցուց և խմեց հարսի ու փեսայի կենացը:
Մեկ-մեկ զավաթ խմեցին նաև մյուս ներ-
կա տիկիները: Կուշոյի Մարան, ըստ Մա-
րանոսի նախօրոք ըրած կարգադրության,
ստիպեց նորահարսը, որ զավաթ մըն ալ
նա խմէ:

— Շնորհակալ եմ, ես չեմ խմե—պա-
տասխանեց հարսը:

— Ա՛ռ, խա՛րս, ա՛ռ, խմի, ամոթ չի:

— Ո՛շ, շնորհակալ եմ:

— Ա՛ռ, խա՛րս, խմի, ջանք, ա՛ռ, ա՛ռ,—
ձայնեցին ներկա տիկիներն ու ստիպեցին:
Հարսը առավ ամենափոքր զավաթը,
բիշ մը գինի լեցուց մեջը, զավաթը շրթուն-
քին դպցուց, որպէս Թե խմեց, և լեցուն
զավաթը նորեն սեղանի վրա դրավ:

Ստիպումներ և խոսվուտուքը կարճ կա-
պելու համար, Վանի մեջ սովորություն էր

⁵⁴ Հարսնեղալ.—Հոս տեղին է հիշել տարիներ
առաջ Վանի մեջ պատահած ուրիշ անգութ դեպք մը:
Կավանդիկ, որ սեղանակից պատավ մը, հարսը փոր-
ձելու համար, ոչխարի կտր և մստպատ ծնկոսկը
լավաշ հացի մեջ փաթկնելով, բրդուն կշիւն և հար-
սին կհրամանէ: Խեղճ հարսը բրդուն խոզանիկ հետո,
երբ կիծանա, որ մեջը ոտկոր կա և անկալով միտերն
կրծելու ու ոսկորն փրցնելու կամ պատառը բերնէն դուրս
հանելն ու սեղանին վրա դնելը անպատշաճ է, ստիպ-
ված կկլլի պատառը: Ուսկորը կոկորդին կկառչի:
Կսկսի հազ մը, ապա իրարանցում մը սեղանակիցնե-
րու մէջ, Կհասնին, հազար դժվարութեամբ դուրս
կհանեն ոսկորը հարսի կոկորդին և մեծ համարում
կստեղծեն հարսին վրա, որ պատշաճության սրտույն
հանձն առած էր ոսկորը կլլել, փոխանակ բերնէն
դուրս հանելու: Դեռ մինչև մեր օրերը ոչխարի կտր
ծնկոսկը ճաշատեղալ՝ կկռչէր և մշտ կհիշվէր խո-
սակցութեանց մէջ ու ճաշի առիւններ:

սեղանի նստող կանանց համար լեցուն դա-
վաթ առնել, շրթունքին դպցնել և լեցուն
դավաթը նորեն սեղանի վրա դնել:

Խնամապատիվ.—Ամուսնութենն ամիս-
ներ հետո, տեղի կունենա խնամապատիվ:
Փեսան և իր ծնողքը հարսի տուն կհրավիր-
վեն ճաշի:

Դառն.—Երբ հարսը առաջին անգամ հոր
տուն կերթար՝ երկու շաբաթ հանգիստ
ընելու:

* * *

Վասպուրականի գյուղերուն մեջ ամուս-
նություններ տեղի կունենային երբեմն շատ
կանուխեն, նույնիսկ օրորոցի մեջ, և կամ
մանուկ հասակին: Այդ տեսակ ամուսնու-
թյուններն երբեմն կունենային աղետալի
հետևանքներ, ինչ որ ցույց կուտա հետևյալ
ժողովրդական երգը, Թիմար գավառի բար-
բառով երգված:

էմալ էնեմ, էմալ էնեմ,
Սարեր ծին և, շվարեր եմ,
Յարս պստիկ ա, մալուքեր եմ,
Հետս չի գա՛ առնեմ տանեմ:
Մյուզլուր աղա, արևտ սիրեմ,
էսօր էթա՛ս խսներ պիրես,
Որ բյ՛ն լաճուն ուրուրուց շինես,
Մեջը տնես օրօր ասես:

էմալ էնեմ, և այլն:
Իրիկ մ'ունեմ հավու ճուտ ա,
Քշենբյ փա՛գյախ թօղ կուտ ուտա:
էրիկ մ'ունիմ եղին-դեղին,
Կը նմանի կյարնան եղին,
Մեռնէն պոնեմ տամ կյրօղին
Թողնեմ էթա՛մ խեստ սիրողին:

էմալ էնեմ, և այլն:

Ուրիշ օրինակ մը:

Ամառ ատեն գյուղացիներ բացօթյա
կրթանային բակերու մեջ: Գիշեր մը նոր
ամուսնացած տղա մը կ'ս իր հոր, պո-
ռալով.

— Ախպէ՛ր Օհո՛ (Հովհաննես), հարսը
բլամակս կբլեբէ:

— Ադա՛ն է, բալաս, անգա՛ն, մի՛ վա-
խէնա:

Երրորդ օրինակ:

Շատախցի երիտասարդ մը Վան կուգա
և կայցելել իր գյուղացի Սեփանին, որ հայ
վաճառականի մը տուն ծառա էր, հագիվ
18 տարեկան:

— Պարի օր, Սեփօ:

— Պարին վէրէտ: Տօ տղա տիւ իկի՛ր ես:

— Խավալահ իկիր եմ:

— Պանի խա՛նքա՛մ պիրի՛ր ես:

— Խավալահ պիրիր եմ:

— Յըմ խէր, յըմ մէր զի կարգե՛ր են:

— Խավալահ կարգիր են:

— Ծժուկ մժուկ էլե՛ր ի:

էտա յըմ կիննա:

* * *

Եվ ևս երբ մը գլորեց ջրհորի մեջ:
Միջնորդ Արմաղան ի գործ դրավ իր հնա-
րամտություններն ու լեզուն: Սուրբ Խամաս
և կարիքի Վարտան գործածեցին վճուկու-
թյան իրենց բոլոր վարպետությունները:
Վարդապետներն ու քահանաները բերին
իրենց օրհնություններն ու աղոթքները:
Վանլի Խորեն իր զվարթարանությունները:
Խամբոյի Լօռթօն իր բաղուկի ուժը: Կնր
Սէթոյի նվագախումբը իր եռանդուն նվագ-
ները: Մխկներն, հարսնետրներն, կանայք
ու պառավները տրամադրեցին իրենց ու-
ղեղն ու թելադրությունները, ըրին իրենց
կարելին և ևս իր ջրհոր ձգած քարը ջրհո-
րեն հանեցին և ևս իր համար քյաֆուր
վարդ մը բերեցին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Արաս օգլու Բնման (շվար) խախօղ, քունեն կանուխ արթնացող։— Բուրք մը երեք ծուլ որդիներ կունենա։ Կմտածն հնարք մը կզնն զնդեցիկ շալվար մը։ Տղաներու հարցին, քն որո՞ւ համար զնած է շալվարը—անկողնին շուտ վեր ելնողին համար,—կպատասխանե Բուրքը։

Անամա վառէկ—ամեն բան զիտցող։

Ալմաստ առու—գինետուն։

Ակաս—մակաս, մէկ տիւ իր պակաս—զուն էին միայն պակաս։

Ակընէլըլմ—պարզէ՛ տրված բարի լուրին կամ ավիտիսին համար։

Աղէկ մանած էլներ, մօրտ պատէն կախած կէլներ—զուն ալ բարի պտուղ մնա։

Աղմ շխտենա—տղիտուլյանդ կարգահատմա։

Աղբէն վէրէտ կնի—տարուսը քեզի (աղբորդուն բանն)։

Անձեզն իկե—բարի լուր մը պիտի լսենք։ Կաշաղակի կելուցը տան մը բուլորտիք՝ նշան էր բարի լուրի մը, շատ անգամ ճիշտ համարված։

Անձղան աղէկութեն կնա՝ Բաղդադ խաղցու—անոր որքան բարի ըլլալը ուրիշներուն հարցուր։

Անձրե օր խաղերաց ճիւր տվող շատ կէլնի—եթե ամեն բան պատրաստ ըլլա, ամեն մարդ ալ կրնա ընել։

Անձրե օր ճուտթան փոխ լին իտա—ամեն բան իր ժամանակին ըլլալու է։

Անուշ լեզուն օց ուր պննից տիւս կխանի—քաղցր լեզվով և համոզելով, կրնաս հաղթել։

Անութի խաղ էրադի մէջ կորեկի առտ կտիսնա—անտթին կերպակ, քն հացերու մէջ կպտնվի։

Աշխար աղօվ, աղն էլ խամօվ—ամեն բան շափաղոր։

Աշ-ունը պիտի վկա, քիթ-մառթ մկան էլ կա—տեսնել պետք է՝ վկա ըլլալու համար։

Աշ ամենցուն քի քեզ պըլըստըրան—ամեն ոք քո նախաձեռնութեան կսպասու։

Աշկեր կշտան—բարի կամ լար լուր պիտի ստանաս։

Աշ աշկա կխաղա—բարի լուր մը պիտի լսեմ։

Աշ ախ կքլորվի—զրամ պիտի ստանամ։

Ատինքլ տակ—հասած մըզեր ծառէն վար առինք։

Առ, կլլօխա ուտի—այս ոճը կզործածվի, երբ մեկը մեկու մը բան մը կուտա կամ նվեր մը կընն ու վերջէն ետ կպահանջի։

Առնանկու ծակից են տիւ քյաշե—նիհար մարդ կամ անասուն։

Անուն Բոն—բրթացք է, ուրացել է։

Առշարլօ—մտացածին կենդանի մը, որով մայրերը զավակներուն կվախցնեն, հանգիստ մնալու համար։

Առտ փախալ—խաղ մը, որ ցորեն հնձողներ կխաղան արտի հոնձը վերջացնելէ հետո, միասնաբար զոռալով՝ առտն ինդլով, տէր կայնալ։

Աստված սար տիսն, շոր ծին տրե—զու արժանի ես այդ պատժին։

